ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ԾՐԱԳՐԵՐ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(V—IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

91
Ծ-98

ԼՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1940

5 OCT 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

91
Ե-98

ԾՐԱԳՐԵՐ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(V—IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1940

16.05.2013
20177/III

511/46

Պատ. խմբագիր՝ Ավ. Ճուղուրյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Կարապետյան
Կոնտ. սրբագրիչ՝ Մ. Պարոնիկյան
Հանձնված է արտադրության 1940 թ. օգոստոսի 20-ին
Ստորագրված է տպագրելու 1940 թ. սեպտեմբերի 10-ին
ՎՖ 708, հրատ. № 44, պատվեր № 199, տիրաժ 2500

Լուսհրատի տպարան, Երևան, Տերյան № 127

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ *)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

1940—41 ուսումնական տարվա համար վերահրատարակվող սույն ծրագրերի հիմքում դրված են 1937 թվականին հրատարակված կայուն ծրագրերը, վորոնց մեջ, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. մայիսի 16-ի վորոշման համաձայն, ուսումնական նյութը բաշխվում է հետևյալ կերպ.

5-րդ դասարանում ուսումնասիրվում են ֆիզիկական աշխարհագրության հիմունքները։

Միջնակարգ դպրոցի աշխարհագրության ընդհանուր դասընթացի այս մասը դնում է աշխարհագրական այն գիտելիքների, պատկերացումների և ունակությունների հիմքը, վորոնք անհրաժեշտ են հետագա դասընթացը յուրացնելու համար։

Ուսուցիչը պետք է հասնի այն բանին, վոր աշակերտները հաստատուն կերպով իմանան քարտեզը, ծրագրով նախատեսված աշխարհագրական անունները, ուսումնական և տեղագրական քարտեզի պայմանական նշանները, կարողանան այդ քարտեզները արագ և ճիշտ կարդալ, կարողանան օգտվել պատի և սեղանի քարտեզների մասշտաբներով։

Բնության յերևույթների պատկերներ նկարագրելիս ուսուցիչը պետք է բացահայտի բնության մեջ գոյություն ունեցող պրոցեսները, պարզաբանի յերևույթների պատճառներն ու փոխադարձ կապը և դրանք կապակցի քարտեզի հետ։

Այս ուղղությամբ ուսուցչին մեծ օգնություն ցույց կտան բնության մեջ կատարած էքսկուրսիաները, դասընթացի տարբեր բաժինների կապակցությամբ գավառագիտական նյութի օգտագործումը։

Հաշվի առնելով 5-րդ դասարանի աշակերտների պատրաստականությունն ու տարիքը, անհրաժեշտ է միշտ սկսել բնության

---

*) Ծրագրի կազմելուն մասնակցել են պրոֆ. Ն. Ն. Բարանսկին, պրոֆ. Ա. Ս. Բարկովը, պրոֆ. Ի. Ա. Վիտվերը, Գ. Դ. Տերեխովը, Զ. Գ. Ֆրեյկինը, Ե. Ֆ. Յուչեֆովիչը։

յերևույթների նկարագրությունից և ապա միայն անցնել նրանց մեկնաբանմանը։ Ուսուցիչը ֆիզիկական աշխարհագրության ուսումնասիրությունը չպետք է վերածի այն բանին, վոր աշակերտները չոր ու ցամաք սահմանումներ հիշեն։ Դրա փոխարեն աշակերտները պետք է կարողանան բնական յերևույթների պատկերների նկարագրությունը տալ, դրա հետ միասին ցույց տալով, վոր նրանք ըմբռնում են այդ յերևույթները, գիտեն քարտեզը և կարող են իրենց պատմածին ուղեկցել քարտեզի վրա ցույց տալը կամ գրատախտակի վրա աշխարհագրական գծագիր տալը։

5-րդ դասարանի աշակերտությանը քարտեզով աշխատելու մեջ նախապատրաստելու համար մեծ նշանակություն ունի աչքաչափային հանույթ անցկացնելը։ Աչքաչափային հանույթը խոշոր նշանակություն ունի վորպես քարտեզին անցնելուն նախորդող մի էտապ։ Իր վայրի տեսքից և նրա պլանից հեշտությամբ կարելի է անցնել տեղագրական, իսկ հետո ել՝ մյուս քարտեզներին

Քաղաքական դաստիարակությունն իր արտացոլումն է գտնում 5-րդ դասարանի ամբողջ ծրագրում։ Օրինակ «Յերկրի ձևն ու շարժումը» թեմայում յերկրի ծագման և շարժման արդի գիտական ըմբռնումը հակադրվում է կրոնականին (աստվածաշնչին)։ Վորպես գիտական աշխարհայացքի պայքարի օրինակ՝ պատմական փաստեր են բերվում գիտական ճշմարտության համար մարտնչողների կյանքից, ինչպես օրինակ՝ Ջորդանո Բրունո, Գալիլեո Գալիլեյ և այլն։

«Յերկրագնդի կազմությունը» թեմայի «Հրաբխականություն և յերկրաշարժներ» բաժնում գիտական բացատրություններ են տրվում այդ ուժերի գործունեության մասին։ Միաժամանակ մերկացվում են հոգևորականների կողմից ժողովրդական մասսաներին սարսափի մեջ դնելու համար ստորերկրյա ուժերի գործունեության փաստերի օգտագործումը կամ նման յերևույթները բանվորների հետ դատաստան տեսնելու համար օգտագործելը (ինչպես, օրինակ, Ճապոնիայում)։ Քաղաքական-դաստիարակչական աշխատանքների համար վոչ պակաս հնարավորություններ են տալիս ուսուցչին «Մթնոլորտ», «Արտաքին ուժեր» և մյուս թեմաները։

6-րդ դասարանում ծրագիրն ընդգրկում է աշխարհամասերի և կապիտալիստական աշխարհի կարևորագույն պետությունների ֆիզիկո-աշխարհագրական տեսությունը, դրա հետ

միասին նրանց քաղաքական կարգերի և տնտեսության ընդհանուր բնութագրությունը։ Աշակերտները վոչ միայն պետք է լավ իմանան կապիտալիստական յերկրների ֆիզիկական և քաղաքական քարտեզը, այլև ճիշտ պատկերացնեն աշխատավորների վիճակը կապիտալիստական շահագործման պայմաններում, նրանց ճնշված գոյությունը նույնիսկ ամենածաղկած և հարուստ բնության պայմաններում, ժողովուրդների քաղաքական անհավասարությունը և ճնշումը կապիտալիստական յերկրներում, իմպերիալիստական պետությունների հափշտակողական քաղաքականությունը և նրանց ագրեսիվ պլանները ԽՍՀՄ-ի նկատմամբ, II իմպերիալիստական պատերազմը և այն ձեռնարկողների նպատակները,—այս բոլորը պետք է աշակերտներին նկարագրել կոնկրետ օրինակներով, օգտագործելով լրագրային նյութեր, գեղարվեստական նկարագրություններ, կինոֆիլմեր, դիապոզիտիվներ և այլն։

6-րդ դասարանի աշխարհագրության դասընթացը հագեցնելով քաղաքական-դաստիարակչական նյութով, ուսուցիչը սակայն չպետք է մոռանա, վոր դասընթացի ընդհանուր բովանդակությունը ֆիզիկո-աշխարհագրական է։ Ֆիզիկական յերկրագիտության այս դասարանի դասընթացի ուսումնասիրությունը հիմնվում է 5-րդ դասարանում ձեռք բերած ֆիզիկական աշխարհագրության գիտելիքների վրա։

Այսպիսով 6-րդ դասարանում պարապմունքների ընթացքում կրկնվում են 5-րդ դասարանի ծրագրի հիմնական սկզբունքները։

Առանձին յերկրների ուսումնասիրությանն անցնելիս անհրաժեշտ է վերադառնալ համապատասխան աշխարհամասի ընդհանուր տեսության նյութին, տալով ընդհանուր տեղեկություններ այդ աշխարհամասի տերիտորիայի մասին և լրացնելով այն ուսումնասիրվող յերկրի առանձնահատուկ գծերի նկարագրությամբ։ Առաջուց անցած ուսումնական նյութի այսպիսի մի կրկնություն ավելի հեշտ ձևով հաջողվում է համապատասխան աշխարհամասի ընդհանուր տեսության բաժնում տրված քարտեզների (կլիմայական, հողային և այլն) վերանայման միջոցով։

7-րդ դասարանի ծրագիրն ընդգրկում է ԽՍՀՄ-ի ընդհանուր և մարզային ֆիզիկո-աշխարհագրական տեսությունը՝ տնտեսության համառոտ բնութագրությամբ։ Ուսուցիչը հիմնական շեշտը պետք է դնի Խորհրդային Միության

բնական պայմանների և վոչ թե տնտեսության ուսումնասիրության վրա, վորովհետև վերջինս տրվում է 8-րդ դասարանի ծրագրով։

7-րդ դասարանի ծրագիրը աշակերտներին հնարավորություն է տալիս ճանաչել իրենց հայրենիքը, տեսնել նրա հսկայաչափ և բազմազան հարստությունները, նրա առանձին անկյունների գեղեցկությունը, իմանալ մեր յերկրի՝ նախկինում չբնակված շրջանների յուրացման մասին և բնությունը սոցիալիստական շինարարության նպատակներին յենթարկելու մասին։

Աշակերտների առաջ բացելով Խորհրդային Միության աշխարհագրությունը, ուսուցիչը պետք է նրանց մեջ զարթեցնի հպարտության և սիրո զգացմունք դեպի սոցիալիստական հայրենիքը։

Աշակերտները պետք է ամուր կերպով յուրացնեն ԽՍՀՄ-ի քաղաքական-վարչական քարտեզը, ինչպես և ֆիզիկական քարտեզի վրա կարողանան ցույց տալ ԽՍՀՄ շրջանների խմբերը։

ԽՍՀՄ-ի շրջանային մասի ուսումնասիրության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել տվյալ շրջանի բնական պայմանների և տնտեսության վրա, ինչպես և ազգային շրջաններում ազգային և կուլտուրական շինարարության գծով ձեռք բերած հոյակապ հաջողությունների վրա։

Դասընթացի անցման ժամանակ պետք է ոգտագործել ձեռքի տակ յեղած վողջ ոժանդակ պարագաները (նկարներ, դիապոզիտիվներ, կինոֆիլմեր, դեղարվեստական նկարագրություններ և այլն), վորպեսզի ԽՍՀՄ-ի աշխարհագրության ուսումնասիրությունը դառնա պատկերավոր և հետաքրքիր։

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր 7-րդ դասարանը ավարտող վոչ բոլոր աշակերտներն են անցնում 8-րդ դասարան, ծրագիրն ընդգրկում է նաև վորոշ բաժին ԽՍՀՄ-ի տնտեսության մասին, սակայն վոչ այնպիսի մանրամասնությամբ, վորպիսին տրված է 8-րդ դասարանում։

8-րդ դասարանի ծրագիրն ընդգրկում է ԽՍՀՄ-ի տնտեսական աշխարհագրության տեսությունն ըստ ճյուղերի և հանրապետությունների։

Այս դասընթացի խնդիրն է վոչ միայն ցույց տալ ԽՍՀՄ-ի տնտեսության տեղադրությունը, այլև նրա տնտեսական հզորությունը, սոցիալիստական շինարարության հաջողությունները, Խորհրդային Միության տասնվեց հանրապետությունների քաղաքական և տնտեսական կուռ միաձուլությունը։

Դրա հետ միասին ուսուցիչը միշտ պետք է համեմատության մեջ դնի ԽՍՀՄ-ի տնտեսության զարգացումը ցարական Ռուսաստանի և կապիտալիստական յերկրների տնտեսությունների [illegible]ության հետ, վորպեսզի ոգնի աշակերտներին խորը կերպով ըմբռնելու տնտեսության սոցիալիստական սիստեմի, արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրության առավելությունները, միութենական հանրապետությունների մեջ գոյություն ունեցող տնտեսական փոխադարձ սերտ կապերը, առաջներում հետամնաց ծայրամասային շրջաններին ԽՍՀՄ-ի առաջավոր շրջանների կողմից ոգնություն ցույց տալը, շրջանների, հատկապես ազգային շրջանների տնտեսության միակողմանի զարգացման լիկվիդացիան։

Դրա հետ միասին աշակերտները պետք է լավ կերպով յուրացնեն խորհրդային հանրապետությունների տնտեսա-աշխարհագրական առանձնահատկությունները և ազգային շրջանների կենցաղում ու կուլտուրայի մեջ տեղի ունեցած հիմնական փոփոխությունները։ 8-րդ դասարանի վողջ դասընթացում առաջնակարգ տեղ պետք է տրվի III հնգամյակի հիմնական խնդիրներին։

ԽՍՀՄ-ի ֆիզիկական և քաղաքական-վարչական քարտեզների համեմատումը 8-րդ դասարանի աշխարհագրության դասընթացի ուսումնասիրման անհրաժեշտ պայմանը պետք է համարվի։

9-րդ դասարանի ծրագիրն ընդգրկում է կապիտալիստական յերկրների տնտեսական աշխարհագրության դասընթացը։ Ուսուցիչը պետք է հիմնական շեշտը դնի աշակերտների կողմից կապիտալիստական տարբեր յերկրների ֆիզիկական և քաղաքական քարտեզը, տնտեսական շրջաններն ուսումնասիրելու և հետամնաց յերկրների ներքին տարբերությունները (բնական և տնտեսական) ըմբռնելու վրա։ Բացի դրանից, աշակերտները պետք է իմանան կապիտալիստական յերկրների տնտեսության թույլ կողմերը և դրանց պատճառները, կապիտալիստական յերկրների միջև գոյություն ունեցող հակասությունները, նոր յերկրներ ձեռք բերելու համար նրանց մղած պայքարը, կապիտալիստական յերկրների և գաղութների աշխատավորների քաղաքական անհավասարությունը և ճնշումը, իմպերիալիստական պետությունների ագրեսիվ քաղաքականությունը և ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու նրանց պլանները։

Այս բոլոր հարցերը նպատակ ունեն բարձրացնելու դասի

քաղաքական-դաստիարակչական ուղղվածությունը, բարձրացնելու և դնելու այն ավելի բարձր գաղափարական մակարդակի վրա, առանց որի աշխարհագրության ճիշտ և հաջող յուրացում չի կարող լինել։ Դրա համար էլ, խոսելով որևէ կապիտալիստական յերկրի արդյունաբերության և գյուղատնտեսության մասնագիտացման ու տեղադրման մասին, ուսուցիչը միաժամանակ պետք է տա տնտեսության այդ ճյուղի դրության գնահատականը, ընդգծի յերկրի արտադրողական ուժերի կապիտալիստական տեղադրությունը, ամեն դեպքում հակադրելով դրան աշակերտներին ծանոթ ԽՍՀՄ-ի տնտեսության աճի օրինակները, նրա պլանային, ռացիոնալ տեղադրությունը, ինչպես և Խորհրդային Միության հանրապետությունների միջև գոյություն ունեցող իրավահավասարությունն ու փոխօժանդակությունը։

Առանց քարտեզն իմանալու և նրանով ազատ կերպով օգտվելու ունակության, առանց տարածական խոր զարգացած պատկերացումների—չկա աշխարհագրական գիտություն:

Քարտեզը պետք է դառնա գիտելիքների աղբյուր։ Դրա համար պետք է սովորեցնել աշակերտներին քարտեզն անալիզի յենթարկել։ Քարտեզը կարելի յե լայն կերպով օգտագործել բանավոր խոսքի զարգացման, շաղկապված պատմելու համար։ Աշակերտներին պետք է սովորեցնել լավ կերպով տիրապետել քարտեզների բոլոր տեսակներին, օգտագործելով աշխատանքի ժամանակ թե ըստ բովանդակության, թե ըստ մասշտաբի ու պրոյեկցիաների տարբեր քարտեզներ։

Քարտեզի յուրացման համար հսկայական նշանակություն ունի գլոբուսի հետ, կոնտուրային քարտեզի հետ կատարած լրացուցիչ աշխատանքը, կարտոգրամների, դասագրքի կարտոգծագրերի օգտագործումը և ամենօրյա աշխատանքն աշակերտական քարտեզների—ատլասների վրա։

Կոնտուրային (համր) քարտեզը պետք է օգտագործել. ա) դասի ժամանակ գիտելիքների խորացման համար, բ) տնային աշխատանքներ կատարելու ժամանակ և գ) կոնտրոլ աշխատանքները կատարելու ժամանակ, որպես հաշվառման ձևերից մեկը։ Կոնտուրային քարտեզով աշխատելու գլխավոր արժանիքներից մեկը բոլոր աշակերտներին աշխատանքի մեջ քաշելն է և նրանց կողմից քարտեզի նյութը մանրամասն յուրացնելը։ Աշակերտներին անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչը պետք է գունավորել, ինչը նկարել—գծագրել, ինչ նշաններ և մակագրություններ անել և այդ բոլորն ինչպես անել։

Քարտեզի վրա աշխատելու ժամանակ պետք է աշակերտներից պահանջել, որ նրանք աշխարհագրական վայրը ճիշտ ցույց տան և աշխարհագրական անունը ճիշտ արտասանեն։

Գիտելիքների գնահատման ժամանակ անպայման պետք է հաշվի առնել աշակերտի կողմից քարտեզ իմանալը:

Աշխարհագրության դասավանդման զննականությունն ու հետաքրքրականությունը մեկն է այն հիմնական պահանջներից, որ ընդգծված է ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ Կ(բ) Կ Կենտկոմի 1934 թ. մայիսի 16-ի որոշման մեջ։

Դիտողականությունն ու հետաքրքրականությունը, քարտեզը լավ իմանալը պետք է ըստ ամենայնի զարգացնել։ Լեռների, ծովերի, արևադարձային անտառների, քաղաքների պատկերները նկարների և էկրանի վրա աշակերտների կողմից դիտվում են մեծ հետաքրքրությամբ։ Այս պետք է հաշվի առնեն մանավանդ այն դպրոցները, որտեղ դասավանդման մեջ զննականությունը դեռ իր պատշաճ տեղը չի գրավել։ Նրանք պետք է լայն կերպով օգտագործեն այս գծով դպրոցի ունեցած բոլոր հնարավորությունները։

Տպագրված նկարներից և դիապոզիտիվներից բացի, կարելի յե օգտագործել ամսագրերի և թերթերի նկարները, շրջապատող բնությունից հավաքել հանքերի կոլեկցիաներ, հերբարիաներ։

Ցույց տալով աշակերտներին որևէ բնական կամ տնտեսական լանդշաֆտ, ուսուցիչը պետք է նաև բացահայտի այն գործոնները, որոնք ստեղծել են այդ լանդշաֆտը։

Դասի զննականությունը և շարադրման հետաքրքրականությունը սերտ կերպով կապված են միմյանց հետ։ Զննական-դիտողական պարագաների լայն օգտագործումը նպաստում է և հետաքրքրականության աճմանը։ Բայց հետաքրքրականության պետք է հասնել նաև հենց դասի բովանդակությամբ։ Գեղարվեստական յերկից հատվածներ կարդալը, ուսուցչի պատմելը, աշակերտներին զրույցի մեջ ներգրավելը և այլն, այս բոլորը բարձրացնում է ուշադրությունը, ակտիվությունը, առաջադիմությունը։ Ընդհակառակը, դասագրքի նյութը շաբլոն կերպով վերարտադրելը, դասերի միօրինակ մեթոդական պրիոմները պարապմունքը դարձնում են դժգույն և քիչ արդյունավետ։

Դասերի ժամանակ պետք է անցնել ծրագրի վողջ հիմնական նյութը։ Տնային աշխատանքին են թողնվում այդ նյութի կրկնությունը, յերկրորդական տվյալների ինքնուրույն ուսումնասիրությունը և զանազան պրակտիկ հանձնարարությունները։

Տանը հանձնարարվելիք աշխատանքը պետք է նախօրոք լավ մտածված լինի թե ըստ իր բովանդակության, թե վարժողական աշխատանքի բնույթի և թե աշակերտի կողմից գործադրած ժամանակի:

Տնային հանձնարարությունների ժամանակ պետք է օգտագործվի դասագիրքը և ճիշտ կերպով ցույց տրվի.

ա) ի՞նչ թեմա պետք է ուսումնասիրվի և ի՞նչ հարցերի շուրջը աշակերտը պետք է պատասխաններ պատրաստի (բանավոր).

բ) դասագրքի տեքստի վո՞ր մասը կարելի յե բաց թողնել.

գ) աշխարհագրական ի՞նչ անուններ պետք է յուրացնել.

դ) տեքստի ուսումնասիրության ժամանակ վո՞ր իլյուստրատիվ նյութն օգտագործել.

ե) ի՞նչ պրակտիկ աշխատանք պետք է կատարել կոնտուրային քարտեզի վրա, տետրակում և այլն:

Ծրագրում փոփոխություններ են մտցրած, վորոնք 5-րդ և 6-րդ դասարանների նկատմամբ սահմանափակվում են միայն փոքրիկ կրճատումներով: 7-րդ և 8-րդ դասարանների ծրագրերում մտցված են համեմատաբար ավելի խոշոր փոփոխություններ կապված ԽՍՀՄ-ի կազմում նոր միութենական հանրապետություններ մտնելու, նրա քաղաքական-վարչական բաժանման մեջ յեղած փոփոխությունների և ՌՍՖՍՀ-ի մարզերի նոր խմբավորման անհրաժեշտության հետ:

8-րդ դասարանում տրվում է ԽՍՀՄ-ն ուսումնասիրելու նոր կարգ՝ ըստ միութենական հանրապետությունների և վոչ թե ըստ աշխարհագրական շրջանների:

9-րդ դասարանի ծրագրում մտցված են փոփոխություններ մի շարք յերկրների միջազգային դրության բնութագրությունների մեջ:

Սրանց հետ միասին աշխարհագրության ծրագրերում ընդգրկված են կոմունիստական դաստիարակության մոմենտները: Ուսուցչի խնդիրն է՝ վոչ միայն դասի ժամանակ օգտագործել ծրագրի այս ցուցումները, այլև ուսումնասիրվող նյութը սերտ շաղկապել արդիականության հետ:

5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարանների ծրագրերում աշխարհագրական անունները տրված են ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի ՊՆՔԳՎ

նոր տրանսկրիպցիայով: Դա բխել է նրանից, վոր նոր լույս ընծայվող աշխարհագրական քարտեզներն ունեն նոր տրանսկրիպցիա, վորի հետ և համաձայնեցված են ծրագրերը:

Ծրագրերի մեջ այս փոփոխությունները մտցնելիս հաշվի յեն առած և այն փոփոխությունները, վորոնց յենթարկված են այս տարի վերահրատարակվող դասագրքերը:

ԾՐԱԳԻՐ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ֆիզիկական աշխարհագրություն

(102 ժամ, վորից 12 ժամը կրկնության համար)

1.	Պլան և քարտեզ	10 ժամ
2.	Յերկրի մակերևույթի ձևերը	12 »
3.	Ջուրը գետնի վրա	14 »
4.	Յերկրի ձևն ու շարժումը	8 »
5.	Աստիճանացանց	7 »
6.	Յերկրագնդի կազմությունը	8 »
7.	Մթնոլորտ	12 »
8.	Ցամաքի մակերևույթի փոփոխումն արտաքին ուժերի ազդեցության տակ	7 »
9.	Լանդշաֆտային գոտիները և մարդը	12 »
10.	Ամբողջ դասընթացի կրկնություն	12 »

1. ՊԼԱՆ ՅԵՎ ՔԱՐՏԵԶ (10 ժամ)

Ի՞նչ է ուսումնասիրում ֆիզիկական աշխարհագրությունը։ Ինչպես առաջացավ աշխարհագրությունը (ճանապարհորդություններ, գիտումներ, հետազոտություններ)։ Կողմնորոշում և կողմնացույց։ Գծային և թվային մասշտաբը պլանի վրա։

Աչքաչափական հանույթ (դիտաքանոնով դիտելը, ճանապարհի վրա կամ ճանապարհից դուրս ընկած առարկաները պլանի վրա անցկացնելը)։ Տեղագրական քարտեզ և այն կարդալը։ Տեղագրական քարտեզի նշանակությունը յերկրի պաշտպանության գործում։

Աշխարհամասերն ու ովկիանոսները քարտեզի վրա։

2. ՅԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԵՐԸ (12 ժամ)

Հարթություններ (5 ժամ)

Մոտակա հարթության ուսումնասիրումը։ Հարթության կազմության ուսումնասիրումը բնական և արհեստական բացվածքներում (ձորերում, առուներում, փոսերում)։ Հարթության բարձրությունը ծովի մակերևույթից։ Դաշտավայրեր և բարձրավանդակներ։ Դաշտավայրերի և բարձրավանդակների նշանակումը քարտեզի վրա (գունավորմամբ)։ Բոլոր աշխարհամասերի գլխավոր դաշտավայրերը և բարձրավանդակները քարտեզի վրա։

Դաշտավայրեր

Եվրոպայում— Արևելա-Եվրոպական, Գերմանական, Ֆրանսիական։

Ասիայում—Արևմտա-Սիբիրական, Թուրանի, Հնդկական։ Անդրկովկասում՝ Ռիոնի և Կուրի։

Հյուսիսային Ամերիկայում—Միսսիսիպիի։

Հարավային Ամերիկայում—Ամազոնի։

Բարձրավանդակներ

Ասիայում—Միջին-Սիբիրական, Գոբի (անապատ), Տիբեթի, Դեկանի (Հնդկական), Իրանական, Արաբական։

Անդրկովկասում՝ Հայկական։

Հար. Ամերիկայում—Բրազիլիական։

Աֆրիկայում—Սահարա (անապատ)։

Բլուրներ յեվ լեռներ (7 ժամ)

Մոտակա բլուրների ուսումնասիրումը։ Բարձրության չափումը։ Լեռների հարաբերական և բացարձակ բարձրությունները։ Գաղափար լեռների մասին։ Ինչպես են պատկերվում լեռները քարտեզների վրա։ Լեռները կազմող տեսակները։ Բոլոր աշխարհամասերի գլխավոր լեռները։

Եվրոպայում—Ուրալ, Սկանդինավյան, Ալպյան, Կարպատյան, Բալկանյան, Ապենինյան և Պիրենեյան։

Ասիայում—Կովկասյան (Էլբրուս և Կազբեկ գագաթներով), Պամիր (Ստալինի Պիկ գագաթով), Հիմալայան (Էվերեստ գագաթով), Տյան-Շան, Կուեն-Լուն, Հինդուկուշ, Ալթայ, Սայանյան, Սիխոտե-Ալին։

Անդրկովկասում՝ Փոքր Կովկաս և նրա ճյուղավորումները։

Աֆրիկայում—Ատլասի և Հաբեշական։

Հյուս. Ամերիկայում—Կորդիլյերներ, Ապալաչներ (Ալեգաններ)։

Հարավ. Ամերիկայում—Անդյան (հարավային Կորդիլյերներ)։

Ավստրալիայում—Ավստրալիական Ալպեր։

3. ՋՈՒՐԸ ԳԵՏՆԻ ՎՐԱ (14 ժամ)

Ստորերկրյա ջրեր (2 ժամ)

Ջրաթափանց և ջրակայուն շերտեր։ Ջրատար շերտ։ Սովորական և արտեզյան ջրհորներ։ Աղբյուրներ։ Հանքային աղբյուրներ։ Սողանքներ։ Կարստային երևույթներ։

Հոսող ջրեր (5 ժամ)

Գետակներ և գետեր։ Գետի ավազանը։ Գետի սնումը տարվա տարբեր ժամանակներում։ Գլխավոր գետը և վտակները։ Գետային սիստեմ։ Սահանքներ և ջրվեժներ։ Գետային հովիտների առաջացումը։ Գալարներ, պտույտներ, դարավանդներ, դելտաներ։ Գետաբերանների մոտ դաշտավայրերի առաջանալը։ Գետերը հաղորդակցության ճանապարհներ։ Գետերն էլեկտրոէներգիայի աղբյուր։ Բոլոր աշխարհամասերի գլխավոր գետերը քարտեզի վրա։

Եվրոպայում—Վոլգա (Օկա և Կամա վտակներով), Դնեպր, Դոն, Ուրալ, Պեչորա, Հյուս. Դվինա, Նևա, Արևմտ. Դվինա, Վիսլա, Հռենոս, Սեն, Թեմզա, Պո, Դանուբ, Տախո։

Ասիայում—Օբ (Իրտիշ վտակով), Ենիսեյ (Անգարա վտակով), Լենա, Ամուր, Սիր-Դարյա, Ամու-Դարյա, Հուան-Հե (Դեղին), Յանցզի (Կապույտ), Ինդոս, Գանգես։

Անդրկովկասում՝ Կուր և Արաքս իրենց գլխավոր վտակներով։

Աֆրիկայում—Նեղոս. Կոնգո, Նիգեր։

Հյուսիս. Ամերիկայում— Միսսիսիպի (Միսսուրի վտակով)։

Հարավ. Ամերիկայում—Ամազոն, Պարանա։

Ավստրալիայում—Մուրրեյ (Մարրի)—Դարլինգ վտակով։

Լճեր (2 ժամ)

Լճերի առաջացումը։ Լճերի տարբեր տեսակները։ Հոսանք ունեցող և փակ լճեր։ Աղի լճեր։ Լճերի փոփոխականությունը։ Ճահիճներ և տորֆահողեր։ Բոլոր աշխարհամասերի լճերը քարտեզի վրա։

Եվրոպայում—Կասպից ծով (լիճ), Լադոգա և Օնեգա։

Ասիայում—Արալյան ծով (լիճ), Բայկալ, Բալխաշ։

Անդրկովկասում—Սևան։

Աֆրիկայում—Վիկտորիա, Տանգանյիկա, Չադ։

Հյուս. Ամերիկայում— Վերին, Միչիգան, Հուրոն, Էրի, Օնտարիո։

Ովկիանոսներ յեվ ծովեր (5 ժամ)

Ծովի հատակի ռելյեֆը։ Մայր ցամաքները շրջապատող ծանծաղ տարածությունները։ Ամենամեծ խորությունները։ Ծովերի և ովկիանոսների հատակի նստվածքները։ Ջրի աղիությունը։ Ալիքներ, մակընթացություններ և տեղատվություններ։ Ծովային հոսանքներ։ Ծովի կյանքը։ Ծովային արդյունագործություններ։ Ովկիանոսներն ու ծովերը որպես հաղորդակցության ճանապարհներ։

Ներքին և ծայրամասային ծովեր։ Ծովափնյա գծի ձևերը. նեղուցներ, ծոցեր, կղզիներ, թերակղզիներ։

Ծովերի, ծոցերի, նեղուցների, կղզիների և թերակղզիների ուսումնասիրումը քարտեզով։

Ովկիանոսներ—Ատլանտյան, Խաղաղ կամ Մեծ, Հնդկական, Հյուսիսային Սառուցյալ։

Ծովեր, ծոցեր, նեղուցներ, ջրանցքներ

Եվրոպայում—ծովերը. Բարենցի. Սպիտակ, Բալթիկ, Հյուսիսային, Միջերկրական, Սև և Ազովի։ Նեղուցները. Բոսֆոր, Դարդանել, Ջիբրալտար։ Ծոցերը. Ֆիննական, Ռիգայի, Բիսկայան։

Ասիայում—ծովերը. Կարայի, Լապտևների, Արևելա-Սիբիրական, Բերինգյան, Օխոտի, Ճապոնական, Կարմիր, Դեղին, Արևելա-Չինական, Հարավ-Չինական։ Նեղույց. Բերինգյան։ Ծոց՝ Բենգալական։

Աֆրիկայում—Գվինեյի ծոց, Սուեզի ջրանցք։

Ամերիկայում—Հուդզոնի ծոց, Մեքսիկական ծոց, Կարաիբյան ծով, Պանամայի ջրանցք, Մագելլանի նեղուց։

Թերակղզիներ

Եվրոպայում—Կոլա, Սկանդինավյան, Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան, Ղրիմի։

Ասիայում— Թայմիր, Չուկոտյան, Կամչատկա, Կորեա, Հնդկաչին, Հնդկաստան, Արաբիա, Փոքր Ասիա։

Հյուս. Ամերիկայում—Ալյասկա, Կալիֆորնիա, Լաբրադոր, Ֆլորիդա։

Կղզիներ

Եվրոպայում—Նոր Երկիր, Ֆրանց-Իոսիֆի Երկիր, Շպիցբերգեն, Իսլանդիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա, Սիցիլիա, Սարդինիա, Կորսիկա։

Ասիայում—Հյուսիսային Երկիր, Վրանգելի կղզի, Սախալին, Ճապոնական, Ֆիլիպինյան, Մեծ Զոնդյան (Բորնեո, Սումատրա, Յավա, Ցելեբես), Ցեյլոն, Կիպրոս։

Աֆրիկայում—Մադագասկար։

Ամերիկայում—Գրենլանդիա, Բևեռային Արշիպելագ (Հյուսիս-Ամերիկյան), Նյուֆաունդլենդ, Մեծ Անտիլյան (Կուբա, Հայիթի), Հրո Երկիր։

Ավստրալիա և Օվկիանիա—Նոր Գվինեա, Տասմանիա, Նոր Զելանդիա, Հավայան։

4. ԵՐԿՐԻ ՁԵՎՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄԸ (8 ժամ)

Պատկերացում հնում երկրի ձևի մասին։ Ապացույցներ երկրի գնդաձևության մասին (հորիզոն, լուսնի խավարում, շուրջերկրյա ճանապարհորդություններ և այլն)։ Երկրագնդի մեծությունը։ Գաղափար երկրի բևեռային սեղմվածության մասին։

Երկրի օրական և տարեկան շարժումը. արեգակի և աստղերի տեսանելի շարժումն օրվա ընթացքում։ Երկրի պտույտն իր առանցքի շուրջը։ Երեկ և գիշեր։ Արեգակ, լուսին. նրանց վիճակը, մեծությունը և հեռավորությունը երկրից։

Երկրի շարժումն արեգակի շուրջը. երկրի ուղեծիրը։ Երկրի առանցքի թեքությունը ուղեծրի հարթության նկատմամբ։ Տարվա եղանակները։ Արևադարձներ և բևեռային շրջանագծեր։ Տարեհաշվում։

Կրոնի պայքարը երկրի դիրքի և շարժման մասին գիտական պատկերացումների դեմ։ Կոպերնիկ, Ջորդանո Բրունո և Գալիլեյ։

5. ԱՍՏԻՃԱՆԱՑԱՆՑ (7 ժամ)

Միջօրեականներ և զուգահեռականներ։ Երկարություն և լայնություն։ Աստիճանացանցը գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա։

Ժամանակի հաշվումը օրվա ընթացքում։ Տեղային ժամանակ։ Երկրի վրա երկարությունը և լայնությունը վորոշելու ձևերը։ Ժամային գոտիներ։

6. ԵՐԿՐԱԳՆԴԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ (8 ժամ)

Երկրագնդի կազմության ընդհանուր պատկերը (3 ժամ)

Ցամաք և ծով։ Երկրային կեղև (լիտոսֆերա), երկրի ջրային կեղևը (հիդրոսֆերա) և երկրի գազային կեղևը (մթնոլորտ)։

Երկրի կեղևը—երկրի կեղևի ուսումնասիրումը։ Երկրի կեղևը կազմող գլխավոր տեսակները։ Ջերմության ավելանալը խորության համընթաց։ Կեղև և մագմա։ Գաղափար երկրի միջուկի մասին։

Հրաբուխներ (3 ժամ)

Հրաբուխների ձևը։ Հրաբուխի արտավիժման պատկերը։ Հրաբխային նյութեր։ Հրաբուխների կապը երկրի կեղևի ճաքերի հետ։ Հրաբխային ժայթքումների պատճառները։ Գործող և հանգած հրաբուխներ։ Հրաբուխների աշխարհագրական տարածումը։ Հրաբխականություն և օգտակար հանածոներ։ Հեյզերներ և տաք աղբյուրներ (ջերմուկներ)։

Հրաբուխներ

Եվրոպայում—Վեզուվ, Եթնա։

Ասիայում—Կլյուչևյան սոպկա, Ֆուձիյամա։

Աֆրիկայում—Կիլիմանջարո։
Հյուս. Ամերիկայում—Օրիսաբա։
Հարավ. Ամերիկայում—Չիմբորասո։

Լեռնակազմություն (1 ժամ)

Լեռների կազմությունը։ Ծալքեր, իջվածքներ և նրանց առաջացումը։ Երկրի գլխավոր լեռնային ծալքերը։

Երկրաշարժեր (1 ժամ)

Ամենատիպիկ երկրաշարժների օրինակներ։ Երկրաշարժների պատճառները։ ՍՍՀՄ-ի սեյսմիկական շրջանները։

Երկրի ներքին ուժերի գործունեության հետ կապված սնոտիապաշտական պատկերացումները և նրանց մերկացումը։

7. ՄԹՆՈԼՈՐՏ (12 ժամ)

Մթնոլորտի կազմն ու բարձրությունը—Տրոպոսֆերա և ստրատոսֆերա։

Երկրի մակերևույթի տաքանալն արեգակից։ Տարբեր ապարների տաքանալը՝ կախված վայրի լայնությունից։ Ցամաքի և ջրի մակերևույթի տաքանալը։ Ջրի և ցամաքի բաշխման ազդեցությունը երկրի վրա։ Ջերմության կախումը ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից։ Միջին օրական, ամսական և տարեկան ջերմություն։ Իզոթերմներ։ Հունվարյան և հուլիսյան իզոթերմներ։ Օդի ճնշումը։ Ճնշման չափումը։ Իզոբարներ։ Ճնշման փոփոխությունը բարձրության համեմատ։ Քամիներ և նրանց առաջացումը։ Բրիզներ։ Մուսսոններ։ Պասսատներ։ Ծովային հոսանքներ։ Օվկիանոսների գլխավոր հոսանքները. Հասարակածային, Գոլֆստրիմ, Կուրո-Սիվո, Լաբրադորական, Կուրիլյան։ Քամու ուժի օգտագործումը։

Մթնոլորտային տեղումներ։ Ջրի գոլորշիները մթնոլորտում։ Մառախուղ։ Ամպեր։ Անձրև և ձյուն։ Տեղումների քանակության չափումը։ Ռելյեֆի և քամիների ազդեցությունը տեղումների քանակի վրա։ Տեղումների բաշխումը երկրի մակերևույթի վրա։

Եղանակ և կլիմա։ Եղանակ, նրա դիտումը։ Եղանակի նախատեսման նշանակությունը գյուղատնտեսության և տրանս-

պորտի համար։ Եղանակի հետ կապված սնոտիապաշտական պատկերացումները։ Գաղափար կլիմայի մասին։ Գոտիները. արևադարձային, երկու բարեխառն և երկու ցուրտ։ Կլիմայի կախումը տեղի լայնությունից, ռելյեֆից, տեղի բարձրությունից, ծովի մոտիկությունից, քամիներից և ծովային հոսանքներից։ Ցիկլոններ և անտիցիկլոններ։ Ցամաքային և ծովային կլիմա։ Լեռնային կլիմա։

8. ՑԱՄԱՔԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՎԵԼՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒԺԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ (7 ժամ)

Արեգակը որպես երկրի մակերևույթի վրա գործող ուժերի գլխավոր աղբյուր (երկրի մակերևույթի սառչելն ու տաքանալը, սառույցի, քամիների, անձրևների, հոսող ջրերի և այլն առաջանալը)։

Հողմնահարություն։ Քարային տեսակների քայքայումը տաքանալու և սառչելու ազդեցության տակ։ Լեռնային տեսակների քայքայումը ջրի, օդի և կենդանի օրգանիզմների գործունեության հետևանքով։

Քամու աշխատանքը։ Քամու աշխատանքն անապատային շրջաններում։ Հոսանուտ ավազներ, բարխաններ և դյուներ։ Պայքար հոսանուտ ավազների դեմ։

Հոսող ջրերի աշխատանքը։ Անձրևային հեղեղներ։ Լեռների քայքայվելը հոսող ջրերից։ Լեռնահովիտներ, կիրճեր, լեռնանցքներ։ Հարթության փոփոխվելը հոսող ջրերի ազդեցության հետևանքով։

Սառցի աշխատանքը։ Սառույց լեռնագագաթների վրա։ Ձյան հյուսեր։ Սառցադաշտեր։ Սառցադաշտերի աշխատանքը։ Սառցադաշտային նստվածքներ։ Մայր ցամաքային սառույց։ Լողացող սառցասարեր (այսբերգներ) և նրանց առաջացումը։ Հնագույն սառցապատումների հետքերը ՍՍՀՄ-ում։

9. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԸ ՅԵՎ ՄԱՐԴԸ (12 ժամ)

Հողերի բաշխման կախումը կլիմայից։ Բուսականության կախումը ջերմությունից և խոնավությունից։ Կենդանիների բաշխումը երկրի վրա։

Գաղափար աշխարհագրական լանդշաֆտի մասին։

Լանդշաֆտային գոտիների—բևեռային, տունդրայի, տայգայի, խառը և սաղարթավոր անտառների, տափաստանների, անապատների, մերձարևադարձային շրջանների, տաք գոտու, արևադարձային անտառների, սավանների և անապատների բնութագրությունը։ Լեռնային լանդշաֆտ։

Լանդշաֆտների փոփոխվելը մարդու տնտեսական գործունեության հետևանքով։ Բնության փոփոխվելը և բնության ուժերի ու հարստությունների օգտագործումը ԽՍՀՄ-ում։

Մարդը։ Երկրագնդի բնակչության քանակը և բնակչության բաշխումը։ Բնակչության խտությունը։

Ամբողջ դասընթացի կրկնություն (12 ժամ)։

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Աշխարհամասերի ֆիզիկո-աշխարհագրական տեսությունը

(85 ժամ, որից 8 ժամը կրկնության համար)

I. Եվրոպա (ընդհանուր տեսություն) 10 ժամ
1. Մեծ Բրիտանիա—5 ժամ
2. Ֆրանսիա—4 ժամ
3. Գերմանիա—4 ժամ
4. Իտալիա—3 ժամ
5. Իսպանիա—2 ժամ
6. Ֆինլանդիա—2 ժամ
7. Ռումինիա—2 ժամ

II. Ասիա (ընդհանուր տեսություն)—10 ժամ
1. Թուրքիա—2 ժամ
2. Չինաստան—3 ժամ
3. Ճապոնիա—3 ժամ
4. Հնդկաստան—3 ժամ

III. Աֆրիկա (ընդհանուր տեսություն)—6 ժամ

IV. Ամերիկա (ընդհանուր տեսություն)—10 ժամ
ԱՄՆ—5 ժամ

V. Ավստրալիա (ընդհանուր տեսություն)—3 ժամ

Ամբողջ դասընթացի կրկնություն—8 ժամ։

I. ԵՎՐՈՊԱ (10 ժամ)

Դիրքը, սահմանները, մեծությունը և ափերի գծագրությունը։ Աշխարհագրական դիրքը մյուս աշխարհա-

մասերի նկատմամբ։ Տերիտորիայի ծայրակետերը։ Ծովային սահմանները հյուսիսում, արևմուտքում և հարավում։ Ցամաքային պայմանական սահմանն արևելքում։

Եվրոպայի մեծությունը մյուս աշխարհամասերի համեմատությամբ։

Ծովափնյա գծի մասնատվածությունն ու կտրտվածությունը։ Զառուշող ծովախորշերի մեծ քանակությունը, որոնք պաշտպանված են ծովային ալեկոծումներից և հարմար են նավահանգիստների կառուցման համար։

Թերակղզիներ։ Կանին, Կոլա, Սկանդինավիա, Յուտլանդիա, Պիրենեյան, Ապենինյան, Բալկանյան, Ղրիմ։

Կղզիներ, նրանց ցամաքային ծագումը։ Կղզիներ—Նոր Երկիր, Ֆրանց-Իոսիֆի Երկիր, Շպիցբերգեն, Իսլանդիա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Կորսիկա, Սարդինիա, Սիցիլիա։

Օվկիանոսներ, ծովեր, ծոցեր և նեղուցներ։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը և նրա մասերը—ծովերը. Բարենցի և Սպիտակ։ Նրանց նշանակությունը։

Ատլանտյան օվկիանոսը և նրա մասերը—ծովերը. Հյուսիսային, Բալթիկ (Բոտնիկ, Ֆիննական և Ռիգայի ծոցերով)։ Բիսկայան ծոց։ Նեղուցներ. Լամանշ, Պա-դե-Կալե, Սկագերակ, Զունդ (Երեսուն), Կատեգատ։

Միջերկրական ծովը և նրա մասերը—Ադրիատիկ, Էգեյան, Մարմարի, Սև, Ազովի ծովերը։ Նեղուցները. Ջիբրալթարի, Դարդանելի, Բոսֆորի, Կերչի։

Ռելյեֆը։ Ռելյեֆի հարաբերական միօրինակությունն Արևելյան Եվրոպայում և նրա բազմազանությունն Արևմտյան Եվրոպայում։ Երիտասարդ և հին ծալքավոր լեռներ։ Երիտասարդ լեռների բարձրությունը։ Ձյունածածկ գագաթներ, սառցադաշտեր, լեռնային լճեր, լեռնային մարգագետիններ և անտառներ։ Հին լեռների առանձնահատկությունները. աննշան բարձրություն, կլորաձև գագաթներ, թեթև զառիվայրությամբ լանջեր։

Դաշտավայրերը։ Արևելա-Եվրոպական, Գերմանական, Ֆրանսիական, Լոմբարդական, Միջին-Դանուբյան և Ստորին-Դանուբյան։

Բարձրությունները։ Միջին-Ռուսական, Մերձվոլգյան, Վոլին-Պոդոլյան, Դոնեցի բլրաշարք։

Երիտասարդ լեռներ։ Ալպեր, Պիրենեյներ, Ապենիններ, Կարպատներ, Բալկաններ, Ղրիմի, Կովկասյան։

Հին լեռներ։ Սկանդինավյան, Մեծ Բրիտանիայի լեռները, Միջին-Գերմանական, Ուրալյան։

Եվրոպայի սեյսմիկական և հրաբխային շրջանները։

Հրաբուխներ։ Էտնա, Վեզուվ, Հեկլա։ Իսլանդական հեյզերներ։

Օգտակար հանածոներ։ Օգտակար հանածոների կարևորագույն տեսակների տեղաբաշխումը։

Քարածուխ. Մեծ Բրիտանական կղզում, Ռուրի ավազանում, Դոնեցի բլրաշարքում։

Երկաթահանք. Լոթարինգյան ավազանում, Պիրենեյան թերակղզում, Սկանդինավյան լեռներում, Ուրալյան լեռներում, Կրիվոյ Ռոգի ավազանում, Միջին-Ռուսական բարձրությունում (Կուրսկի մագնիսային անոմալիան)։

Կլիման։ Եվրոպայի դիրքը բարեխառն գոտում։ Օվկիանոսի և Գոլֆստրիմի ազդեցությունը Եվրոպայի կլիմայի վրա։

Եվրոպայի չորս գլխավոր կլիմայական շրջանները. բևեռային կղզիների խիստ կլիմայի շրջանը, արևմտյան՝ ծովային կլիմայի շրջանը, արևելյան՝ ցամաքային և հարավային Եվրոպայի միջերկրածովային կլիման։

Ներքին ջրերը։ Գետերի բազմաքանակությունը և նրանց վոչ մեծ յերկարությունը մյուս աշխարհամասերի գետերի համեմատությամբ։ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի գետերի առանձնահատկությունները։

Գետերը։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի ավազան—Պեչորա, Հյուս. Դվինա։ Բալթիկ ծովի ավազան—Նևա, Արևմտյան Դվինա, Նեման, Վիսլա։ Ատլանտյան օվկիանոսի ավազան—Էլբա, Հռենոս, Թեմզա, Սեն, Տախո։ Միջերկրականի ավազան—Ռոն, Պո։ Սև ծովի ավազան—Դանուբ, Պրուտ, Դնեստր, Դնեպր։ Ազովի ծովի ավազան—Դոն։ Կասպից ծովի ավազան—Վոլգա (Օկա և Կամա վտակներով), Ուրալ։

Եվրոպայի գետերի նշանակությունը վորպես հաղորդակցության ճանապարհներ և վորպես էներգիայի աղբյուր։ Ջրանցքներ. Սպիտակ-Բալթիկ ծովյան, Մոսկվա-Վոլգա, Մարիինյան սիստեմ։ Ջրանցքների մեծ քանակությունը Արևմտյան Եվրոպայում և նրանց նշանակությունը։

Եվրոպայի լճերը. լճերի մեծ քանակություն, նրանց վոչ մեծ չափերը և ծագման բազմազանությունը։

Լճերը։ Լադոգա, Օնեգա, Ժնևի, Բոդենի։

Հողերը, բուսական և կենդանական աշխարհը։ Եվրոպայի հիմնական լանդշաֆտային գոտիների հողերի, բուսական և կենդանական աշխարհի բնութագրությունը. տունդրա, փշատերև և խառն անտառների շերտ, սևահողային տափաստաններ, Մերձկասպյան դաշտավայրի կիսաանապատները, Միջերկրածովյան ափերի մերձարևադարձային շրջանը։

Բնակչությունը։ Բնակչության թիվը ու խտությունը։ Բնակչության վոչ համահավասար բաշխումը տերիտորիայի վրա։ Ազգային կազմի խայտաբղետությունը։

Եվրոպայի քաղաքական քարտեզը։ Եվրոպական պետությունների մայրաքաղաքները։

ԽՍՀՄ—Մոսկվա։ Մեծ Բրիտանիա—Լոնդոն։ Ֆրանսիա—Փարիզ։ Գերմանիա—Բեռլին։ Իտալիա—Հռոմ։ Նորվեգիա—Օսլո։ Շվեդիա—Ստոկհոլմ։ Դանիա—Կոպենհագեն։ Շվեյցարիա—Բեռն։ Սլովակիա—Բրատիսլավա։ Հունգարիա—Բուդապեշտ։ Բելգիա—Բրյուսել։ Հոլլանդիա—Հաագա։ Իսպանիա—Մադրիդ։ Պորտուգալիա—Լիսաբոն։ Ալբանիա—Տիրանա։ Յուգո-Սլավիա—Բելգրադ։ Հունաստան—Աթենք։ Բուլղարիա—Սոֆիա։ Ռումինիա—Բուխարեստ։ Ֆինլանդիա—Հելսինկի։

1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (5 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Կղզային դիրքը։ Ափերի գծերի կտրտվածությունը։ Ուելս և Կորնուոլ թերակղզիները։ Մեծ Բրիտանիայի բաղկացուցիչ մասերը. բուն Անգլիա, Շոտլանդիա և Հյուս. Իռլանդիա։

Ռելյեֆը։ Անգլիայի դաշտավայրային հարավ-արևելքը և լեռնոտ արևմուտքը։ Լոնդոնի դաշտավայրը։ Պեննինյան լեռները։ Շոտլանդական դաշտավայրը։

Օգտակար հանածոները։ Քարածուխով հարուստ լինելը։ Երկաթահանք։

Կլիման։ Ծովային կլիմա։ Օվկիանոսի, Գոլֆստրիմի, արևմտյան քամիների և ռելյեֆի ազդեցությունը կլիմայի վրա։

Գետերը։ Թեմզա, Սևերն. նրանց չսառչելն ու ջրառատությունը. տեղատվության և մակընթացության ազդեցությունը նրանց գետաբերանների վրա։

Հողերը և բուսականությունը։ Լանդշաֆտի բնութագրությունը։

Բնակչությունը։ Քաղաքային բնակչության գերակշռությունը։ Բնակչության բարձր խտությունը։ Պրոլետարիատի բազմաքանակությունը։

Պետական կառուցվածքը։ Սահմանադրական միապետություն (թագավորի դրությունը, պարլամենտի վերին և ներքին պալատների նշանակությունը)։

Տնտեսությունը։ Մեծ Բրիտանիան—հնագույն արդյունաբերական պետություն։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը, մետաղագործություն, մեքենաշինարարություն, նավաշինարարություն, քարածխային, տեքստիլ, քիմիական և էլեկտրոտեխնիկական։ Գյուղատնտեսության յերկրորդական դերը։ Գյուղատնտեսության մասնագիտացումը ցեղային անասնաբուծության և մերձքաղաքային տնտեսության ուղղությամբ։ Հարավում և Շոտլանդիայում՝ հացահատիկային կուլտուրաներ (ցորեն, վարսակ)։ Ձկնորսություն։ Արդյունաբերական ապրանքների արտահանություն։ Հումքի և սննդամթերքի ներմուծում։ Ռազմական արդյունաբերության ուժեղացումը։

Քաղաքները։ Լոնդոն (մայրաքաղաքը), Բիրմինհամ, Մանչեստր, Լիվերպուլ, Նյուկեսլ, Գլազգո, Պլիմուտ (ռազմական նավահանգիստ)։

Բրիտանական կայսրությունը։ Նրա բաղկացուցիչ մասերը։

ա) Մետրոպոլիա—Մեծ Բրիտանիա։

բ) Դոմինիոններ—Ազատ Իրլանդական պետություն, Կանադա, Նյուֆաունդլենդ, Հարավ-Աֆրիկական միություն, Ավստրալիա և Նոր Զելանդիա։

գ) Գաղութները—Հնդկաստան, Ցեյլոն, Մալակկա, Պաղեստին, Բրիտանական Արեվելյան Աֆրիկա և այլն (քարտեզով)։

Ծովային ճանապարհ Մեծ Բրիտանիայից դեպի Հնդկաստան, Ավստրալիա և Չինաստան։ Ռազմածովային բազաներ այդ ճանապարհին. Ջիբրալտար, Մալթա, Սուեզի ջրանցքի գոտին, Ադեն, Սինգապուր, Հոնկոնգ։

Պատերազմը Գերմանիայի ու Իտալիայի դեմ և դրա հետևանքները։ Ֆրանսիայի ռազմական պարտությունը և հրաժարումը Անգլիայի դաշնակից լինելուց։

2. ՖՐԱՆՍԻԱ (4 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Ծովային և ցամաքային սահմանները։

Ռելյեֆը։ Ֆրանսիայի հյուսիս-արևմտյան դաշտավայրային և հարավ-արևելյան բարձրադիր մասերը։ Կենտրոնական զանգվածը։ Ալպեր (Մոնբլան գագաթով), Պիրենեյներ, Վոգեզներ։

Օգտակար հանածոները։ Յերկաթով հարուստ լինելը և քարածխի պակասությունը։

Կլիման։ Ծովային կլիմա Ֆրանսիայի մեծ մասում։ Միջերկրածովային կլիմա հարավում։

Գետերը։ Սեն, Լուար, Գարոն, Ռոն, Հռենոս. նրանց հարմարությունները նավագնացության համար, հիդրոռեսուրսները։

Հողերը և բուսականությունը։ Բնական պայմանների բազմազանությունը։

Բնակչությունը։ Բնակչության խտությունը և բաշխումը քաղաքի ու գյուղի միջև։

Պետական կառուցվածքը։ Բուրժուական հանրապետություն։

Տնտեսությունը։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը. մետաղագործություն, մեքենաշինարարություն, տեքստիլ, քիմիական, գինեգործություն, պերճանքի առարկաների արտադրություն։ Գյուղատնտեսության կարևոր նշանակությունը։ Անասնաբուծություն։ Հողագործության գլխավոր կուլտուրաները. ցորեն, շաքարի ճակնդեղ։ Այգեգործություն։ Գինեգործություն։ Ձկնորսություն։

Քաղաքները։ Փարիզ (մայրաքաղաքը), Լիոն, Մարսել, Բորդո, Հավր, Ստրասբուրգ, Մեց։ Ռազմական նավահանգիստներ—Բրեստ և Տուլոն։

Գաղութային տիրապետությունները։ Ալժիր, Թունիս, Մարոկկո, Ֆրանսիական Արեվմտյան Աֆրիկա, Հասարակածային Աֆրիկա, Մադագասկար, Հնդկաչին, Սիրիա, Գվիանա։

Ֆրանսիայի պարտությունը Գերմանիայի և Իտալիայի դեմ մղած պատերազմում և հրաժարումը Անգլիայի դաշնակից լինելուց։

3. ԳԵՐՄԱՆԻԱ (4 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Սահմանները։ Հյուսիսային և Բալթիկ ծովերն ու նրանց միացնող Կիլի ջրանցքը։

Ռելյեֆը։ Հյուսիս-Գերմանական դաշտավայր։ Միջին-Գերմանական լեռներ, Հարավ-Գերմանական բարձրավանդակ։ Ալպեր։

Օգտակար հանածոները։ Քարածուխով (Ռուր, Սիլեզիա), կալիական աղերով և գորշ քարածուխով (Միջին Գերմանիա) հարուստ լինելը, յերկաթահանքի պակասությունը։

Կլիման։ Կլիմայի փոփոխվելն ու ցամաքայնության ուժեղացումը արևմուտքից-արևելք։

Գետերը։ Հռենոս, Էլբա, Օդեր, Վեզեր, Էմս, Վերին Դանուբ։ Բարենպաստ պայմաններ նավագնացության համար։ Ջրանցքները։

Հողերը և բուսականությունը։ Լանդշաֆտի բնութագրությունը։

Բնակչությունը։ Խտությունը. բնակչության բաշխումը քաղաքի և գյուղի միջև։

Պետական կառուցվածքը։ 1933 թվից նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունն իշխանության գլուխ։

Տնտեսությունը։ Բարձր զարգացած արդյունաբերություն։ Արդյունաբերական հումքի և սննդամթերքի ներմուծումը։ Արդյունաբերության կարևորագույն ճյուղերը. մետաղագործություն, մեքենաշինություն, էլեկտրոտեխնիկական, քիմիական, տեքստիլ։ Գյուղատնտեսության զարգացումը։ Գյուղատնտեսության ճյուղերը. անասնաբուծություն, հողագործություն, հացահատիկային կուլտուրաներ (ցորեն, հաճար, գարի), շաքարի ճակնդեղ, հարավում՝ խաղող։ Տնտեսության ռազմականացումը։

Քաղաքները։ Բեռլին (մայրաքաղաքը), Համբուրգ (նավահանգիստ), Էսսեն, Դյուսբուրգ, Լեյպցիգ, Մյունխեն, Քյոնիգսբերգ, Կիլ (ռազմական նավահանգիստ)։ Ավստրիայի, Չեխոսլովակիայի մի մասի և Կլայպեդայի գրավումը Գերմանիայի կողմից։ Պատերազմ Գերմանիայի և Լեհաստանի միջև ու վերջինիս ջախջախումը։ Պատերազմը (Իտալիայի հետ դաշնակցած) Անգլիայի և Ֆրանսիայի դեմ ու դրա հետևանքները։

4. ԻՏԱԼԻԱ (3 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Թերակղզային դիրքը։ Սարդինիա և Սիցիլիա կղզիները։

Ռելյեֆը։ Ալպերը և Լոմբարդական դաշտավայրը։ Ապենինյան լեռները։ Վեզուվ և Էտնա հրաբուխները։

Օգտակար հանածոները։ Օգտակար հանածոներով աղքատ լինելը։

Կլիման, հողերը և բուսականությունը։ Բնական պայմանների տարբերությունն Իտալիայի մայր ցամաքային և թերակղզային մասերում։

Գետերը։ Պո և Տիբր։ «Սպիտակ ածխի» պաշարները։ Պո գետի նշանակությունը վոռոգման համար։

Բնակչությունը։ Գյուղատնտեսական բնակչության գերակշռությունը։ Խտությունը։

Պետական կառուցվածքը։ Սահմանադրական միապետություն։ 1922 թվից ֆաշիստական դիկտատուրա։

Տնտեսությունը։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը. տեքստիլ, մեքենաշինական, սննդի։ Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը, հյուսիսում՝ դաշտավարություն (ցորեն), իսկ մյուս մասերում՝ խաղողագործություն և պտղաբուծություն (մրգեր, ձիթապտուղ)։

Քաղաքները։ Հռոմ (մայրաքաղաքը), Թուրին, Միլան, Վենետիկ, Ջենովա, Նեապոլ։

Գաղութային տիրապետությունները։ Լիբիա, Սոմալի, Էրիտրեյա։ Հաբեշստանի և Ալբանիայի հափշտակումը։ Իտալիայի ոգնությունը Իսպանական խռովարարներին։

Պատերազմը (Գերմանիայի հետ դաշնակցած) Անգլիայի դեմ ու դրա հետևանքները։ Հաշտություն Ֆրանսիայի հետ։

5. ԻՍՊԱՆԻԱ (2 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Պիրենեյան թերակղզի։ Բալեարյան կղզիները։

Ռելյեֆը։ Մեսետի բարձրավանդակը։ Անդալուզյան և Արագոնյան դաշտավայրերը։ Լեռները՝ Պիրենեյներ, Սիերա-Նևադա։

Օգտակար հանածոները։ Յերկաթահանք, քարածուխ, գունավոր մետաղներ, սնդիկ։

Կլիման, հողերը և բուսականությունը։ Միջերկրածովյան ափերի, կենտրոնական Իսպանիայի, Անդալուզյան դաշտավայրի և Բիսկայան ծոցի ափերի բնական պայմանների տարբերությունը։

Գետերը։ Դուերո, Տախո, Գվադիանա, Գվադալկվիվիր, Էբրո։

Բնակչությունը։ Քանակը, խտությունը, ազգային կազմը և բնակչության բաշխումը (Կատալոնիա, Բասկերի երկիր, Գալիսիա։

Պետական կառուցվածքը։ Ֆաշիստական դիկտատուրա 1939 թվից։ Ֆաշիստական խռովությունը և Գերմանո-Իտալական օգնությունը խռովարարներին։ Իսպանիայի աշխատավորության հերոսական պայքարը։

Տնտեսությունը։ Արդյունաբերության թույլ զարգացումը, գյուղատնտեսության հետամնացությունը։ Գյուղատնտեսության գլխավոր կուլտուրաները. ցորեն, ձիթապտուղ, խաղող, ցիտրուսային բույսեր։ Անասնապահություն։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը. լեռնարդյունահանություն, տեքստիլ, սնունդ։

Քաղաքները։ Մադրիդ (մայրաքաղաքը), Բարսելոնա, Վալենսիա, Սևիլիա, Բիլբաո, Ովիեդո։

Գաղութային տիրապետությունները։ Իսպանական Մարոկկո, Իսպանական Արևմտյան Աֆրիկա (Ռիո-դե-Օրո), Կանարյան կղզիներ։

6. ՖԻՆԼԱՆԴԻԱ (2 ժամ)

Ֆինլանդիայի սահմանակցությունը ԽՍՀՄ-ին և նրա առաջացումը ցարական Ռուսաստանի կազմում մտնող հողամասերից։

Աշխարհագրական դիրքը։ Սահմանները։ Սառցապատման հետքերը։ Լճերի, քարերի և անտառների երկիր։

Օգտակար հանածոները։ Երկաթահանքի և պղնձահանքի վոչ մեծ պաշարներ, շատ տորֆ, գրանիտ և մարմար։

Կլիման և հողերն աննպաստ են հողագործության համար։ Անտառներով հարուստ լինելը։ Լճերի և գետերի առատությունը։ Հիդրոէներգիայով հարուստ լինելը։

Բնակչությունը։ Գյուղական բնակչության գերակշռությունը։ Խտությունը։

Պետական կառուցվածքը։ Բուրժուական հանրապետություն։

Տնտեսությունը։ Տնտեսության գլխավոր ճյուղերը. փայտամշակման, թղթի-ցելյուլոզային։ Գյուղատնտեսությունը. կաթնային անասնապահություն։

Քաղաքները։ Հելսինկի (մայրաքաղաքը), Տամպերե։

Պատերազմը ԽՍՀՄ-ի դեմ և դրա հետևանքները։

7. ՌՈՒՄԻՆԻԱ (2 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Սահմանները։ Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի վերադարձնելը ԽՍՀՄ-ին։

Հարավային Դոբրուջայի վերադարձնելը Բուլղարիային և Տրանսիլվանիայի մի մասի վերադարձնելը Վենգրիային։

Ռելյեֆը։ Դանուբյան դաշտավայրը։ Կարպատներ։

Օգտակար հանածոները։ Նավթ, քարածուխ, երկաթ։

Կլիման—գյուղատնտեսության համար նպաստավոր։

Գետերը։ Դանուբ (Տիսսա վտակով)։

Հողերը և բուսականությունը։ Տափաստանների գերակշռումը դաշտավայրային մասերում և անտառներինը՝ լեռնային մասերում։

Բնակչությունը։ Գյուղական բնակչության գերակշռումը։

Պետական կառուցվածքը։ Սահմանադրական միապետություն։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության գերակշռումը։ Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը. դաշտավարություն (եգիպտացորեն, ցորեն, շաքարի ճակնդեղ), խաղողագործություն, անտառային տնտեսություն։ Արդյունաբերությունը. հանքարդյունաբերական, անտառասղոցարանային։

Քաղաքները։ Բուխարեստ (մայրաքաղաքը), Կոնստանցա (Նավահանգիստ)։

II. ԱՍԻԱ (10 ժամ)

Դիրքը, սահմանները, մեծությունը և ափերի գծագրությունը։ Ասիայի դիրքը մյուս աշխարհամասերի նկատմամբ։ Տերիտորիայի ծայրակետերը։ Արևմտյան սահմանների պայմանականությունը։ Սուեզի ջրանցքը, Ասիայի և Ավստրալիայի միջև ընկած կղզիները։ Բերինգի նեղուցը։ Ասիայի

մեծությունը։ Մերձափնյա գծի կտրտվածությունն արևելքում։

Օվկիանոսները, ծովերը, ծոցերը և նեղուցները։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը և նրա մասերը—ծովերը. Կարայի, Լապտևների, Արևելա-Սիբիրական, Չուկոտյան։

Խաղաղ օվկիանոսի մասերը—ծովերը. Բերինգի, Օխոտի, Ճապոնական, Դեղին, Արևելա-Չինական, Հարավային-Չինական։

Հնդկական օվկիանոսը, նրա ծովերն ու ծոցերը. Բենգալյան ծոց, Արաբական ծով, Պարսից ծոց, Կարմիր ծով։

Նեղուցները։ Կարայան դռներ, Բերինգի, Թաթարական Մալակկայի, Բաբ-Էլ-Մանդեբի նեղուցները, Սուեզի ջրանցքը։

Թերակղզիները։ Յամալ, Թայմիր, Չուկոտյան, Կամչատկա, Կորեյա, Հնդկաչին, Մալակկա, Հնդկական, Արաբական, Փոքր Ասիա։

Կղզիները։ Հյուսիսային Երկիր, Նոր Սիբիրյան կղզիներ, Վրանգելի կղզի, Կուրիլյան, Սախալին, Ճապոնական, Ֆորմոզա, Ֆիլիպինյան, Մեծ Զոնդյան (Սումատրա, Յավա, Բոռնեո, Ցելեբես), Ցեյլոն, Կիպրոս։

Ռելյեֆը։ Ասիան աշխարհի ամենաբարձրադիր մասն է։ Բարձրադիր հարավ-արևելքը և դաշտավայրային հյուսիս-արևմուտքը։ Երկրագնդի ամենամեծ ծալքավոր լեռների գլխավոր գոտու հանգույցը—Պամիրի լեռնաշխարհը՝ Ստալինի անվան գագաթով, Հիմալայները՝ Էվերեստ գագաթով, Կարակորում, Կուէնլուն, Տյան-Շան, Հինդուկուշ, Կովկասյան (Էլբրուս և Կազբեկ գագաթներով), Ալթայան, Սայանյան, Յաբլոնովյան լեռները, Ստանովյան լեռնաշղթա, Սիխոտե-Ալին, Վերխոյանսկի լեռնաշղթա, Չերսկու լեռնաշղթա, Մեծ Խինգան։ Հրաբխային և երկրաշարժային շրջանները։

Անդրկովկասում՝ Փոքր Կովկասն իր ճյուղավորումներով (Վրահայոց, Բզովդալի, Փամբակի, Շահդաղի, Զանգեզուրի), Սուրամի լեռները, Թալիշի լեռները։ Արագած գագաթը։

Բարձրավանդակները։ Արևելա-Սիբիրական, Կենտրոնական-Ասիական (բաղկացած Գոբիի և Տիբեթի բարձրավանդակներից), Դեկանի, Արաբական։

Անդրկովկասում՝ Հայկական։

Դաշտավայրերը։ Արևմտյան-Սիբիրական, Թուրանի, Չինական, Հնդկական, Միջագետքի։

Անդրկովկասում՝ Ռիոնի, Կուրի և Արարատյան դաշտավայրերը։

Օգտակար հանածոները։ Կարևոր օգտակար հանածոների շրջանները. քարածուխ՝ Կուզնեցկի ավազանում, Տունգուսյան ավազանում, Կարագանդայի ավազանում, Հյուսիս-Չինական լեռներում։ Նավթը՝ Բաքվում, Ուրալում, Իրանի բարձրավանդակում, Միջագետքի դաշտավայրում, Մեծ Զոնդյան կղզիներում, Սախալին կղզում։ Երկաթահանք՝ Ուրալում, Հեռավոր Արևելյան Երկրում և Չինաստանի հյուսիս-արևելքում։ Անագ՝ Մալակկայում և Մեծ Զոնդյան կղզիներում։ Ոսկի՝ Արևելա-Սիբիրական բարձրավանդակում։

Անդրկովկասում։ Քարածուխ (Վրաստանում—Տղվիբուլի և Տղվարչելի), պղինձ (Հայաստանում—Ալավերդում և Ղափանում), յերկաթ (Ադրբեջանում—Դաշքեսանում), մարգանեց (Վրաստանում—Ճիաթուրի)։

Կլիման։ Ասիայի տարբեր մասերի (հյուսիսային, կենտրոնական, հարավային, արևելյան և արևմտյան շրջանների) կլիմայական տարբերությունները։

Գետերը։ Ասիական գետերի մեծ յերկարությունը։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս թափվող գետերը. Օբ (Իրտիշ վտակով), Ենիսեյ (Անգարա վտակով), Լենա (Ալդան վտակով)։

Խաղաղ օվկիանոս թափվող գետերը. Ամուր, Խուանխե, Յանցզի (Յանցզիցզյան)։

Հնդկական օվկիանոս թափվող գետերը. Գանգես և Բրահմապուտրա, Ինդոս, Եփրատ և Տիգրիս։

Արալյան ծովը թափվող գետերը. Սիր-Դարյա և Ամու-Դարյա։ Ավազներում կորչող գետերը։

Անդրկովկասում՝ Կուր և Արաքս իրենց վտակներով, Ռիոն։

Գետերի նշանակությունը վորպես վոռոգման, հիդրոէներգիայի աղբյուրներ և վորպես հաղորդակցության ճանապարհներ։

Լճերը։ Կասպից ծով, Արալյան ծով, Բալխաշ, Բայկալ։

Անդրկովկասում՝ Սևան։

Հողաբուսական շրջանները և կենդանական աշխարհը։ Տունդրա, տայգա, տափաստաններ, անապատներ, մերձարևադարձային և արևադարձային շրջաններ։

Արևելյան Ասիայի հողերի և բուսականության յուրահատ-

կությունը։ Բևեռային, կենտրոնական և հարավային Ասիայի կենդանական աշխարհը։

Բնակչությունը։ Ասիայի բնակչության քանակը։ Բնակչության անհամաչափ բաշխվածությունը տերիտորիայի վրա։ Խտությունը։ Ասիայում բնակված ժողովուրդները։

Ասիայի քաղաքական քարտեզը։ ԽՍՀՄ-ի Ասիական մասը։ Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետություն—Ուլան-Բաթոր. Տուվայի Ժողովրդական Հանրապետություն—Կիզիլ. Ճապոնիա—Տոկիո. Չինաստան—Նանկին. Հնդկաստան—Դելի. Աֆղանստան—Քաբուլ. Իրան—Թեհրան. Թուրքիա—Անկարա։

1. ԹՈՒՐՔԻԱ (2 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Թուրքիայի դիրքն Ասիայում և Յեվրոպայում։ Աշխարհագրական դիրքի հարմարությունը։ Ծովային և ցամաքային սահմանները։

Ռելյեֆը։ Լեռնային ռելյեֆի գերակշռումը։ Փոքրասիական բարձրավանդակը։

Օգտակար հանածոները։ Քարածուխ, յերկաթահանք։ Հանածոների թույլ ուսումնասիրվածությունը։

Կլիման, հողերը և բուսականությունը։—Անտառների պակասությունը։

Գետերը։ Գետերի և լճերի սակավաթիվ լինելը։

Բնակչությունը։ Գյուղական բնակչության գերակշռությունը։ Խտությունը։

Պետական կառուցվածքը։ Բուրժուական հանրապետություն։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության ճյուղերը. հողագործություն (ցորեն, յեգիպտացորեն, բամբակ, ծխախոտ, քնջութ, շաքարի ճակնդեղ), այգեգործություն, շերամապահություն, բրդային անասնապահություն (արևելքում՝ քոչվորական անասնապահություն)։ Արդյունաբերություն։ Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության ստեղծումը. տեքստիլ, շաքարի և ցեմենտի։

Քաղաքները։ Անկարա (մայրաքաղաքը), Ստամբուլ, Իզմիր (Զմյուռնիա)։

Փոխադարձ օգնության պայմանագիրը Անգլիայի և Ֆրանսիայի հետ և դրա հետևանքները։

2. ՉԻՆԱՍՏԱՆ (3 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Սահմանները։ Տերիտորիայի ընդարձակածավալությունը։ Չինաստանի բաղկացուցիչ մասերը. բուն Չինաստան, Մանջուրիա, Ներքին Մոնղոլիա, Սինձյան, Տիբեթ։

Ռելյեֆը։ Արևելա-Չինական դաշտավայր, Հյուսիս-Չինական և Հարավ-Չինական լեռները, Հիմալայներ, Կուեն-Լուն, Տյան-Շան. Տիբեթի և Գոբիի բարձրավանդակները։

Օգտակար հանածոները։ Չինաստանի հարուստ լինելը օգտակար հանածոներով՝ քարածուխ, յերկաթահանք, գունավոր մետաղներ։ Չինաստանի հարստությունների թույլ հետազոտվածությունը։ Օտարերկրյա կապիտալի կողմից կարևորագույն հանքավայրերի հափշտակումը։

Կլիման։ Արևելյան Չինաստանի մուսսոնային կլիման։ Կենտրոնական և Արևմտյան Չինաստանի կլիման։ Լեռնային կլիման։

Գետերը։ Խուանխե, Յանձի և Սիձյան։ Գետերի ռեժիմի անկայունությունը։ Գետերի, մասնավորապես Յանձի գետի նշանակությունը, վորպես հաղորդակցության ճանապարհ և վոռոգման աղբյուր։

Հողերը և բուսականությունը։ Դեղնահողեր և կարմրահողեր բուն Չինաստանում։ Ավազոտ և քարոտ հողեր Գոբիում։ Չինաստանի արևելյան մասի բարեխառն և մերձարևադարձային բուսականությունը։ Գոբի անապատը։ Չինաստանի արևմտյան մասի կիսաանապատները։

Բնակչությունը։ Բնակչության մեծաքանակությունը։ Խտությունը։ Քաղաքների բնակչությունը։

Պետական կառուցվածքը։ Բուրժուական հանրապետություն։ Պայքար ճապոնական հափշտակիչների դեմ։ Մանջուրիայի, Ներքին Մոնղոլիայի և Հյուսիսային, Արևելյան ու Հարավային Չինաստանի մի մասի հափշտակումը Ճապոնիայի կողմից։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության գերակշռումը։ Չինական արդյունաբերության հետամնացությունը։ Արհեստագործական և տնայնագործական արտադրության գերակշռումը։ Արդյունաբերությունը. տեքստիլ և լեռնարդյունահանական։ Խոշոր արդյունաբերությունը օտարերկրյա կապիտալի ձեռքում։ Արդյունաբերության տեղադրությունը մերձծովյա և գետափնյա

նավահանգստային քաղաքներում։ Գյուղատնտեսության գլխավոր կուլտուրաները. բրինձ, թեյ, բամբակ. հյուսիսում՝ սոյա և գաոլյան. բանջարաբուծություն և խաղողաբուծություն։

Քաղաքները։ Նանկին (մայրաքաղաք), Չունցին (ժամանակավոր մայրաքաղաքը), Շանհայ, Կանտոն, Բեյպին, Հանկոու, Մուկդեն։

3. ՃԱՊՈՆԻԱ (3 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Ճապոնիայի դիրքը կղզիների վրա։ Ճապոնական կղզիները (Հոնսյու, Հոկկայդո, Կյուսյու) և հյուսիսում՝ Կուրիլյան կղզիները։ Կղզային դիրքի առավելությունը։

Ռելյեֆը։ Ճապոնիայի լեռնոտ ռելյեֆը։ Հրաբուխներ և երկրաշարժներ։ Ֆուզիյամա հրաբուխը։

Օգտակար հանածոներ։ Օգտակար հանածոներով աղքատ լինելը։

Կլիման։ Մուսսոնների և ծովային տաք (Կուրո-Սիվո) և ցուրտ (Օյա-Սիվո) հոսանքների ազդեցությունը։

Հողերը և բուսականությունը։ Ճապոնական ֆլորայի յուրահատկությունը։ Ջրային էներգիայով հարուստ գետերը։ Անտառները։ Ձկնային հարստությունները։

Բնակչությունը։ Գյուղական բնակչության գերակշռումը։ Բնակչության խտությունը։

Պետական կառուցվածքը։ Սահմանադրական միապետություն, փաստորեն համարյա չսահմանափակված միապետով։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության և մանր արտադրության գերակշռումը։ Արդյունաբերությունը. տեքստիլ, մեքենաշինական, քիմիական, ռազմական։ Գյուղատնտեսությունը. բրինձ, թեյ, մետաքսագործություն։ Ձկնորսություն։

Քաղաքները։ Տոկիո (մայրաքաղաք), Օսակա, Կիոտո, Յոկոհամա, Կոբե։

Գաղութային տիրապետությունները։ Կորեա, Ֆորմոզա (Տայվան), Կարաֆուտո (Սախալինի հարավային կեսը)։

Հափշտակողական պատերազմը Չինաստանի դեմ և դրա հետևանքները։

4. ՀՆԴԿԱՍՏԱՆ (3 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Տերիտորիայի չափերը։ Բիրմա։ Սահմանները։

Ռելյեֆը։ Դեկանի բարձրավանդակը, Հյուսիսային Հնդկական դաշտավայրը, Հիմալայան լեռները (Էվերեստ գագաթով)։

Օգտակար հանածոները։ Օգտակար հանածոներով հարուստ լինելը. քարածուխ, նավթ, երկաթ, ադամանդ։

Կլիման, հողերը և բուսականությունը։

Գետերը։ Ինդոս, Գանգես և Բրահմապուտրա։

Բնակչությունը։ Բնակչության մեծաքանակությունը և բնակվածության անհամաչափությունը։ Գյուղական բնակչության գերակշռությունը։

Հնդկաստանը Մեծ Բրիտանիայի խոշորագույն գաղութ։ Անգլիայի կառավարումը—անգլիական գեներալ-նահանգապետ (կամ փոխարքա), հնդկական իշխաններ (ռաջաներ), վորոնք յենթարկվում են գեներալ-նահանգապետին։ Հնդկաստանի ժողովրդի պայքարը անկախության համար։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության գերակշռումը։ Արդյունաբերության մեջ արհեստագործական և տնայնագործական արտադրության տիրապետությունը։ Գյուղատնտեսության գլխավոր կուլտուրաները. բրինձ, ցորեն, շաքարեղեգն, բամբակ, թեյ։ Անասնաբուծություն։ Արդյունաբերության գլխավոր ճյուղերը. տեքստիլ, լեռնարդյունահանական։

Քաղաքները։ Դելի (վարչական կենտրոն), Կալկաթա, Բոմբեյ։

Ցեյլոն կղզին։

III. ԱՖՐԻԿԱ (6 ժամ)

Դիրքը։ Սահմանները, մեծությունը և ափերի գծագրությունը։ Աֆրիկայի դիրքը մյուս աշխարհամասերի նկատմամբ։ Տերիտորիայի ծայրակետերը։ Աֆրիկայի մեծությունը։ Ափերի թույլ կտրտվածությունը և դժվար մատչելիությունը ծովի կողմից։ Աֆրիկայի ներքին շրջանների հեռավորությունը ծովերից։

Ծովերը, ծոցերը, նեղուցները. Միջերկրական ծով, Ջիբրալտարի նեղուց, Սուեզի ջրանցք, Գվինեայի ծոց, Մոզամբիկի նեղուց։

Թերակղզիները և կղզիները։ Սոմալի թերակղզին։ Մադագասկար, Ազորյան կղզիները։

Ռելյեֆը։ Լայնածավալ բարձրավանդակ, որն աստիճաններով իջնում է դեպի ծով։ Արևելա-Աֆրիկական բարձրավանդակը։ Ամենաբարձր լեռները—Հաբեշական, Դրակոնյան։ Խոր իջվածքներ, որոնք զբաղված են լճերով (Վիկտորիա, Ռուդոլֆի, Տանգանյիկա և այլն)։ Բարձրաբերձ հրաբուխներ, որոնք դասավորված են իջվածքների ափերին (Կենիա, Կիլիմանջարո)։ Ցածրացած հյուսիս-արևմուտքը։ Չադ լիճը։ Հյուս. Աֆրիկայի ծալքավոր լեռները—Ատլաս։

Օգտակար հանածոները։ Գունավոր մետաղներ։ Ամենահարուստ վոսկեբեր հողերը և ադամանդի հանքերը հարավային Աֆրիկայում։

Կլիման։ Աֆրիկան աշխարհի ամենատաք մասն է։ Տարվա եղանակները հյուսիսային և հարավային Աֆրիկայում։ Տեղումների անհավասարաչափ բաշխումը։ Հասարակածային անձրևներ, արևադարձային պարբերական անձրևներ։ Գվինեյի ծոցի մուսսոնները։

Պասսատների և ցուրտ ծովային հոսանքների դերը Աֆրիկայի կլիմայում։ Յերաշտային շրջաններ։

Կլիմայական շրջաններ։ Կենտրոնական-Հասարակածային Աֆրիկա (Վերին Գվինեյա, Կոնգո գետի հովիտը)։ Պարբերական անձրևների շրջանի դասավորությունը հասարակածային շերտից դեպի հարավ և դեպի հյուսիս։ Չոր կլիմայի շրջանները։ Նեղոսի մերձգետյան շրջանը։

Մերձարևադարձային շրջաններ—Միջերկրածովյան ափերը, Աֆրիկայի հարավը։

Գետերը։ Ռելյեֆի աստիճանավորության ազդեցությունը գետերի բնույթի վրա։ Նավագնացությանը արգելք հանդիսացող սահանքներն ու ջրվեժները։ Վիկտորիա ջրվեժը Զամբեզի գետի վրա։ Աֆրիկական գետերի ջրառատությունը և հոսանքի սրընթացությունը։

Գետերը. Նեղոս, Կոնգո, Նիգեր, Զամբեզի։

Բուսական և կենդանական աշխարհը։ Բուսական գոտիների համընկնումը կլիմայականին։ Հասարակածային շրջան։ Հասարակածային խոնավ անտառների հզոր բնությունը։ Արևադարձային անտառների կենդանական աշխարհը։

Պարբերական անձրևների շրջանները։ Սավաններ։ Կենդանական աշխարհի հարստությունը։

Սուդանի արևադարձային տափաստանները։

Չոր կլիմայի շրջանները. Սահարա և Կալահարի անապատները։ Բուսականության և կենդանական տեսակների աղքատությունը։ Օազիսներ։

Մերձարևադարձային շրջաններ—Միջերկրածովյան բուսականություն։ Կենդանական աշխարհը։

Բնակչությունը։ Բերբեր-արաբներ, նեգրեր, բուշմեններ, եվրոպացիներ։

Աֆրիկայի քաղաքական քարտեզը։

Ֆրանսիական տիրապետությունները. Մարոկկո, Ալժիր, Թունիս, Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա, Հասարակածային Աֆրիկա, Մադագասկար։

Անգլիական տիրապետությունները. Անգլո-Յեգիպտական Սուդան, Բրիտանական Արևելյան Աֆրիկա, Բրիտանական Արևմտյան Աֆրիկա, Հարավ-Աֆրիկական Միություն (Քեյփտաուն, Յոհաննեսբուրգ)։

Բելգիական տիրապետությունները. Բելգիական Կոնգո։

Պորտուգալական և իսպանական տիրապետությունները։

Իտալական տիրապետությունները. Լիբիա, Էրիտրեյա, Սոմալի։ Հաբեշստանի հափշտակումը։

Կախյալ պետություններ. Յեգիպտոս (Կահիրե, Ալեքսանդրիա, Պորտ-Սաիդ), Լիբերիա։

IV. ԱՄԵՐԻԿԱ (10 ժամ)

Դիրքը, սահմանները, մեծությունը և ափերի գծագրությունը։

Ամերիկայի հեռավորությունը մյուս աշխարհամասերից։ Մոտիկությունն Ասիային՝ Բերինգի նեղուցի մոտ։ Մայր ցամաքի ձգվածությունը հյուսիսից հարավ։ Տերիտորիայի ծայրակետերը։ Հսկայական հեռավորություն ծայրակետերի միջև (Բարրոու հրվանդանից մինչև Հորն հրվանդանը)։ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի մեծությունը։

Հյուսիսային Ամերիկայի ծովափնյա գծի կտրտվածությունը, ծոցերի և թերակղզիների բացակայությունը Հարավային Ամերիկայում։ Ատլանտյան և Խաղաղօվկիանոսյան ծովափերի կտրտվածության տարբերությունը։

Ծովերը, ծոցերը և նեղուցները, նրանց բնույթն ու նշանակությունը։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոս, Հուդզոնի ծոց, Մեքսիկական ծոց, Կարաիբյան ծով, Մագելանի նեղուց, Կալիֆորնիայի ծոց, Բերինգի ծով, Բերինգի նեղուց։

Թերակղզիները։ Լաբրադոր, Ֆլորիդա, Կալիֆորնիա, Ալյասկա։

Կղզիները։ Բևեռային Արշիպելագ, Գրենլանդիա, Նյուֆաունդլենդ, Անտիլյան կղզիներ (Կուբա, Ցամայկա, Հայիթի և Պորտո-Ռիկո), Հրո յերկիր, Ալեության կղզիներ։

Պանամայի պարանոցը։ Պանամայի ջրանցքը։

Մակերևույթի կազմությունը։ Բարձրալեռնային արևմուտքը, միջին մասի դաշտավայրերը, հնագույն բարձրություններն արևելքում։

Հյուսիսային Ամերիկա։ Մայր ցամաքի արևմտյան լեռնոտ մասը, Կորդիլյերյան լեռնային սիստեմը։ Ժայռոտ, Կասկադյան, Սիյերա-Նևադա և Առափնյա լեռներ։ Միսսիսիպիի դաշտավայրը։ Հյուսիս-ամերիկյան Մեծ և Մեքսիկական բարձրավանդակները։ Կանադական հնագույն մասսիվը։ Ապալաչներ։

Հարավային Ամերիկա։ Կորդիլյերներ (Անդյան)։ Անդյան լեռների բարձրությունը և թույլ մատչելիությունը։ Կոտոպախի։ Ձնածածկ գագաթներ հասարակածային շրջանում։ Բրազիլիական բարձրավանդակը։ Ամազոնի և Լապլատայի դաշտավայրերը։

Օգտակար հանածոները։ Քարածխի (Ապալաչներում, Միսսիսիպիի դաշտավայրում, Ժայռոտ լեռների հյուսիսում), նավթի (Մեքսիկական ծոցի ափին, Կալիֆորնիայում, Մեքսիկայում, Վենեսուելայում, Կոլումբիայում), յերկաթի (Վերին լճի մոտ, Ապալաչներում, Նյուֆաունդլենդ կղզում, Բրազիլիայում) պաշարները։ Գունավոր մետաղների հանքավայրերը (Կորդիլյերյան լեռներում)։

Կլիման։ Բարեխառն կլիմայի գերակշռումը Հյուսիսային և տաք կլիմայինը՝ Հարավային Ամերիկայում։

Ծովային հոսանքները Ամերիկայի ափերի մոտ և նրանց ազդեցությունը կլիմայի վրա։ Ծովային հոսանքները. տաք՝ Գոլֆստրիմ և Բրազիլիական, ցուրտ՝ Լաբրադորական և Պերուական։

Հյուսիսային Ամերիկայի մեծ մասի կլիմայի ցամաքայնությունը։ Ջերմաստիճանի խիստ տատանումները՝ հյուսիսային և հարավային քամիների անարգել կերպով յերկրի ներսը թափանցելու հետևանքով։

Մեծ Հյուսիս-ամերիկյան բարձրավանդակի յերաշտային կլիման։ Մեքսիկական ծոցի ափերի, Կենտրոնական Ամերիկայի և Անտիլյան կղզիների տաք, խոնավ կլիման։

Հարավային Ամերիկայի արևադարձային շրջանը։

Հարավային Ամերիկայի արտաարևադարձային մասը։

Գետերը և լճերը։ Ատլանտյան օվկիանոսի ավազանի գետերի ջրառատությունը և յերկարությունը։ Խաղաղօվկիանոսյան ավազանի գետերի աննշան յերկարությունը և լեռնային բնույթը։

Գետերը։ Միսսիսիպի (Միսսուրի և Օհայո վտակներով), ս. Լավրենտիոսի, Յուկոն, Կոլումբիա, Կոլորադո, Ամազոն, Օրինոկո, Պարանա։

Լճերը։ Վերին, Հուրոն, Միչիգան, Էրի, Օնտարիո։ Նիագարայի ջրվեժը։

Հողերը։ Հյուսիսային Ամերիկայի հողային գոտիների միջօրեականական դասավորվածությունը։

Բուսական և կենդանական աշխարհը։ Բուսական և կենդանական տեսակների բազմազանությունը և բազմաքանակությունը։ Հյուսիսային Ամերիկայի անտառները։

Մերձբևեռային, բարեխառն-ցուրտ, ատլանտյան, տափաստանային, խաղաղօվկիանոսյան, մերձարևադարձային շրջաններ։

Արևադարձային խոշորագույն անտառների շրջան։ Ծառատեսակների բազմազանությունը։

Խոնավ տափաստանների շրջանները. սավաններ, լյանոսներ (Օրինոկո գետի ափերով) և Արգենտինյան տափաստանները (պամպա)։

Արևմտյան ծովափերի և Հրո Յերկրի բարեխառն-խոնավ շրջանը։

Անդյան առանձնահատուկ բուսական շրջանը։

Օգտակար բույսերը. քինաքինայի ծառ, կաուչուկ, կակաո, շաքարեղեգն, սուրճ, կարմիր ծառ, սև ծառ և այլն։ Կարտոֆել, յեգիպտացորեն, ծխախոտ, բամբակ։

Ընտանի կենդանիների փոքր քանակությունն Ամերիկայում մինչև նրա հայտնագործումը յեվրոպացիների կողմից։

Բնակչությունը։ Քանակը։ Բնակչության տեղաբաշխումը։ Խտությունը։ Ամերիկայում բնակվող ժողովուրդները։ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի հայտնագործումն ու գրավումը։ Յեվրոպական գաղութացման դերը։

Ստրուկ դարձած աֆրիկական նեգրերի ներմուծումը։ Նեգրերի ներկա դրությունը Հյուսիսային և Հարավային Ամերիկայում։ Կրեոլներ։ Տիրապետող լեզուները. անգլո-սաքսոնական և Լատինական Ամերիկայի։

Հյուսիսային Ամերիկայի երկրները. Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադա (Անգլիայի դոմինիոնը), Մեքսիկա։

Լատինական Ամերիկայի հանրապետությունները՝ ձևականորեն ինքնուրույն, իսկ փաստորեն կախված օտարերկրյա կապիտալից, գլխավորապես Միացյալ Նահանգներից և Անգլիայից։ Լատինական Ամերիկայի քաղաքական քարտեզը։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ (5 ժամ)

Աշխարհագրական դիրքը։ Օվկիանոսների միջև գտնվելու օգուտները։

Ռելյեֆը։ Ապալաչյան լեռներ։ Կենտրոնական հարթություն։ Կորդիլյերների սիստեմը, Միսսիսիպիի դաշտավայրը։

Օգտակար հանածոները.— Հարուստ լինելը քարածխով, նավթով, երկաթով, պղնձով և այլ մետաղներով։

Կլիման։ Ռելյեֆի, օվկիանոսների և վերջինների հոսանքների մոտիկության ազդեցությունը կլիմայի վրա։

Գետերը։ Միսսիսիպի (Միսսուրի վտակով), Կոլորադո, Կոլումբիա, ս. Լավրենտիոս, Հուդզոն։

Լճերը։ Վերին, Միչիգան, Հուրոն, Էրի և Օնտարիո։ Նիագարա ջրվեժը։ Հիդրոէներգիայով հարուստ լինելը և գետերի օգտակարությունը նավագնացության համար։

Հողերը, բուսականությունը։ Պրերիաներ։ Անտառային հարստությունները։ Կիսաանապատներ։

Բնակչությունը։ Քանակը, խտությունը։ Ազգային կազմը։

Սպիտակներ։ Հնդիկների մնացորդները։ Նեգրերը, նրանց ճնշված դրությունը։

Պետական կառուցվածքը։ Բուրժուական ֆեդերատիվ հանրապետություն։

Տնտեսությունը։ Ամենազարգացած կապիտալիստական երկիրն աշխարհում։ Հզոր արդյունաբերություն և գյուղատնտեսության բարձր զարգացում։ Արդյունաբերության բոլոր տեսակները զարգացած են։ Գյուղատնտեսության գլխավոր տեսակները. կաթնային և մսի անասնաբուծություն. դաշտավարու-

թյուն։ Մեծ լճերից դեպի արևմուտք և հարավ՝ ցորեն, եգիպտացորեն, շաքարի ճակնդեղ։ Հարավում՝ բամբակ, ծխախոտ, բրինձ, շաքարեղեգն, Ֆլորիդայում և Կալիֆորնիայում՝ ցիտրուսային բույսեր։

Քաղաքները։ Վաշինգտոն (մայրաքաղաքը), Նյու-Յորք, Չիկագո, Դետրոյտ, Ֆիլադելֆիա, Սան-Ֆրանցիսկո, Լոս-Անջելոս, Նոր-Օրլեան։

Գաղութային տիրապետությունները։ Ալյասկա, Պանամայի ջրանցքի գոտին, Պորտո-Ռիկո, Հավայան և Ֆիլիպինյան կղզիները։

Օժանդակություն II իմպերիալիստական պատերազմին, մասնավորապես Անգլիային։

V. ԱՎՍՏՐԱԼԻԱ (3 ժամ)

Դիրքը, սահմանները, մեծությունը և ափերի գծագրությունը։ Կղզիացած դրությունը։ Ծայրակետերը։

Ափերի գծագրության պարզությունը։ Ափերի թույլ մատչելիությունը ծովի կողմից։ Մեծ Բարյերային խութը (ռիֆ)։

Մեծ Ավստրալիական ծոց։ Կարպենտարիայի ծոց։ Տորրեսի նեղուցը, Բասսի նեղուցը։

Յորք թերակղզին, Տասմանիա, Նոր Գվինեա, Նոր Զելանդիա կղզիները։

Մակերևույթի կազմությունը։ Ռելյեֆի պարզությունը։ Արևելյան բարձրադիր մասը և Ավստրալիական Ալպեր ծալքավոր լեռները։ Մայր ցամաքի արևմտյան բարձրադիր մասը։

Օգտակար հանածոները։ Քարածուխ, ոսկի, արծաթ, երկաթ։

Կլիման։ Մայր ցամաքի գլխավորապես տաք կլիման։ Արևադարձային հյուսիսը և մերձարևադարձային հարավը։ Ավստրալիայի միջին մասերի ցամաքային կլիման։ Արևելյան խոնավ ծովափերը։ Ավստրալիայի տարվա եղանակները Եվրոպայի համեմատությամբ։

Գետերը և լճերը։ Գետերի և լճերի փոքրաքանակությունն ու սակավաջրությունը։ Գետերը. Մուրրեյ (Մարրի)— Դարլինգ վտակով։ Չորացող գետեր («կրիկներ»)։ Էյր լիճը։

Հողերը, բուսական և կենդանական աշխարհը։ Անապատների, տափաստանների և սավանների գերակշռությունը։ Արևմտյան անապատների անկենդանությունը։ Չոր տափաստաններ։ Մացառուտներ։

Հյուսիսային Ավստրալիայի արևադարձային անտառները։ Էվկալիպտային անտառները։ Հարավ-արևելյան Ավստրալիայի բուսականությունը։

Կենդանական աշխարհի յուրահատկությունը։ Ավստրալիական կենդանիների ծագման հնությունը և առանձնահատկությունները (պարկավորներ, ձվածիններ, թռչուններ)։

Յեվրոպական կուլտուրական բույսերի և ընտանի կենդանիների ակլիմատիզացիան։

Բնակչությունը։ Բնիկների վոչնչացումը գաղութացողների կողմից։ Բնիկների անհետացող մնացորդների քանակը և գոյության պայմանները։ Սպիտակ ազգաբնակչությունը։

Ավստրալիական Միությունը և Նոր Զելանդիան—Անգլիայի դոմինիոններ։

Տնտեսությունը։ Հողագործություն և խոշոր անասնաբուծություն։ Ոգտակար հանածոների արդյունահանությունը։ Ծանր արդյունաբերության թույլ զարգացումը։

Քաղաքներ։ Կանբերրա (մայրաքաղաքը), Սիդնեյ, Մելբուրն։

Ամբողջ դասընթացի կրկնություն (8 ժամ)։

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԽՍՀՄ-ի ֆիզիկական աշխարհագրությունը

(85 ժամ, վորից 11 ժամը կրկնության համար)

Առաջին մաս. ԽՍՀՄ-ի ֆիզիկո-աշխարհագրական ընդհանուր տեսությունը (31 ժամ)։

1. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը և սահմանները—2 ժամ։
2. Ծովերը—4 ժամ։
3. Ռելյեֆը—4 ժամ։
4. Հանածո հարստությունները—2 ժամ։
5. Կլիման—5 ժամ։
6. Ներքին ջրերը—4 ժամ։
7. Հողաբուսական գոտիները—5 ժամ։
8. Բնակչությունը—2 ժամ։

Կրկնություն—3 ժամ։

Յերկրորդ մաս.—Մարզային տեսություն (54 ժամ)։

1. ԽՍՀՄ-ի քաղաքական-վարչական քարտեզի տեսությունը—2 ժամ։
2. Յեվրոպական մասի հյուսիսը—3 ժամ։
3. » » կենտրոնը—4 ժամ։
4. » » արևմուտքը—3 ժամ։
5. Յեվրոպական մասի հարավը (Ուկրաինական ԽՍՀ, Մոլդավական ԽՍՀ և Ղրիմի ԱԽՍՀ)—4 ժամ։
6. Կովկաս—6 ժամ։
7. Պովոլժյե—4 ժամ։
8. Ուրալ—4 ժամ։
9. Արևմտյան Սիբիր—3 ժամ։
10. Արևելյան Սիբիր—3 ժամ։
11. Հեռավոր Արևելք—3 ժամ։
12. Ղազախստան—3 ժամ։
13. Միջին Ասիա—4 ժամ։

Ամբողջ դասընթացի կրկնություն—8 ժամ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ։ ԽՍՀՄ-ի ֆիզիկո-աշխարհագրական ընդհանուր տեսությունը (31 ժամ)

1. ԽՍՀՄ-Ի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ (2 ժամ)

ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը։ Տերիտորիայի մեծությունը։ Տերիտորիայի ձգվածությունն արևմուտքից-արևելք և հյուսիսից-հարավ։

ԽՍՀՄ-ի ցամաքային և ծովային սահմանները։ Սահմանակից պետությունները։ Սահմանների տնտեսական-քաղաքական և ստրատեգիական գնահատականը։

2. ԾՈՎԵՐԸ (4 ժամ)

Ծովափնյա գիծը։ Ծովերը, ծոցերը, և նեղուցները, կղզիները և թերակղզիները։ Ծովերի ֆիզիկո-աշխարհագրական բնութագրությունը։ Ծովերի ֆաունան։ Նրանց արդյունագործական և տրանսպորտային նշանակությունը։ Նավահանգստային քաղաքները։

Հյուսիսային ծովային ճանապարհի նվաճումը։ Արկտիկայի խորհրդային յուրացումը։ Բևեռային կայանները։ «Սիբի-

րյակովի» և «Չելյուսկինի» արշավանքները: Սիստեմատիկ ռեյսեր: Հյուսիսային բևեռի նվաճումը: «Հյուսիսային բևեռ» կայանի և «Սեդովի» դրեյֆները:

Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսը յեվ նրա մասերը

Ծովերը.—Բարենցի, Սպիտակ, Կարայի, Լապտևների, Արևելա-Սիբիրական և Չուկոտյան:

Նեղուցները.—Յուգորյան շար, Կարայի դռները, Մատոչկին շար, Վիլկիցկու և Բերինգի նեղուցները:

Ծոցերը.—Մեզենի, Պեչորայի, Դվինայի, Կանդալակշայի, Օբի խորշը և Խատանգայի ծոցը:

Կղզիները.—Կոլգույեվ, Ֆրանց Իոսիֆի Յերկիր, Նոր Յերկիր, Վայգաչ, Հյուսիսային Յերկիր, Նոր-Սիբիրյան, Լյախովյան և Վրանգելի կղզի:

Թերակղզիները.—Ձկնորսների, Կոլա, Կանին, Յամալ, Թայմիր և Չուկոտյան:

Նավահանգստային քաղաքները. — Մուրմանսկ, Արխանգելսկ, Նորդվիկ և Տիկսի:

Խաղաղ օվկիանոսը յեվ նրա մասերը

Ծովերը.—Բերինգի, Օխոտի և Ճապոնական:

Ծոցերը.—Գիժիգինյան և Պենժինյան խորշերը, Ուսսուրիական, Ամուրի և Պոսյետի ծոցերը:

Նեղուցները.—Թաթարական և Կուրիլյան:

Կղզիները.—Կոմանդորի, Սախալին, Շանթարյան:

Թերակղզիները.—Կամչատկա:

Նավահանգստային քաղաքները.—Պետրոպավլովսկ՝ Կամչատկայի վրա, Վլադիվոստոկ, Օխոտսկ, Սովետսկայա Գավան, Նագաևո.

Ատլանտյան օվկիանոսը յեվ նրա մասերը

Ծովերը.—Բալթիկ, Սև և Ազովի:

Ծոցերը.—Ֆիննական, Ռիգայի, Դնեպրո-Բուգի և Սիվաշ:

Նեղուցները.—Կերչի:

Կղզիները.—Կոտլին, Լավանսաարի, Բյորկե և Մոոնզունդյան արշիպելագի կղզիները—Սաարեմաա (Եզել), Խիումաա (Դագո) և այլն:

Թերակղզիները.—Ղրիմի և Կերչի:

Նավահանգստային քաղաքները.— Լենինգրադ, Օդեսսա, Սևաստոպոլ, Ռոստով, Նովոռոսիյսկ, Բաթումի, Նարվա, Տալլին, Պալդիսկի, Լիեպայա:

Կասպից ծովը (լիճը) յեվ նրա մասերը

Ծոցերը.—Կոմսոմոլեց, Կարա-Բողազ-Գյոլ և Կրասնովոդսկի ծոց:

Կղզիները.—Չելեկեն:

Թերակղզիները.—Մանգիշլակի և Աբշերոնյան:

Նավահանգստային քաղաքները.—Աստրախան, Մախաչ-կալա, Բաքու, Կրասնովոդսկ:

3. ՌԵԼՅԵՖԸ (4 ժամ)

ԽՍՀՄ-ի մակերևույթի ընդհանուր բնութագրությունը:

Արևելա-Յեվրոպական հարթությունը, նրա կազմությունն ու ծագումը. հին սառցապատման ազդեցությունը ռելյեֆի վրա: Կոլա-Կարելյան բյուրեղային զանգված, մորենային շրջան՝ հյուսիս-արևմտյան մասում, հարթավայրային-ձորաշատ մակերևույթ հարավում, ծովային նստվածքների շրջան՝ հյուսիսում և հարավ-արևելքում: Յեվրոպական մասի բարձրությունները, նրանց դասավորվածությունը և բարձրությունը:

Արևելա-Յեվրոպական հարթության ծայրամասի լեռները—Ղրիմի, Կովկասյան, Ուրալյան, Խիբինի: Նրանց կազմությունը, բարձրությունը և գլխավոր գագաթները:

Արևմտա-Սիբիրական դաշտավայրը, նրա չափերը և միօրինակությունը: Ղազախական լեռնաշարք, Ալթայ:

Թուրանի դաշտավայր: Ծալքավոր լեռներ Միջին Ասիայի հարավում և հարավ-արևելքում. Տյան-Շան, Պամիրո-Ալայ, Կոպետ-Դաղ: Քամու դերը Միջին Ասիայի ռելյեֆի կազմավորման գործում:

Արևելյան Սիբիր և Հեռավոր Արևելք: Միջին-Սիբիրական բարձրավանդակ, լեռնաշղթաներ: Կամչատկայի հրաբուխները:

Յեվրոպական մասի բարձրությունները. Տիմանի բլրաշարք, Վալդայ, Հյուսիսային Ուվալներ, Միջին-Ռուսական, Սմոլենսկո-Մոսկովյան, Դոնեցի բլրաշարք, Վոլինո-Պոդոլի պլատո. Մերձվոլգյան բարձրություն և Օբշչի Սիրտ:

Յեվրոպական մասի դաշտավայրերը. Դնեպրի, Մերձ-Բալթյան, Մերձ-Սևծովյան, Ոկա-Դոնյան, Մերձկասպյան, Կումա-Մանիչի իջվածքը։

Ասիական մասի բարձրավանդակները.— Միջին-Սիբիրական և Ջեյա-Բուրեինյան սարահարթ (պլատո)։

Ասիական մասի դաշտավայրերը.— Ոբինի և Բուռի, Արևմտա-Սիբիրական, Թուրանի և Ամուրո-Ուսսուրական։

Ղազախստանի և Միջին Ասիայի ծայրամասային լեռնաշղթաները. Ալթայ (Բելուխա գագաթով), Տյան-Շան (Խան-Թենգրի գագաթով և Ինիլչեկ սառցադաշտով)։ Ալայան, Անդրալայան (Լենինի անվան գագաթով), Պետրոս 1-ինի (Ստալինի անվան գագաթով և Ֆեդչենկո սառցադաշտով)։ Պամիր։ Կոպետ Դաղ։

Արևելա-Սիբիրական մասի լեռնաշղթաները. Սայանյան, Խամար-Դաբան, Յաբլոնովի, Ստանովոյ, Բուրեինյան, Վերխոյանսկի, Չերսկու, Կոլիմայի, Անադիրի, Կամչատկայի, Կլյուչևսկայա Սոպկա հրաբուխը և Սիխոտե-Ալին։

4. ԽՍՀՄ ՀԱՆԱԾՈ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (2 ժամ)

Քարածխի, նավթի, յերկաթի, պղնձի, մանգանի, բազմամետաղ հանքերի, վոսկու և պլատինի կարևորագույն հանքավայրերի տեղադրությունը ԽՍՀՄ-ում՝ կապված ռելյեֆի հետ։

Խորհրդային իշխանության որոք նոր հայտնաբերված հանածոների հանքավայրերը։ ԽՍՀՄ-ի տեղը մյուս պետությունների շարքում զանազան հանածոների պաշարի տեսակետից։

Գլխավոր շրջանները յեվ հանքավայրերը

Քարածուխ. Դոնբաս, Կուզբաս, Կարագանդա, Մերձմոսկովյան ավազան։

Վրաստանում՝ Տղվիբուլի և Տղվարչելի։

Նավթ. Կովկաս (Բագու, Գրոզնի, Մայկոպ), Եմբա, Հարավային Ուրալ (Իշիմբայեվո), Սախալին կղզի։

Յերկաթահանք. Կրիվոյ-Ռոգ, Կերչ, Կուրսկի մագնիսային անոմալիա, Ուրալ

Ադրբեջանում՝ Դաշքեսան։

Գունավոր մետաղներ. Ղազախստան, Ուրալ, Կովկաս, Միջին Ասիա, Արևելյան Սիբիր

Հայաստանում՝ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը։

5. ԽՍՀՄ-ի ԿԼԻՄԱՆ (5 ժամ)

ԽՍՀՄ-ի կլիմայի ընդհանուր բնութագրությունը։ Իզոթերմների և տեղումների բաշխման քարտեզը։ Ցամաքային կլիմայի ուժեղացումը արևմուտքից—արևելք։ Հյուսիսային Սառուցյալ, Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսների ու լեռների ծայրամասային դասավորվածության ազդեցությունը։

Արևելա-Յեվրոպական հարթության կլիման։ Ջերմության և տեղումների բաշխումը։ Մթնոլորտի ճնշումը և տիրապետող քամիները։ Ձմռան և ամռան առանձնահատկությունները։

Հարավային Ղրիմի և Անդրկովկասի կլիման։ Ջերմության և տեղումների բաշխումը։ Տարվա յեղանակների առանձնահատկությունները։ Այս շրջանների նշանակությունը ջերմասեր կուլտուրաների աճեցման և կուրորտների համար։

Արևմտա-Սիբիրական դաշտավայրի կլիման։ Ջերմության և տեղումների բաշխումը։ Տարվա յեղանակների առանձնահատկությունները։

Ղազախստանի և Միջին Ասիայի կլիման։ Տիրապետող քամիները։ Տարվա յեղանակների առանձնահատկությունները և տևողությունը։

Արևելյան Սիբիրի կլիման։ Կլիմայի առանձնահատկությունները։ «Ցրտի բևեռը»։ Ձմռան և ամռան բնութագրությունը։ Սառնամանիքներ ու «մշտնջենական» սառցապատումներ։

Խաղաղովկիանոսյան ծովափերի մուսսոնային կլիման։

6. ԽՍՀՄ-Ի ՆԵՐՔԻՆ ՋՐԵՐԸ (4 ժամ)

Ռելյեֆի և կլիմայի ազդեցությունը ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի գետերի վրա. նրանց ակունքները, թույլ իջվածքը և հոսանքը, վոլորապտույտ հունը, սառցապատումը, գարնանային վարարումները և ամռան ծանծաղումը։ Գետային ակունքների իրար մոտ լինելու նշանակությունը՝ գետային ավազանների միջև կապեր հաստատելու տեսակետից։ ԽՍՀՄ-ի ջրանցքները։

Կովկասի, Միջին Ասիայի և Սիբիրի գետերը ու նրանց ֆիզիկո-աշխարհագրական առանձնահատկությունները։ ԽՍՀՄ խոշորագույն գետերի յերկարությունը։

Լճերը, նրանց առաջացումը և ֆիզիկո-աշխարհագրական առանձնահատկությունները։

ԽՍՀՄ-ի ներքին ջրերի ոգտագործումը նավագնացության, էներգետիկայի և վոռոգման համար։

Գետերը. Նևա, Հյուսիսային Դվինա (Վիչեգդա և Սուխոնա վտակներով), Պեչորա (Իժմա և Ուսա վտակներով), Դնեպր (Բերեզինա, Պրիպյատ և Դեսնա վտակներով), Արևմտյան Դվինա, Նեման, Վոլգա (Շեքսնա, Օկա և Կամա վտակներով) և Կամա (Չուսովայա, Վյատկա և Բելայա վտակներով), Դոն (Դոնեց վտակով), Ուրալ, Օբ (Իրտիշ և Տոբոլ վտակներով), Ենիսեյ (Անգարա և Տունգուսկաներ վտակներով), Խատանգա, Լենա (Ալդան, Վիտիմ և Վիլյույ վտակներով), Կոլիմա, Ամուր (Շիլկա, Արգուն և Ուսսուրի վտակներով), Իլի, Սարի-Սու, Չու, Սիր-Դարյա, Ամու-Դարյա, Զերավշան, Մուրգաբ, Թերեք, Կուբան։

Անդրկովկասում՝ Սև ծով թափվող գետերը. Ռիոն, Բզիբ, Կոդոր, Ինգուր և Ճորոխ (Աջարիս-Ծղալի վտակով)։

Կասպից ծով թափվող գետերը. Քուռ և Արաքս. Քուռի վտակները՝ Արագվա, Յորա և Ալազան, Թառթառ, Խրամ (Դեբեդ վտակով)։ Արաքսի վտակները՝ Ախուրյան, Սև ջուր, Քասախ, Զանգու, Գառնի, Վեդի, Արևելյան Արփաչայ, Մեղրի, Բաղարչայ։

Լճերը. Իմանդրա, Լադոգա, Օնեգա, Չուդ, Իլմեն, Բելոյե, Էլտոն, Բասկունչակ, Կասպից, Սևանա, Արալյան, Իսիկ-Կուլ, Բալխաշ, Զայսան, Բայկալ, Խանկա, Խասան։

Ջրանցքները. Ստալինի անվան Սպիտակ-Բալթիկծովյան, Մարիինյան սիստեմ, Հյուս. Դվինայի, Մոսկվա-Վոլգա, Կումա-Մանիչի, Վոլգա-Դոնյան։

7. ԽՍՀՄ-ի ՀՈՂԱԲՈՒՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ (5 ժամ)

Տունդրայի, անտառատունդրայի, տայգայի, խառն անտառների, անտառատափաստանների, տափաստանների (սևահողային և չոր), անապատների և մերձարևադարձային շրջանների հողաբուսական գոտիները. բարձրալեռնային բուսականություն։ Հողերի, բուսականության և կենդանական աշխարհի բնութագրությունն ըստ առանձին գոտիների։

Տարբեր գոտիների կուլտուրական բույսերը։ Արժեքավոր կենդանիների արգելավայրեր և բուծարաններ։

Անդրկովկասի հողաբուսական գոտիների ուղղաձիգությունը։ Կենդանական և բուսական աշխարհի առանձնահատկությունները։

8. ԽՍՀՄ-ի ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

Բնակչության քանակը. ծնունդ և մահ։ Բնակչության աճը համեմատած մինչհեղափոխական Ռուսաստանի և մյուս յերկր-

ների հետ։ 1939 թվի մարդահամարի տվյալները 1926 թվի մարդահամարի տվյալների համեմատությամբ։ Բնակչության ավելացումը՝ Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան ԽՍՀՄ-ին միացնելու, Ֆինլանդիայի հետ սահմանների փոփոխության, Բուկովինայի Հյուսիսային մասը ԽՍՀՄ-ին հանձնելու, Բեսսարաբիան ԽՍՀՄ-ին վերադարձնելու, Եստոնական, Լատվիական և Լիտվական ԽՍՀ-ները ԽՍՀՄ-ի կազմի մեջ միավորելու հետևանքով։

Բնակչության խտությունը։ Մաքսիմալ և մինիմալ խտության շրջանները։ Բնակչության տեղաբաշխման մեջ առաջացած տեղաշարժերը։

Գյուղական և քաղաքային բնակչություն։ Քաղաքների աճը։

Բնակչության ազգային կազմը։

Առաջին մասի կրկնություն (3 ժամ)

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ։ Շրջանների տեսություն (54 ժամ)

ԽՍՀՄ-ի ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

ԽՍՀՄ-ի տերիտորիայի բաժանումը ֆիզիկո-աշխարհագրական շրջանների։

ԽՍՀՄ-ի քաղաքական բաժանումն ըստ Ստալինյան Սահմանադրության—միութենական հանրապետություններ, ավտոնոմ հանրապետություններ, յերկրամասեր, մարզեր։

2. ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍԸ (3 ժամ)

(Լենինգրադի մարզ, Կարելո-Ֆիննական ԽՍՀ, Եստոնական ԽՍՀ, Մուրմանսկի մարզ, Վոլոգդայի, Արխանգելսկի մարզեր, Կոմի ԱԽՍՀ և Կիրովի մարզ)։

Կազմը։ Սահմանները և դիրքը։ Ողողող ծովերը՝ Բարենցի և Սպիտակ։ Ծոցերը. Վիբորգի ծոցը, Ռիգայի ծոցը, Կանդալակշի խորշը, Կոլայի ծոցը։ Նեղուցները. Մատոչկին շար, Կարայի դուռ, Յուգորսկի շար։ Կղզիները. Կոտլին, Լավանսաարի, Բյորկե, Մոոնզունդյան արշիպելագը—Եզել և Դագո կղզիներով, Կոլգույեվ, Վայգաչ, Նոր Յերկիր, Ֆրանց-Իոսիֆի Յերկիր։ Թերակղզիները. Կոլա, Կանին։

Ռելյեֆը։ Կոլա թերակղզու բյուրեղային զանգվածը, հին

սառցապատման հետքերը, Կարելիայի լճային լանդշաֆտը, մորենային լանդշաֆտ հարավ-արևմուտքում. Դվինա-Պեչորյան Դաշտավայր: Տիմանի բլրաշարք: Հյուսիսային Ուվալներ: Հյուսիսային Ուրալ: Նարոդնայա (գագաթ):

Օգտակար հանածոները: Քարածուխ (Վորկուտա), նավթ (Ուխտա), տորֆ (ամենուրեք), յերկաթ (Կարելո-Ֆիննական ԽՍՀ) բոքսիտներ (Տիխվին), ապատիտներ (Խիբիններ):

Կլիման: Ավելի մեղմ՝ արևմուտքում, կլիմայի խստությունն արևելքում: Գոլֆստրիմի ազդեցությունը: Գետերի բացվելը և սառցապատվելը:

Տունդրայի և տայգայի գոտիների բուսականությունն ու հողերը: Անտառային հարստությունները, մորթի, վողողվող մարգագետիններ:

Լճերը: Իմանդրա, Սեգոզերո, Վիգոզերո, Օնեգա, Լադոգա, Բելոյե, Իլմեն, Չուդ, Պսկովի, Կուբենսկի:

Գետերը: Նիվա, Տուլոմա, Սունա—սահանքներով (Կիվաչ, Պոր-պորոգ), Վոլխով, Նևա, Սվիր, Շեքսնա, Մոլոգա, Պեչորա (Ուսա, Իժմա), Հյուսիսային Դվինա (Սուխոնա, Վիչեգդա), Վյատկա: Գետերի նշանակությունը որպես հաղորդակցության ճանապարհներ և հիդրոէներգիայի աղբյուրներ: Ջրանցքները. Ստալինի անվան Սպիտակ-Բալթիկ ծովի, Մարիինյան, Հյուսիս-Դվինյան:

Բնակչությունը: Վարչական բաժանումը: Բնակչության խտության բաշխումը: Ազգային կազմը: Կուլտուրական վերելքը խորհրդային իշխանության օրոք:

Տնտեսությունը: Հողագործության տեղաշարժը դեպի հյուսիս: Անասնաբուծություն: Անտառային, փայտամշակման և թղթի արդյունաբերություն ու անտառանյութերի արտահանում, տեքստիլ, սննդի, թերթաքարերի և ցեմենտի արդյունաբերություն: Ձկնային և գազանորսային արդյունագործություն: Հիդրոկայանները (Վոլխովի, Սվիրի, Նիվայի, Տուլոմայի):

Հաղորդակցության ճանապարհները: Գետերի գերակշռող նշանակությունը տրանսպորտում: Երկաթուղիներ: Ծովային տրանսպորտ:

Քաղաքները: Լենինգրադը որպես արդյունաբերական և կուլտուրական կենտրոն և ԽՍՀՄ-ի խոշորագույն նավահանգիստ: Սղոցարաններ, ցելյուլոզայի–թղթի հզոր կոմբինատներ

Վիբորգում, Կեքսհոլմում: Ձկան վերամշակման գործարան՝ Կեքսհոլմում, կոնսերվի գործարաններ՝ Սորտավալայում և Վիբորգում: Սղոցարաններ՝ Պետրոզավոդսկում: Մուրմանսկը և Արխանգելսկը որպես անտառարտահանման նավահանգիստներ, ձկնորսության և գազանորսային արդյունագործության կենտրոններ:

Քաղաքները: Կիրովսկ, Վոլոգդա, Կոտլաս, Կրոնշտադտ (ռազմական նավահանգիստ), Պետրոզավոդսկ, Սըկտիվկար, Նարյան-Մար, Կիրով, Վիբորգ (Վիպուրի), Կեքսհոլմ, Սորտավալա, Տալլին, Տարտու, Նարվա:

3. ԽՍՀՄ-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԵՆՏՐՈՆԸ (4 ժամ)

(Մոսկվայի, Ռյազանի, Տուլայի, Իվանովոյի, Գորկու, Յարոսլավլի, Կուրսկի, Օրյոլի, Տամբովի, Պենզայի, Վորոնեժի մարզերը):

Դիրքը և սահմանները: Աշխարհագրական դիրքի առավելությունները: Սևահողային և ոչ սևահողային տարածությունները:

Ռելյեֆը: Միջին-Ռուսական բարձրություն: Սմոլենսկո-Մոսկովյան բարձրություն: Օկա-Դոնյան դաշտավայր, Մեշչերա, Կլինսկո-Դմիտրովյան լեռնապար, Տամբովի հարթություն: Մորենային լանդշաֆտ հյուսիսում և ձորային՝ հարավում:

Օգտակար հանածոները: Քարածուխ (Մերձմոսկովյան ավազան), տորֆ (հյուսիսային մասում), յերկաթ (Կուրսկի մագնիսային անոմալիա, Տուլա, Լիպեցկ), ֆոսֆորիտներ:

Կլիման, բուսականությունը և հողերը: Դիրքը անտառային հյուսիսի և տափաստանային հարավի միջև: Անտառներ, անտառատափաստան, պոդզոլային հողեր, սևահողեր:

Գետերը: Վերին Վոլգա և Օկա իրենց վտակներով— Կոստրոմա, Ունժա, Վետլուգա, Կլյազմա, Մոսկվա, Դոն, Վորոնեժ, Սեյմ:

Բնակչությունը: Վարչական բաժանումը: Բնակչության խտության բաշխումը:

Տնտեսությունը: Ոչ հողային տարածությունը ԽՍՀՄ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության զարգացման առաջին շրջան: Արդյունաբերության նոր ճյուղեր (մետաղամշակման, մեքենաշինական, քիմիական) և հները (տեքստիլ, սննդի):

Խոշոր էլեկտրոկայաններ (Շատուրի, Ստալինոգորսկի, Կաշիրի):

Սևահողային կենտրոնի ինդուստրացումը։

Գյուղատնտեսության մասնագիտացումը սևահողային և վոչ սևահողային տարածություններում։

Հաղորդակցության ճանապարհները։ Մոսկվան վորպես յերկաթուղային խոշորագույն հանգույց։ Մոսկվա-Վոլգա ջրանցքը։

Քաղաքները։ Մոսկվա—ԽՍՀՄ-ի մայրաքաղաքը. Նրա քաղաքական, տնտեսական և կուլտուրական նշանակությունը. Մոսկվայի աճը։ Մյուս քաղաքները. Տուլա, Ռյազան, Ստալինոգորսկ, Իվանովո, Յարոսլավլ, Ռիբինսկ, Կոստրոմա, Գորկի, Կուրսկ, Որյոլ, Վորոնեժ, Տամբով, Բրյանսկ, Լիպեցկ, Պենզա։

4. ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ (3 ժամ)

(Բելոռուսական ԽՍՀ, Լատվիական ԽՍՀ, Լիտվական ԽՍՀ, Սմոլենսկի յեվ Կալինինի մարզեր)

Դիրքը և սահմանները։ Պանական Լեհաստանի ջախջախումը, Արևելյան Բելոռուսիայի ազատագրությունը, Լատվիայի և Լիտվայի խորհրդայնացումը և Բալթիկ ծովով սահմանակցություն Շվեդիայի հետ։ Սահմանակցություն Գերմանիայի հետ։

Ռելյեֆը։ Վալդայան բարձրությունը։ Միջին Ռուսական բարձրությունը։ Սառցապատման հետքերը հյուսիսում. լճեր, ճահիճներ, մորենային լանդշաֆտ։ Հարավում՝ Դնեպրի դաշտավայրը։ Պոլեսյե։ Պինսկի ճահիճները։

Օգտակար հանածոները։ Տորֆը վորպես շրջանի գլխավոր էներգետիկ ռեսուրսը, գիպս, կավիճ և այլն։

Կլիման։ Կլիմայի համեմատական մեղմությունն ու խոնավությունը։ Ատլանտյան ովկիանոսի (Բալթիկ ծովի) ազդեցությունը։

Գետերը։ Վոլգայի վերին հոսանքը, Արևմտ. Դվինա, Նեման, Լովատ, Դնեպր (Պրիպյատ և Բերեզինա վտակներով)։ Դնեպր-Բուգյան և Ոգինյան ջրանցքները։

Լճերը։ Սելիգեր, Վերին-Վոլգյան լճեր։ Բալթիկ ծովը և Ռիգայի ծոցը։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Ազգային կազմը։ Բնակչության խտության բաշխումը։

Տնտեսությունը։ Գյուղատնտեսության գերակշռող

նշանակությունը։ Տեխնիկական կուլտուրաներ։ Անասնաբուծություն։ Գյուղատնտեսական հումքի վերամշակությունը։ Անտառային (թղթի, ցելյուլոզայի, լուցկու) և փայտամշակման արդյունաբերություն։ Մեքենաշինություն։

Հաղորդակցության ճանապարհները։ Գետերի և Բալթիկ ծովի նշանակությունը։

Քաղաքները։ Մինսկ, Գոմել, Սմոլենսկ, Կալինին, Բելոստոկ, Գրոդնո, Բրեստ, Պինսկ, Ռիգա, Լիեպայա, Կաունաս, Վիլնյուս։

5. ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՐԱՎԸ (4 ժամ)

(Ուկրաինական ԽՍՀ, Մոլդավական ԽՍՀ յեվ Ղրիմի ԱԽՍՀ)

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԽՍՀ ՅԵՎ ՄՈԼԴԱՎԱԿԱՆ ԽՍՀ

Դիրքը և սահմանները։ Ուկրաինայի և Մոլդավական ԽՍՀ-ի աշխարհագրական դիրքը. արևմտյան սահմանի նշանակությունը։ Պանական Լեհաստանի ջախջախումը, Արևմտյան Ուկրաինայի ազատագրումը և անմիջական սահմանակցություն Գերմանիայի և Վենգրիայի հետ։ Հյուսիսային Բուկովինայի հանձնումը ԽՍՀՄ-ին, Բեսսարաբիայի վերամիավորումը ԽՍՀՄ-ին։ Մոլդավական ԽՍՀ-ի կազմվելը։ Սև և Ազովի ծովերը։ Սիվաշ։ Պերեկոպի պարանոցը։ Դանուբի գետաբերանը։

Ռելյեֆը։ Ռելյեֆի առանձին մասերի տարբերությունները։ Վոլինո-Պոդոլյան պլատո և Մերձդնեպրյան լեռնաշարը։ Կարպատյան լեռները։ Մերձդնեպրյան և Մերձսևծովյան դաշտավայրերը։ Դոնեցի բլրաշարքը։

Օգտակար հանածոները։ Քարածուխ (Դոնեցի ավազան), յերկաթահանք (Կրիվոյ Ռոգ), մանգան (Նիկոպոլ), անգիկ, աղ (Արտեմովսկ), նավթ (Դրոգոբիչ)։

Կլիման և բուսականությունը։ Կլիմայի բնութագրությունը. կլիմայական տարբերությունները։ Ջերմության և տեղումների բաշխումը։

Հողաբուսական հիմնական գոտիները. Պոլեսյե, անտառատափաստան և տափաստան։

Գետերը։ Դնեպր (Պրիպյատ, Դեսնա), Դոնեց, Հարավային Բուգ, Դնեստր, Պրուտ, Սան։ Գետախորշեր (լիման). Դնեպր-Բուգի և այլն։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Ազգային կազմը։ Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի վիճակը Ռումինիայի կազմում յեղած ժամանակ։

Տնտեսությունը։ Արդյունաբերության գերակշռող նշանակությունը. լեռնարդյունահանություն, մետաղագործական և ծանր մեքենաշինություն։ Թղթի, տեքստիլ և սննդի արդյունաբերություն։ Քիմիական արդյունաբերություն։ Ելեկտրոկայաններ. Դնեպրոգես, Շտերովկա։ Շաքարի արդյունաբերություն։

Գյուղատնտեսությունը։ Ցորեն, շաքարի ճակնդեղ, անասնաբուծություն, այգեգործություն, բամբակ, խաղող, մրգեր, ծխախոտ։

Հաղորդակցության ճանապարհները։ Յերկաթուղացանցի խտությունը։ Խոշորագույն հանգույցները։ Գետային և ծովային տրանսպորտ։

Քաղաքները։ Կիև, Խարկով, Ստալինո, Զապորոժյե, Դնեպրոպետրովսկ, Ոդեսսա, Նիկոլայեվ, Վորոշիլովգրադ, Մարիուպոլ, Խերսոն, Տիրասպոլ, Լվով, Տառնոպոլ, Լուցկ, Դրոգոբիչ, Ստանիսլավ, Քիշնեվ, Չերնովիցի, Ակկերման։

Ղրիմի ԱԽՍՀ։ Ղրիմի աշխարհագրական դիրքը։ Նրա բաժանումը ֆիզիկո-աշխարհագրական շրջանների. հյուսիսային տափաստանային Ղրիմ, Ղրիմի լեռները (նրանց բարձրությունը, լանջերի բնույթը և գագաթները), կարստային յերևույթներ։ Յայլա. գագաթները՝ Ռոման-Կոշ, Չաթիր-Դաղ։ Ղրիմի հարավային ափը (նրա կլիմայի և բուսականության առանձնահատկությունները)։ Հրաբխային տեսակների գետնի յերես դուրս գալը (Այու-Դաղ և Կարա-Դաղ)։

Յերկրաշարժներ։ Կերչի թերակղզին և յերկաթահանքեր։ Պերեկոպի պարանոցը։ Կերչի նեղուցը։

Ղրիմի բնակչությունը։ Ազգային կազմի բազմազանությունը։

Ղրիմը—ԽՍՀՄ-ի կենսարան։

Տնտեսությունը։ Այգեգործություն, ծխախոտաբուծություն և խաղողաբուծություն։ Ձկնորսություն։ Գյուղատնտեսական արդյունաբերություն։ Կերչի մետաղագործությունը։

Քաղաքները։ Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Կերչ, Թեոդոսիա, Յալթա։

6. ԿՈՎԿԱՍ (6 ժամ)

(Հյուսիսային Կովկաս—Նախակովկաս։ Կրասնոդարի յերկրամաս, Ռոստովի մարզ, Որջոնիկիձեյի յերկրամաս։ Ավտոնոմ ԽՍ հանրապետությունները—Դաղստանի, Կաբարդինո-Բալկարական, Հյուսիսային-Ոսեթական, Չեչենո-Ինգուշական։

Անդրկովկաս. Միութենական հանրապետություններ. Վրացական, Հայկական և Ադրբեջանական։ Ավտոնոմ ԽՍՀ-ներ—Աբխազական, Աջարական, Նախիջևանի)։

Աշխարհագրական դիրքը։ Տարածությունը. սահմանները։ Բաժանումը՝ Նախակովկասի, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի և Անդրկովկասի։ Հարավային սահմանի նշանակությունը պաշտպանության տեսակետից։

Ռելյեֆը։ Նախակովկաս։ Մերձկուբանի և Կումա-Թերեկի դաշտավայրեր։ Ստավրոպոլյան բարձրություն։ Հրաբխային տեսակների յելուստները (Բեշտաու, Ժելեզնայա, Մաշուկ)։

Կովկասյան գլխավոր լեռնաշղթան (Մեծ Կովկաս)։ Նրա կազմությունը և բաժանումն Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Կովկասի։ Կենտրոնական Կովկասի բարձրալեռնային շրջանը։ Գլխավոր գագաթները—Ելբրուս, Կազբեկ։

Սառցադաշտերը։ Կրեստովի (Վրացական ճանապարհ), Մամիսոնի (Ոսեթական ճանապարհ) լեռնանցքները։

Դարյալի կիրճը։ Դաղստան։ Թամանի թերակղզին։

Անդրկովկաս։ Ռիոն-Ինգուրի, Քուռ-Արաքսի և Արարատյան դաշտավայրերը։

Սուրամի լեռնային զանգվածը։ Հայկական լեռնաշխարհը և Փոքր Կովկասի լեռները։ Ղարաբաղի բարձրավանդակը։ Թալիշի լեռները։ Մուղանի տափաստանը։ Լենքորանի դաշտավայրը։ Ապշերոնյան թերակղզին։

Վուլկանիզմ և յերկրաշարժներ։ Արագած հրաբուխը։

Ոգտակար հանածոները։ Նավթ (Բաքու, Գրոզնի, Մայկոպ), մարգանեց (Ճիաթուրի), քարածուխ (Դոնբասի արևելյան մասը՝ Ռոստովի մարզում, Տղվարչելի և Տղիբուլի՝ Վրաստանում), յերկաթ (Դաշքեսանում՝ Ադրբեջան), պղինձ (Ալավերդի և Ղափան՝ Հայաստանում)։

Կլիման։ Կովկասի բաժանումը մասերի՝ ըստ կլիմայի, հողերի և բուսականության. Արևմտյան Նախակովկաս, Արևելյան Նախակովկաս, Կովկասյան Գլխավոր լեռնաշղթա, Կոլխիդա, Քուռ-

Արաքսի դաշտավայր և Հայկական լեռնաշխարհ. շրջաններից յուրաքանչյուրի կլիմայի, հողերի և բուսականության բնութագրությունը։ Կովկասի կենդանական աշխարհը։

Գետերը։ Դոն, Կուբան, Թերեք, Կումա, Սուլակ, Ռիոն, Ինգուր, Կոդոր, Բզիբ, Ճորոխ (Աջարիս Ծղալի վտակով), Քուռ և Արաքս իրենց վտակներով (Քուռի վտակները՝ Արագվա, Ալազան, Յորա, Խրամ, Թարթառ։ Արաքսի վտակները՝ Ախուրյան, Սև ջուր, Քասախ, Զանգու, Գառնի, Վեդի, Արևելյան Արփաչայ, Մեղրի, Բազարչայ)։ Սևանա լիճը, նրա նշանակությունը։

Կովկասի գետերի ռեժիմի առանձնահատկությունները։ Գետերի նշանակությունը, որպես էներգիայի և ոռոգման աղբյուրներ։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Ազգային կազմի բազմազանությունը։

Տնտեսությունը։ Նախակովկասի հացահատիկային և անասնապահական տնտեսությունը։ Անդրկովկասի այգեգործությունն ու մերձարևադարձային կուլտուրաները (թեյ, ցիտրուսային բույսեր, յեթերատուներ, խաղող, բամբակ, ծխախոտ, մրգեր)։ Գյուղատնտեսական հումքի վերամշակումը։ Ձկնակոնսերվի արդյունաբերությունը։ Նավթի արդյունաբերությունը և նրա նշանակությունը։ Նավթի արդյունահանման և վերամշակման շրջանները (Բաքու, Բաթումի, Գրոզնի, Մայկոպ)։ Մեքենաշինություն։ Էլեկտրոկայաններ։

Հաղորդակցության ճանապարհները։ Ջրային ճանապարհներ—ծովային և գետային. (նախագծված Վոլգա-Դոն ջրանցքը և կառուցվող Կումա-Մանիչի ջրանցքը), նրանց նշանակությունը։ Երկաթուղիները։ Գլխավոր լեռնանցքային ճանապարհները։

Քաղաքները։ Ռոստով (Դոնի վրա), Տագանրոգ, Նովոռոսիյսկ, Տուապսե, Մայկոպ, Վորոշիլովսկ, Օրջոնիկիձե, Պյատիգորսկ, Կիսլովոդսկ, Մախաչ-Կալա, Սոչի-Մացեստա, Բաքու, Կիրովաբադ, Ստեփանակերտ, Նախիջևան, Թբիլիսի (Թիֆլիս), Բաթումի, Սուխումի, Փոթի, Քութաիսի, Գորի, Երևան, Լենինական, Կիրովական։

7. ՊՈՎՈԼԺՅԵ (4 ժամ)

(Մարզերը. Կույբիշևի, Սարատովի, Ստալինգրադի։ Ավտոնոմ ԽՍ Հանրապետությունները. Չուվաշական, Մարիական, Մորդովական, Թաթարական, Պովոլժյեի Գերմանացիների, Կալմիկական)։

Ռելյեֆը։ Վոլգայի աջափնյա և ձախափնյա ռելյեֆի տարբերությունները։ Մերձվոլգյան բարձրությունը։ Ժիգուլները և Սամարայի աղեղը։ Երգեններ։ Անդրվոլգյան դաշտավայրը։ Ոբշչի Սիրտ։ Մերձկասպյան դաշտավայր։

Օգտակար հանածոները։ Տորֆ (հյուսիսում), յերկաթահանքեր, ֆոսֆորիտներ, այրվող թերթաքարեր, նավթ։

Կլիման։ Կլիմայի ցամաքային բնույթը, նրա փոփոխումը հյուսիս-արևմուտքից—հարավ-արևելք։ Տեղումների բաշխումը։ Ներքին Վոլգայի յերաշտային կլիման և նրա դեմ պայքարի միջոցները։ Չոր քամիները (խորշակ)։

Գետերը։ Վոլգա, նրա հոսանքի բնույթը տարբեր մասերում։ Վոլգայի վտակները. Կամա, Սամարա, (Ախտուբա՝ Վոլգայի բազուկը), Դոն, Խոպյոր, Մեդվեդիցա։ Վոլգայի տնտեսական նշանակությունը։ «Մեծ Վոլգայի» պրոբլեմը։

Ներքին Վոլգայի աղի լճերը (Էլտոն, Բասկունչակ) և նրանց նշանակությունը։

Հողաբուսական գոտիները։ Անտառային գոտի, անտառատափաստան և տափաստան։ Մերձկասպյան տափաստանների բնույթը։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Ազգային կազմի բազմազանությունը։ Խտության բաշխումը։

Տնտեսությունը։ Հողագործության գերակշռումը։ Պայքար կլիմայի յերաշտայնության դեմ։ Արհեստական ոռոգում։ Ձկնորսություն և ծովային արդյունագործություն։ Նավաշինարարություն, մեքենաշինություն։ Քիմիական և թղթի արդյունաբերություն։

Հաղորդակցության ճանապարհները։ Վոլգայի դերը։ Վոլգան կտրող յերկաթուղային մագիստրալները։

Քաղաքները։ Չեբոկսարի, Յոշկար-Օլա, Կազան, Կույբիշև, Ուլյանովսկ, Սարանսկ, Սարատով, Էնգելս, Ստալինգրադ, Աստրախան, Էլիստա։

8. ՈՒՐԱԼ (4 ժամ)

(Մարզերը. Սվերդլովսկի, Չելյաբինսկի, Չկալովի և Պերմի. Բաշկիրական ԱԽՍՀ և Ուդմուրտական ԱԽՍՀ)։

Ռելյեֆը։ Կարստային յերևույթներ Ուրալում. Լճեր և ճահիճներ։ Նախաուրալի և Անդրուրալի մակերևույթը։ Անտառային և տափաստանային Ուրալ։ Ուրալ (Նարոդնայա գագաթով)։ Դե-

նեժկին քար։ Կոնժակովյան քար։ Իրեմել։ Յաման Տաու։ Ուֆայի պլատո, Օբշչի Սիրտ, Մուգոջարի լեռներ։

Ուրալի օգտակար հանածոները։ Երկաթ, նրա գլխավոր հանքավայրերը՝ Մագնիտնայա սարը, Բլագոդատ, Վիսոկայա։ Պղինձ, նիկել, ոսկի, պլատին։ Նախաուրալի աղերը։ Քարածխի (Կիզել, Չելյաբինսկ) և նավթի (Իշիմբայևո) հանքավայրերը։

Կլիման։ Կլիմայի ցամաքային բնույթը։ Ջերմության և տեղումների բաշխումը։ Տեղումների պակասումը դեպի հարավ-արևելք։

Գետերը։ Ուրալի արևմտյան և արևելյան լանջերի գետերը։ Կամա, Վյատկա, Չուսովայա, Բելայա, Ուֆա, Ուրալ, Պեչորա, Տոբոլ, Իսետ։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Խտությունը և ազգային կազմը։ Քաղաքների աճը։

Տնտեսությունը։ Մետաղագործական և մեքենաշինական արդյունաբերության գերակշռումը։ Քիմիական (Բերեզնիկի) և թղթի (Կրասնոկամսկ) արդյունաբերությունը։ Գյուղատնտեսության ստորադաս վիճակը։ Մեղվաբուծություն։

Հաղորդակցության ճանապարհները։ Երկաթուղային հիմնական մագիստրալները։

Քաղաքները. Սվերդլովսկ, Պերմ, Ն. Տագիլ, Չելյաբինսկ, Մագնիտոգորսկ, Զլատոուստ, Ուֆա, Չկալով, Օրսկ, Իժևսկ։

9. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻԲԻՐ (3 ժամ)

(Օմսկի, Նովոսիբիրսկի մարզեր և Ալթայի երկրամաս)

Դիրքը և սահմանները։ Դիրքը, չափերը և սահմանները։

Ռելյեֆը։ Բաժանումն ըստ մակերևույթի բնույթի—Արևմտա-Սիբիրական դաշտավայր, Ալթայան լեռներ։

Արևմտա-Սիբիրական դաշտավայր։ Դաշտավայրի առաջանալը։ Փոքր թեքություն։ Ճահիճներ (Վասյուգանյե)։ Իշիմի, Բարաբինի և Կուլունդինի տափաստանները։ Հարավի լճերը (Չան, Կուլունդինյան)։ Գետերը՝ Օբ, Կատուն, Բիա, Տոմ, Իրտիշ, Տոբոլ։ Օբի խորշը։ Գետերի բնույթը։ Տելեցկոյե և Զայսան լճերը։ Տունդրայի, տայգայի, անտառատափաստանի և տափաստանի բնությունը։

Ալթայ։ Գլխավոր լեռնաշղթաները. Կատունյան բելոկներ՝

Բելուխա գագաթով և Չույսկի բելոկներ։ Օգտակար հանածոները։ Հանքային Ալթայը։ Բուսականությունը և կենդանական աշխարհը։ Սալաիր և Կուզնեցկի Ալա-Տաու։ Կուզնեցկի գոգավորություն և Կուզբաս։ Հողերը, բուսականությունը և կենդանական աշխարհը։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Ազգային կազմը և նրա տեղադրությունը։

Տնտեսությունը։ Քարածխի խոշոր հանքաշերտերը (Կուզբաս)։ Մետաղամշակման և քիմիական արդյունաբերության զարգացումը։ Ուրալ-Կուզնեցկի կոմբինատ։ Հողագործություն։ Անասնապահություն։ Անտառային արդյունաբերություն։

Հաղորդակցության ճանապարհները։ Երկաթուղային մագիստրալները. Սիբիրական և Թուրքսիբ։ Ջրային ուղիներ։

Քաղաքները։ Օմսկ, Տյումեն, Տոբոլսկ, Սալեգարդ, Նովոսիբիրսկ, Ստալինսկ, Տոմսկ, Կեմերովո, Բառնաուլ, Օյրոթ-Տուրա։

10. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻԲԻՐ (3 ժամ)

(Կրասնոյարսկի երկրամաս, Իրկուտսկի մարզ, Չիտայի մարզ, Բուրյաթ-Մոնղոլական ԱԽՍՀ և Յակուտական ԱԽՍՀ).

Դիրքը և սահմանները։ Դիրքը, տարածությունը և սահմանները։ Կղզիները՝ Հյուսիսային Երկիր և Նոր Սիբիրյան։

Ռելյեֆը։ Մակերևույթի ընդհանուր բարձրադիր բնույթը։ Միջին-Սիբիրական բարձրավանդակ։ Թայմիր թերակղզին։ Հրաբխային ծածկույթը։ Հյուսիսային Սիբիրական դաշտավայր։ Սառցադաշտերի աշխատանքի հետքերը։ Գետերի առանձնահատկությունները։ Ռելյեֆի ազդեցությունը գետերի բնույթի վրա։ Ենիսեյ գետը՝ Անգարա վտակով և Բայկալ լիճը. նրանց ֆիզիկո-աշխարհագրական բնութագրությունը. սահանքները և նրանց նշանակությունը ելեկտրիֆիկացիայի համար։ Օգտակար հանածոները։

Ենիսեյան բլրաշարքը։ Հին քայքայված լեռներ։ Օգտակար հանածոները։

Արևմտյան և Արևելյան Սայանները։ Մինուսինյան գոգավորությունը։

Խամար-Դաբան լեռնաշղթան։

Անդրբայկալյան լեռները։ Յաբլոնովի լեռնաշղթան որպես ջրբաժան Սառուցյալ և Խաղաղ օվկիանոսյան ավազանների գետերի միջև։ Վիտիմի և Ալդանի բարձրավանդակները։ Օգտակար հանածոները։

Ստանովոյ, Վերխոյանսկի, Չերսկու, Կոլիմայի և Անադիրի լեռնաշղթաները։

Կլիման։ Հավիտենական սառածություն։ Արևելյան Սիբիրի կլիմայական առանձնահատկությունները։ «Ցրտի բևեռ»։ Ամռան համեմատաբար բարձր ջերմաստիճանը։ Կլիմայի մայրցամաքայնությունը։

Գետերը և լճերը։ Ենիսեյ (Անգարա, Միջին և Ստորին Տունգուսկա և Կուրեյկա վտակներով)։ Լենա գետը (Վիլյույ, Վիտիմ, Օլեկմա և Ալդան վտակներով)։ Խատանգա, Օլենյոկ, Յանա, Ինդիգիրկա, Կոլիմա, Սելենգա։

Հողերը, բուսականությունը և կենդանական աշխարհը։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Ազգային փոքրամասնությունները։ Նրանց տնտեսության և կուլտուրայի վերելքը։

Տնտեսությունը։ Հողագործության տեղաշարժը դեպի հյուսիս։

Անասնապահությունը։ Մորթեղեն։ Անտառային արդյունաբերություն և փայտի արտահանություն (Իգարկա)։ Հիդրոէներգիայի հսկայական պաշարները։ Օգտակար հանածոները. ոսկի, քարածուխ, գրաֆիտ։

Հաղորդակցության ճանապարհները։ Գետերը։ Գետերի նշանակության բարձրացումը Հյուսիսային ծովային ճանապարհի յուրացման կապակցությամբ։ Սիբիրական երկաթուղային մագիստրալը և Արևելյան Սիբիրի խոշորագույն քաղաքային կենտրոնների դասավորվածությունը նրա վրա։

Քաղաքները։ Կրասնոյարսկ, Իգարկա, Աբական, Իրկուտսկ, Չիտա, Բոդայբո, Ուլան-Ուդե, Յակուտսկ, Վերխոյանսկ, Տիկսի։

11. ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ (3 ժամ)

(Պրիմորյեյի և Խաբարովսկի երկրամասերը)

Դիրքը և սահմանները։ Չափերը։ Ձգվածությունը հարավ-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Խաղաղ օվկիանոսի ափերում ունեցած դիրքի առանձնահատկությունները։ Մոտիկու-

թյունը իմպերիալիստական Ճապոնիային։ Ծովափնյա գծի բնույթը։ Կղզիները. Կոմանդորի, Վրանգելի, Շանթարյան, Սախալին։

Ռելյեֆը։ Մակերևույթի կազմության առանձնահատկությունները։ Գետերը։ Ամուր գետի ավազանը. Շիլկա, Արգուն, Զեյա, Բուրեյա և Ուսսուրի։ Ամուրի Գետախորշը (լիման), Անադիր գետը։ Լճերը. Խանկա, Կրոնոցկոյե, Խասան։

Բնական պայմանների բազմազանությունը և բաժանումը մասերի. Պրիամուրյե, Պրիմորյե, Սախալին և Օխոտի ծովափերը, Կամչատկա, Չուկոտյան Հյուսիսը։ Ծովերի միավորող դերը։

1. Պրիամուրյե։ Դիրքը։ Լեռները։ Ստանովոյ և Բուրեինյան լեռնաշղթաները։ Զեյա-Բուրեինյան պլատոն։ Միջին-Ամուրական դաշտավայրը։ Օգտակար հանածոները։ Լեռների բուսականությունը։

2. Պրիմորյե։ Դիրքի առանձնահատկությունները։ Մակերևույթի կազմությունը։ Սիխոտե-Ալին։ Օգտակար հանածոները։ Ստորին-Ամուրյան, Ուսսուրյան և Խանկայի դաշտավայրերը։ Պրիմորյեյի կլիման։ Կլիմայական պայմանների անհամապատասխանությունը աշխարհագրական դիրքին։ Ամռան մուսսոնային անձրևները։ Տայֆուններ։ Սառածության մեծ զարգացումը։ Լայնասաղարթ անտառներ և խառը տիպի կենդանական աշխարհ՝ հյուսիսային և հարավային տեսակների ներկայացուցիչներից։

3. Սախալին և Օխոտյան ծովափ։ Ծովափնյա դիրքը։ Մակերևույթի դիրքը։ Մակերևույթի կազմությունը։ Ցուրտ ծովի ազդեցությունը կլիմայի և բուսականության վրա։ Օգտակար հանածոները. քարածուխ և նավթ (Սախալինում)։ Բնակչությունը։ Տնտեսությունը. լեռնարդյունաբերական արդյունաբերություն, ձկնորսություն։

4. Կամչատկա։ Առանձնացած վիճակը և ծովերով շրջապատումը։ Հրաբուխները։ Կլյուչևսկայա Սոպկա, Ավաչինսկայա Սոպկա։ Բուսականության և կլիմայի բնութագրությունը։ Բնակչությունը և ձկնային արդյունաբերությունը։

5. Չուկոտյան — Անադիրյան երկրամաս։ Թույլ հետազոտվածություն։ Լեռները։ Կլիման, բուսականությունը և կենդանական աշխարհը։ Բնակչությունը։ Տնտեսությունը և ծովային արդյունագործությունը։

Բնակչությունը։ Քաղաքային բնակչության բարձր տոկոսը։ Փոքր խտությունը։ Ազգային կազմի բազմազանությունը։ Վերաբնակչությունը։

Տնտեսությունը։ Արդյունաբերության աճն ու զարգացումը։ Ատոմային, ձկնա-կոնսերվային, լեռնային (վոսկի, քարածուխ, նավթ, յերկաթ) արդյունաբերությունը։ Մորթեղենի արդյունաբերությունը։ Հողագործության անբարեր պայմանները՝ հյուսիսում և հարավում։

Հաղորդակցության ճանապարհները։ Յերկաթուղային մագիստրալ՝ հարավում, ծովային հաղորդակցություն՝ հյուսիսում և ջրային ճանապարհ՝ Ամուր գետով։

Քաղաքները։ Խաբարովսկ, Վլադիվոստոկ (նավահանգիստ), Վորոշիլով, Կոմսոմոլսկ, Նիկոլայեվսկ, Բիրոբիջան, Պետրոպավլովսկ, Ալեքսանդրովսկ, Սովետսկայա գավան, Օխոտսկ, Մագադան։

12. ՂԱԶԱԽՍՏԱՆ (3 ժամ)

(Ղազախական ԽՍՀ)

Դիրքը և սահմանները։ Դիրքը։ Տարածությունը։ Սահմանները։

Ռելյեֆը։ Մասերի բաժանումը. Մերձկասպյան և Թուրանի դաշտավայրերը։ Ղազախական լեռնաշարք, Բետ-Պակ-Դալա պլատո, հանքային Ալթայ և հյուսիսային Տյան-Շան։

Մերձկասպյան և Թուրանի դաշտավայրերը։ Մակերևույթի բնույթը. կավային կիսանապատներ—ավազուտներ։ Ավելի բարձրադիր մասերը. Ուստ-Ուրտ պլատոն և Տուրգայան սեղանակերպ յերկիրը։ Տափաստանային գետերի (Էմբա, Ուրալ) բնույթը։

Ղազախական լեռնաշարք։ Ռելյեֆի առանձնահատկությունները, լեռների քայքայվածությունը։ Գետերը և լճերը. Սարի-Սու գետը և Տենգիզ լիճն արևելքում, Չու, Սիր-Դարյա գետերը և Բալխաշ լիճը՝ հարավում։

Լեռնային Ղազախստանի ռելյեֆը. հանքային Ալթայ։ Զաիլիյան և Ջունգարյան Ալատաու։ Ջունգարյան դռները։

Օգտակար հանածոները։ Քարածուխ (Կարագանդա), պղինձ (Կոունրադ), բազմամետաղ (Ռիդդեր), նավթ (Էմբա)։

Կլիման։ Խիստ ցամաքայնություն։ Ձյունահողմեր։ «Տակիրներ»։ Աղուտ հողերը։ Բուսականությունը և կենդանական աշխարհը։

Բնակչությունը։ Վարչական բաժանումը։ Խտության բաշխումը։ Ազգային կազմը։

Տնտեսությունը։ Սև և մետաղագործական (գունավոր մետաղներ), արդյունաբերության գերակշռող դերը։ Տեղային բնակչության անցումը նստակյաց կյանքի և քոչվոր անասնապահությունից՝ հողագործության։ Ջրովի հողագործություն գետերի ափերին։ Նոր կուլտուրաների մշակում (կաուչուկատուներ և այլն)։

Հաղորդակցության ճանապարհները։ Թուրք-Սիբ։ Քարագանդային ճանապարհները։ Յերկաթուղային նոր շինարարություն։

Քաղաքները։ Ալմա-Աթա, Սեմիպալատինսկ, Կարագանդա, Ռիդդեր, Կոունրադ։

13. ՄԻՋԻՆ ԱՍԻԱ (4 ժամ)

(Միութենական հանրապետություններ. Թուրքմենական, Ուզբեկական, Տաջիկական և Կիրգիզական։ Կարակալպակական ԱԽՍՀ).

Դիրքը և սահմանները։ Դիրքը։ Մեծությունը։ Սահմանները։ Բնական պայմանների զանազանակերպությունը։ Մասերի բաժանումը, դաշտավայր՝ հյուսիս-արևմուտքում և Տյան-Շանի ու Պամիրի լեռնաշղթաները՝ հարավ-արևելքում։

Ռելյեֆը։

1. *Միջին Ասիայի դաշտավայրերը*։ Կլիմայական պայմանները։ Ավազներ։ Կարա-Կում և Կզըլ-Կում անապատները։ Ուզբոյի չոր հունը և Սարա-Կամիշյան գոգավորությունը։ Գետերը և նրանց նշանակությունը։ Ամու-Դարյա, Սիր-Դարյա, Վախշ, Զերավշան, Չիրչիկ, Իլի, Մուրղաբ, Տեջեն գետերը. Արալի ծովը։

2. *Տյան-Շան*։ Գլխավոր լեռնաշղթաները՝ Կոկշալ-Տաու, Զերավշանի, Գիսարի։ Խան-Թենգրի գագաթը։ Սառցադաշտեր։ Իսիկ-Կուլ լիճը։ Օգտակար հանածոները։ Ֆերգանայի հովիտը։

3. *Պամիրո-Ալայան մասիվը*։ Ալայան և Զաալայան և Պետրոս I-ի լեռնաշղթաները։ Սառցադաշտերը (Ֆեդչենկո)։ Միջլեռնային հովիտները։ Արևելյան և Արևմտյան Պամիրը։ Գլխավոր գագաթները՝ Ստալինի անվան և Լենինի անվան։ Լեռնային նեղվածքները և գետերը։ Կոպետ-Դաղ լեռները։ Օգտակար հանածոները. նավթ (Չելեկեն կղզու վրա և Ներբիտ-Դաղում), միրաբիլիտներ (Կարա-Բողազ-Գոլ ծոցում), նավթ և քարածուխ (Ֆերգանայում)։ Կլիմայի ցամաքայնությունը։ Բուսական և կենդանական աշխարհը։ Ծծմբահողեր։

Կլիման։ Նրա խիստ ցամաքայնությունն ու չորայնությունը։ Տարվա յեղանակների բնութագրությունը։ Ֆերգանայի հովտի կլիմայի բնութագրությունը։

Բնակչությունը։ Քաղաքական-վարչական բաժանումը։ Խտությունը և ազգային կազմը։

Տնտեսությունը։ Հողագործության գերակշռումն արհեստական վոռոգման պայմաններում։ Ոազիսներ (Մերվի, Խորեզմի)։ Բամբակամշակություն։ Այգեգործություն։ Շերամապահություն։ Անասնապահություն։ Գյուղատնտեսական և լեռնային արդյունաբերություն։ Մեքենաշինության զարգացումը։ Հաղորդակցության ճանապարհները։ Յերկաթուղային մագիստրալները։ Ջրային տրանսպորտի թույլ զարգացումը, Քարավանային ճանապարհները։

Քաղաքները։ Աշխաբադ, Կրասնովոդսկ, Չարջույ, Տաշքենդ, Սամարկանդ, Տուրտկուլ, Ստալինաբադ, Խորոգ, Ֆրունզե։

Ամբողջ դասընթացի կրկնություն—(8 ժամ)

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԽՍՀՄ-ի տնտեսական աշխարհագրություն

(102 ժամ, վորից 10 ժամ կրկնության համար)

Առաջին մաս. ԽՍՀՄ-ի ճյուղային տնտեսությունը (25 ժամ)

1. ԽՍՀՄ-ի տնտեսության ընդհանուր բնութագրությունը —4 ժամ.
2. ԽՍՀՄ-ի արդյունաբերության աշխարհագրությունը —10 ժամ.
3. ԽՍՀՄ գյուղատնտեսության աշխարհագրությունը —6 ժամ.
4. ԽՍՀՄ տրանսպորտի աշխարհագրությունը —5 ժամ.

Յերկրորդ մաս. ԽՍՀՄ-ի շրջանային տնտեսությունը (67 ժամ)

I. ՌՍՖՍՀ ընդհանուր տեսություն—1 ժամ.

1. ՌՍՖՍՀ Յեվրոպական մասի կենտրոնը—8 ժամ.
2. » » » հյուսիս-արևմուտքը —2 ժամ.
3. ՌՍՖՍՀ Յեվրոպական մասի հյուսիս-արևելքը —2 ժամ.
4. ՌՍՖՍՀ Յեվրոպական մասի արևմուտքը —2 ժամ.
5. Պովոլժյե . . . . —6 ժամ.
6. Ղրիմի ԱՍՍՀ . . . . . . , . —1 ժամ.
7. Ներքին Դոն և Հյուսիսային Կովկաս . . —5 ժամ.
8. Ուրալ . . . . —6 ժամ.
9. Արևմտյան Սիբիր . . . , . . —3 ժամ.
10. Արևելյան » . . . . —3 ժամ.
11. Հեռավոր Արևելք . . . . . . —3 ժամ.

II. Ուկրաինական ԽՍՀ . . . . . . —5 ժամ.

III. Բելոռուսական ԽՍՀ . . . . . . —2 ժամ.

IV. Անդրկովկասի միութենական հանրապետությունները —7 ժամ.

V. Ղազախական ԽՍՀ . . . . —2 ժամ.

VI. Միջին Ասիայի միութենական հանրապետությունները —4 ժամ.

VII. Կարելո-Ֆիննական ԽՍՀ— . . . . —1 ժամ.

VIII. Մոլդավական ԽՍՀ . . . . . . —1 ժամ.

IX. Մերձբալթյան միութենական հանրապետություններ —2 ժամ.

X. Միջմարզային կապերը . . . . . —1 ժամ.

Ամբողջ դասընթացի կրկնությունը . . . —10 ժամ։

I մաս. ԽՍՀՄ ճյուղային տնտեսությունը (25 ժամ)

1. ԽՍՀՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

Մինչ պատերազմյան Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ստրուկտուրան։

ԽՍՀՄ-ի համեմատումը մինչհեղափոխական Ռուսաստանի և կապիտալիստական խոշորագույն յերկրների հետ։

Տնտեսական անկախության գծով ձեռք բերված հաղթանակը։ ԽՍՀՄ—Յեվրոպայում առաջին, և աշխարհում՝ յերկրորդ ինդուստրիալ յերկիրն է։

Արտադրության տեղաբաշխման գծով տեղի ունեցած տեղաշարժերը ԽՍՀՄ-ում։

III հնգամյակի հիմնական խնդիրները։

2. ԽՍՀՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

ա. Արդյունաբերության ընդհանուր բնութագրությունը։ ԽՍՀՄ-ի սոցիալիստական արդյունաբերության բացառիկ արագ զարգացումը։ Համեմատում կապիտալիստական յերկրների հետ։

Նոր արտադրությունների յուրացումը։ Նոր արդյունաբերական ձեռնարկությունների չափերը, նրանց տեխնիկական մակարդակի բարձրությունը։ Արդյունաբերության նշանակությունը յերկրի պաշտպանության համար։ Արդյունաբերությունը III հնգամյակում։

բ. Էներգետիկա։ Էներգետիկայի նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ։ Էներգիայի հիմնական աղբյուրները և նրանց գնահատականը։ ԽՍՀՄ-ի էներգոռեսուրսների չափերն այլ յերկրների համեմատությամբ։ Էներգոռեսուրսների բաշխումը ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա։ Գլխավոր քարածխային ավազանները և նրանց բնութագրությունը։ Նավթ, տորֆ, թերթաքարեր, անտառներ։ Հիդրոէներգոռեսուրսներ։ Էլեկտրիֆիկացիայի նշանակությունը ԽՍՀՄ-ի համար։ ԳՈԷԼՐՈ-յի պլանը և նրա կենսագործումը։ Էներգետիկան III հնգամյակում։

գ. Սև մետաղագործություն։ Սև մետաղագործության նշանակությունը։ Սև մետաղագործության գլխավոր շրջանները. Հարավ, Կենտրոն, Արևելք (Ուրալ, Կուզբաս)։ Յերկաթի նոր հանքավայրերը։ Սև մետալուրգիան III հնգամյակում։

դ. Գունավոր մետաղագործություն։ Գունավոր մետաղագործության նշանակությունը։ Պղնձի, ցինկի, արճճի, նիկելի, ալյումինի պաշարների տեղադրությունը և արտադրությունը։ Գունավոր մետալուրգիան III հնգամյակում։

ե. Մեքենաշինություն։ Մեքենաշինության նշանակությունը։ Մեքենաշինությունը նախահեղափոխական Ռուսաստանում և այժմ, Մեքենաշինության գլխավոր շրջանները. Կենտրոն, Լենինգրադ, Ուկրաինական ԽՍՀ, Ուրալ և Պովոլժյե։ Մեքենաշինությունը III հնգամյակում։

զ. Քիմիական արդյունաբերություն։ Քիմիական արդյունաբերության կազմը և նրա նշանակությունը։ Քիմիական արդյունաբերությունը նախահեղափոխական Ռուսաստանում և այժմ։ Քիմիական հումքը և նրա տեղադրությունը։ Քիմիական

արդյունաբերության գլխավոր շրջանները։ III հնգամյակը—քիմիայի հնգամյակ։

է. Անտառամշակման արդյունաբերություն։ Անտառամշակման արդյունաբերության նշանակությունը։ Անտառամշակման արդյունաբերությունը նախահեղափոխական Ռուսաստանում և այժմ։ Անտառաքիմիական, թղթի և փայտամշակման արդյունաբերություն։ Նրանց տեղադրությունը։ Անտառարդյունաբերությունը III հնգամյակում։

ը. Տեքստիլ արդյունաբերություն։ Տեքստիլ արդյունաբերության կազմը։ Ճյուղերը. բամբակեղենի, վուշի, բրդի, մետաքսի և նրանց տեղադրությունը (հին և նոր շրջաններ)։ Տեքստիլ արդյունաբերությունը III հնգամյակում։

թ. Սննդի արդյունաբերություն։ Սննդի արդյունաբերության կարևոր ճյուղերը և նրանց տեղադրությունը։ Սննդի արդյունաբերության սերտ կապը գյուղատնտեսության հետ։ Սննդի արդյունաբերությունը III հնգամյակում։

3. ԽՍՀՄ-ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (6 ժամ)

ա. Գյուղատնտեսության ընդհանուր բնութագրությունը։ ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ ԽՍՀՄ-ը մանր և փոշիացած գյուղատնտեսական յերկրից աշխարհում ամենախոշոր գյուղատնտեսական յերկիր դառնալը։ Գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը։ Գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերը։ Գյուղատնտեսությունը III հնգամյակում։

բ. Հացահատիկային տնտեսություն։ Հացահատիկային կուլտուրաների նշանակությունը։ Պայքար 7—8 միլիարդ փութ հացի համար։ Հացահատիկային կուլտուրաների և առանձնապես ցորենի տեղաշարժը դեպի հյուսիս։ Առաջներում գյուղատնտեսության գծով սպառող շրջանների՝ այժմ արտադրող դառնալը։ Հացահատիկային կուլտուրաներ. ցորեն, հաճար, գարի, կորեկ, յեգիպտացորեն, բրինձ և նրանց տեղադրությունը։ Հացահատիկային տնտեսությունը III հնգամյակում.

գ. Տեխնիկական կուլտուրաներ։ Տեխնիկական կուլտուրաների նշանակությունը։ Նրանց սերտ կապը սննդի և թեթև արդյունաբերության հետ։ Թելավոր կուլտուրաներ. բամբակ,

վուշ, կանեփ, կենաֆ, կենդիր, ռամի։ Յուղատու կուլտուրաներ. արևածաղիկ, սոյա։ Ձիթային արդյունաբերության մեջ բամբակի և կանեփի սերմերի օգտագործումը։ Շաքարի ճակնդեղ։ Կարտոֆիլ։ Այլ տեխնիկական կուլտուրաներ. ծխախոտ, թեյ, կաուչուկատուներ։ Տեխնիկական կուլտուրաների տեղադրությունը։ Տեխնիկական կուլտուրաները III հնգամյակում։

դ. Անասնաբուծություն։ Անասնաբուծության նշանակությունը ժողովրդական տնտեսության մեջ։ Ապրանքային անասնաբուծության աճը։ Կերի բազայի նշանակությունն անասնաբուծության զարգացման և ուղղության համար։ Կերի տեսակները։ Կերի բազայի ընդարձակումը ԽՍՀՄ-ի տարբեր մասերում։ Անասնաբուծության շրջանային մասնագիտացումը։ Անասնաբուծությունը III հնգամյակում։

ե. Գյուղատնտեսության այլ ճյուղերը։ Որսորդություն։ ԽՍՀՄ-ի մորթեղենով հարուստ լինելը։ Մորթեղենի արդյունագործության հիմնական շրջանները։ Ձկնորսություն։ ԽՍՀՄ-ի ձկնային հարստությունները։ Ձկնարդյունաբերության գլխավոր շրջանները։ Ձկնարդյունաբերությունը III հնգամյակում։

զ. Գյուղատնտեսության շրջանային մասնագիտացումը։ Շրջանային մասնագիտացման իմաստը։ ԽՍՀՄ-ի բաժանումը գյուղատնտեսական գոտիների (քարտեզի տեսություն)։

4. ԽՍՀՄ-Ի ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(5 ժամ)

ա. Տրանսպորտի նշանակությունը։ Տրանսպորտը և աշխատանքի աշխարհագրական բաժանումը։ Տրանսպորտի հատուկ նշանակությունը մեր յերկրի համար։ Տրանսպորտի պաշտպանական նշանակությունը։ Տրանսպորտի տեսակները և նրանց համեմատումը միմյանց հետ։ Տրանսպորտի վերակառուցումը ԽՍՀՄ-ում։ Տրանսպորտը III հնգամյակում։

բ. Յերկաթուղային տրանսպորտ։ «ԽՍՀՄ-ն —յերկաթուղային մեծ պետություն է» (Ստալին)։ Յերկաթուղային ցանցի ձգվածությունը։ Յերկաթուղային ցանցի խտությունը Միության տարբեր մասերում։ Յերկաթուղային գլխավոր մագիստրալները և հիմնական բեռնահոսանքները։ Յերկաթուղային նոր շինարարություն։ Յերկաթուղային տրանսպորտը III հնգամյակում։

գ. Գետային տրանսպորտ։ Գետային տրանսպորտի առավելությունները յերկաթուղայինի համեմատությամբ։ Գետային տրանսպորտի աշխարհագրությունը։ Վոլգա-Նևա սիստեմի, Հյուսիսային Դվինայի, Դնեպրի, Սիբիրի և Հեռավոր Արևելքի գետերի բեռնահոսանքները։ Գետային նավատորմիղի ուժեղացումը, գետային նավահանգիստների կառուցում, ջրանցքների կառուցում։ Գետային տրանսպորտը III հնգամյակում։

դ. Ծովային տրանսպորտ։ Արտաքին ծովային ապրանքաշրջանառություն։ Մեծ և Փոքր կաբոտաժ։ Ծովեր և նավահանգիստներ։ Ծովային տրանսպորտի զարգացումը ԽՍՀՄ-ում։ Հյուսիսային ծովային ճանապարհի յուրացումը։ Ծովային տրանսպորտը III հնգամյակում։

ե. Ավտոճանապարհային տրանսպորտ։ Անուելս տրանսպորտի նշանակությունը։ Ավտոճանապարհային տրանսպորտի զարգացումը։ Նոր ճանապարհներ։ Ավտոմոբիլային պարկի աճը III հնգամյակում։

զ. Ավիատրանսպորտ։ Ավիատրանսպորտի զարգացումը և նրա նշանակությունը՝ Խորհրդային Միության մեծ տարածությունները հաղթահարելու տեսակետից։ Կարևորագույն ավիագծերը։ Ավիատրանսպորտը III հնգամյակում։

Յերկրորդ մաս. ԽՍՀՄ-ի շրջանային տեսությունը
(67 ժամ)

ԽՍՀՄ-ի հիմնական քաղաքական բաժանումն ըստ Ստալինյան Սահմանադրության։

Տասնվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները։

I. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՌԽՖՍՀ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

ՌԽՖՍՀ-ն Խորհրդային Միության Հանրապետությունների ամենախոշորագույնն է։ Տերիտորիայի մեծությունը և բնակչության քանակը։ ՌԽՖՍՀ-ի գլխավոր աշխարհագրական մասերը. Յեվրոպական մաս, Արևմտյան և Արևելյան Սիբիր, Հեռավոր Արևելք։

Բնության բազմազանությունը և հարստությունը. անտառներ, մուշտակավոր կենդանիներ, ձկներ, ոգտակար հանածոներ, հիդրոռեսուրսներ:

ՌՍՖՍՀ-ն բազմազգ հանրապետություն ե:

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Մոսկվա:

ՌՍՖՍՀ-ի տեսակարար կշիռը և առաջատար նշանակությունը ընդհանուր Միութենական տնտեսության մեջ: ՌՍՖՍՀ տնտեսական կապը Միութենական մյուս հանրապետությունների հետ:

ՌՍՖՍՀ-ի մարզերի, յերկրամասերի և հանրապետությունների խմբավորումը:

1. ՌՍՖՍՀ-ի Յեվրոպական մասի կենտրոնը (8 ժամ)

Ա. Վոչ սևահողային կենտրոն.

(Մոսկվայի, Իվանովի, Յարոսլավի, Գորկու, Ռյազանի և Տուլայի մարզերը)

Վոչ սևահողային կենտրոնի բնության և տնտեսության ընդհանուր գծերը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶ

Դիրքը Վոլգայի և Ոկայի միջագետքում: Գետերը: Հողերը և կլիման: Ոգտակար հանածոները. տորֆ, ֆոսֆորիտներ (Վոսկրեսենսկու մոտ), շինանյութեր: Անտառներ:

Բնակչության բարձր խտությունը և քաղաքային բնակչության մեծ տոկոսը:

Արդյունաբերության տեսակարար կշիռը Մոսկվայի մարզի տնտեսության մեջ: Գլխավոր ճյուղերը. մեքենաշինական, քիմիական և տեքստիլ: Դրանցից յուրաքանչյուրի տեղադրությունը: Նոր արտադրությունների յուրացումը: Մանր արդյունաբերություն: Ելեկտրիֆիկացիա:

Գյուղատնտեսության մասնագիտացումը:

Հաղորդակցության ճանապարհները—յերկաթուղային և ջրային: Մոսկվան խոշորագույն յերկաթուղային հանգույց: Մոսկվա-Վոլգա ջրանցքը:

Ք ա ղ ա ք ն ե ր ը: Մոսկվա, Կոլոմնա, Նոգինսկ, Պոդոլսկ, Որեխովո-Զույեվո:

ԻՎԱՆՈՎԻ ՄԱՐԶ

Դիրքը Կլյազմայի ավազանում: Ոկայի և Վոլգայի տրանսպորտային նշանակությունը: Հողերը և կլիման: Բնական պայ-

մանների գնահատությունը գյուղատնտեսության համար: Ոգտակար հանածոները. տորֆ, ֆոսֆորիտներ: Անտառներ:

Քաղաքային բնակչության բարձր տոկոսը:

Արդյունաբերության բարձր տեսակարար կշիռը մարզի տնտեսության մեջ: Տեքստիլ արդյունաբերությունը: Տեքստիլ արդյունաբերությունը սպասարկելու համար առաջացած ճյուղերը՝ ոսլայի, քիմիական, տեքստիլ մեքենաշինության: Մարզի ելեկտրիֆիկացիան և նրա հետևանքով առաջացած ճյուղերը. տորֆամշակման, տորֆամեքենաների և եքսկավատորների արտադրություն: Ճյուղեր՝ տեղական հումքի վրա. ապակու, սղոցարանային:

Գունավոր մետաղների մշակությունը Կոլչուգինոյում: Տնայնագործական արհեստագործություններ:

Գյուղատնտեսությունը: Վուշակաթնային, մերձքաղաքային և հացահատիկա-կարտոֆելա-այգեգործական տնտեսության շրջանները:

Յերկաթուղային տրանսպորտի նշանակությունը մարզի համար:

Ք ա ղ ա ք ն ե ր ը: Իվանովո, Վլադիմիր:

ՅԱՐՈՍԼԱՎԻ ՄԱՐԶ

Դիրքը: Գետերի նշանակությունը (Վոլգա, Շեքսնա, Մոլոգա, Կոստրոմա): Հողերը և կլիման: Ոգտակար հանածոները. տորֆ, ֆոսֆորիտներ: Անտառներ:

Աջափնյա և ձախափնյա մասերի տարբերությունը բնակվածության և ինդուստրացման տեսակետից: Հիմնական ինդուստրիալ կենտրոնները. Յարոսլավլ, Ռիբինսկ և Կոստրոմա: Նրանց աշխարհագրական դիրքի հարմարությունը: Արդյունաբերության հին ճյուղերը (տեքստիլ, սղոցարանային) և նորերը (մեքենաշինություն, նավաշինություն, ռեզինոքիմիական և այլն): Տնայնագործական արհեստագործություններ: Ուգլիչի և Ռիբինսկի հիդրոկայանների շինարարությունը: Գյուղատնտեսությունը. կաթնային՝ հյուսիսում, սերմնաբուծական՝ Մոլոգո-Շեքսնինյան միջագետքում, հացահատիկա-բանջարաբուծական-կաթնային՝ հարավում: Անտառային տնտեսություն:

Յերկաթուղային և ջրային տրանսպորտ:

Ք ա ղ ա ք ն ե ր ը: Յարոսլավլ, Ռիբինսկ, Կոստրոմա:

ԳՈՐԿՈՒ ՄԱՐԶ

Դիրքը Վոլգայի վրա՝ Ոկայի և Վոլգայի խառնարանի մոտ։ Հողերը և կլիման։ Անտառները։ Ոգտակար հանածոները. յերկաթահանք, տորֆ, թերթաքարեր, ֆոսֆորիտներ։

Գորկին՝ յերկրամասի տրանսպորտային և արդյունաբերական կենտրոն։ Մետաղային, քիմիական, նավաշինարարական, փայտամշակման ճյուղերը։ Սորմովոյի գործարանը։ Գորկու ավտոմոբիլային գործարանը։ Մերձոկյան մետալուրգիան։ Ձերժինսկի քիմկոմբինատը։ Անտառային և անտառաքիմիական արդյունաբերություն։ Էներգետիկան։ Տնայնագործական արդյունաբերություն։ Գյուղատնտեսությունը. վուշ, կարտոֆել և հացահատիկային։ Տրանսպորտը։

Քաղաքները։ Գորկի, Մուրոմ, Պավլովո։

ՌՅԱԶԱՆԻ ՄԱՐԶ

Դիրքը միջին Ոկայի վրա։ Մեշչերսկի անտառները Ոկայից դեպի հյուսիս և սևահողային անտառատափաստանը՝ դեպի հարավ։

Ոգտակար հանածոները։ Մերձմոսկովյան քարածուխ, ֆոսֆորիտներ, տորֆ։

Հացահատիկային շրջան՝ վոչ սևահողային կենտրոնի կազմում։ Բանջարաբուծություն. կարտոֆել և խոտացանք։ Այգեգործություն։ Խոշոր յեղջյուրավոր անասնապահություն (Մերձոկյան պոյմայում—գետամարգագետնում) և խոզաբուծություն։ Արդյունաբերությունը. սննդի, քարածխային, աղացարանային։ Մեքենաշինական և ելեկտրոտեխնիկական (ելեկտրոլամպերի գործարան) արդյունաբերության զարգացումը Ռյազանում։

Քաղաքը։ Ռյազան։

ՏՈՒԼԱՅԻ ՄԱՐԶ

Դիրքը անտառատափաստանի սահմանի վրա։ Ոգտակար հանածոները։ Մերձմոսկովյան քարածուխը. յերկաթահանք։

Բնակչության մեծ խտությունը։

Արդյունաբերության առաջատար ճյուղերը. քարածխային քիմիական, մետալուրգիական և մետաղամշակման։ Նրանց տեղադրությունը։ Կապը Մոսկվայի մարզի հետ։

Հացահատիկա-կարտոֆելային տնտեսության և անասնաբուծության զարգացումը։ Կարտոֆելի դերը խոզաբուծության

քիմիական արդյունաբերության զարգացման գործում։

Քաղաքները։ Տուլա, Ստալինոգորսկ, Կալուգա։

Բ՛ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(Որյոլի, Կուրսկի, Վորոնեժի, Տամբովի և Պենզայի մարզերը)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջին Ռուսական բարձրությունը և Ոկա-Դոնյան դաշտավայրը։ Հերկած անտառատափաստան՝ սևահողերով։ Ջրերի խիտ զարգացումը։ Կլիման։ Տեղումների քչանալը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Ոգտակար հանածոները. յերկաթահանք, ֆոսֆորիտներ, շինանյութեր։

Բնակչության խտությունը։

Սևահողային կենտրոնի ընդհանուր բնութագրությունը առաջ և հիմա։

ՈՐՅՈԼԻ ՄԱՐԶ

Դիրքը Ոկայի և Դեսնայի վերին հոսանքի վրա։

Կարտոֆելի, կանեփի և վուշի գերակշռող նշանակությունը գյուղատնտեսության մեջ (ԽՍՀՄ-ի հիմնական կանեփաբուծական շրջան)։ Հացահատիկային տնտեսություն։ Խոզաբուծություն և ձիաբուծություն։

Արդյունաբերություն, վոր վերամշակում է գյուղատնտեսական հումքը։ Մեքենաշինության զարգացումը։ Սղոցարանային և լուցկու արդյունաբերություն։ Բրյանսկի արդյունաբերական հանգույցը։

Քաղաքները։ Որյոլ, Բրյանսկ։

ԿՈՒՐՍԿԻ ՄԱՐԶ

Դիրքը, կլիման՝ Սևահողային կենտրոնի մյուս մարզերի համեմատությամբ։

ՌՍՖՍՀ-ի շաքարի արտադրության գլխավոր շրջանը։ Աշնանացան ցորենի բարձր տեսակարար կշիռը։ Խոզաբուծության և թռչնաբուծության զարգացումը։ Այգեգործություն։ Գյուղատնտեսական արդյունաբերություն։ Կուրսկի մագնիսային անոմալիայի յերկաթահանքի մշակումը և սև մետալուրգիայի զարգացման հեռանկարները։ Ֆոսֆորիտների մշակումը Շչիգրիի մոտ և կավիճը՝ Բելգորոդի մոտ։

Քաղաքները. Կուրսկ, Բելգորոդ։

ՎՈՐՈՆԵԺԻ ՄԱՐԶ

Դիրքը Դոնի վերին հոսանքի վրա: Կլիման:

Հացահատիկ, արևածաղիկ, կարտոֆիլ և շաքարի ճակնդեղ: Անասնաբուծություն:

Գյուղատնտեսական արդյունաբերություն: Սև մետալուրգիան Լիպեցկում, մեքենաշինական և քիմիական արդյունաբերություն՝ Վորոնեժում:

Քաղաքները. Վորոնեժ, Լիպեցկ:

ՏԱՄԲՈՎԻ ՅԵՎ ՊԵՆԶԱՅԻ ՄԱՐԶԵՐԸ

Դիրքը սևահողային կենտրոնի հյուսիս-արևելյան մասում:

Հացահատիկային կուլտուրաների ցանքերի զարգացումը: Տեխնիկական կուլտուրաների աճը. կարտոֆել, ծխախոտ-մախորկա, կանեփ: Անասնաբուծություն: Այգեգործություն: Գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերություն. սննդի, կաշվի, կոպիտ մահուդի, ծխախոտի, սղոցարանային: Մեքենաշինության զարգացումը:

Քաղաքները. Տամբով, Միչուրինսկ, Պենզա:

2. ՌԽՖՍՀ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ (2 ժամ)

(Լենինգրադի մարզ, Մուրմանսկի մարզ)

Հյուսիս-արեվմուտքի բնության յեվ տնտեսության ընդհանուր գծերը:

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶ

Անտառներ, ճահիճներ: Պոդզոլ հողեր: Բնական պայմանների արժեքավորումը գյուղատնտեսության համար:

Ներքին ջրերի նշանակությունը նավագնացության և եներգետիկայի համար:

Օգտակար հանածոները. տորֆ, գորշ քարածուխ, թերթաքարեր, բոքսիտներ, յերկաթահանք, շինանյութեր:

Լենինգրադի դիրքի առանձնահատկությունները: Լենինգրադում արդյունաբերության վաղ զարգացման պատճառները: Լենինգրադում արդյունաբերության ուժեղ համակենտրոնացման պատճառները: Առաջավոր տեխնիկայի յուրացման գործում Լենինգրադի դերը: Եներգետիկա և էլեկտրիֆիկացիա:

Լենինգրադը վորպես խոշորագույն արդյունաբերական կենտրոն և նավահանգիստ ծովային և գետային ճանապարհների հանգույցում: Կրոնշտադ բերդը, վորը փակում է ծովի կողմից Լենինգրադի մուտքը: Լավանսաարի, Բյորկե կղզիները, Խանկո թերակղզին:

Լենինգրադից դուրս տեղական հումքի վրա աշխատող արդյունաբերական ճյուղերի զարգացումը:

Գյուղատնտեսական գոտիները. մերձքաղաքային, վուշի, անտառային:

Քաղաքները. Լենինգրադ, Նովգորոդ, Պսկով, Վոլխովստրոյ:

ՄՈՒՐՄԱՆՍԿԻ ՄԱՐԶ

Դիրքը, գետերը, լճերը: Ռիբաչի և Սրեդնի թերակղզիները: Մարզի ծովափերի և ներքին մասերի կլիման: Օգտակար հանածոները. ապատիտներ, յերկաթահանք, պղնձի և նիկելի հանքեր: Բնակչությունը: Արդյունաբերությունը. լեռնային և քիմիական: Ձկնորսություն և ձկնակոնսերվային արդյունաբերություն:

Յեղջերվաբուծության և գյուղատնտեսության զարգացումը անդրբևեռային շրջանում:

Մարզի տերիտորիայի մեծացումը Ֆինլանդիայի հետ սահմանների փոփոխության հետևանքով:

Քաղաքները. Մուրմանսկ, Կիրովսկ, Մոնչեգորսկ, Կուոլայարվի:

3. ՌԽՖՍՀ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՅՈՒՍԻՍ ԱՐԵՎԵԼՔԸ (2 ժամ)

(Արխանգելսկի, Վոլոգդայի, Կիրովի մարզերը յեվ Կոմի ԱԽՍՀ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքը: Ռելյեֆը: Կլիման: Գետերը և նրանց նշանակությունը: Տունդրայի և տայգայի գոտիները: Անտառային հարստությունները:

Ազգային կազմը և բնակչության տեղադրությունը:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՄԱՐԶ

Դիրքը: Անտառը և նրա արդյունաբերական օգտագործումը: Անտառային արդյունաբերության տեղադրությունը: Անտառի

արտահանումը և նրա նշանակությունը: Փայտամշակման և ցելյուլոզա-թղթային արդյունաբերության աճը: Վորկուտինսկի քարածխի մշակումը: Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը. կաթնային անասնապահություն և յեղջերվաբուծություն (նենցների մոտ), ձկնորսություն և ձկնային արդյունաբերություն: Վորսորդություն: Տրանսպորտը:

Քաղաքները. Արխանգելսկ, Նարյան-Մար:

ՎՈԼՈԳԴԱՅԻ ՄԱՐԶ

Դիրքը: Գետերը: Անտառները:

Արդյունաբերության հիմնական ճյուղերը. սղոցարանային, փայտա-վուշամշակման և յուղի: Գյուղատնտեսությունը և նրա մասնագիտացումը: Տրանսպորտը: Մարիինյան և Հյուսիս-Դվինյան ջրային սիստեմների նշանակությունը:

Քաղաքը. Վոլոգդա:

ԿԻՐՈՎԻ ՄԱՐԶ

Դիրքը Վյատկայի ավազանում: Համեմատումը՝ բնական պայմանների տեսակետից՝ Հյուսիս Արևելյան շրջանի մյուս մարզերի հետ: Կապը Վոլգայի և Ուրալի հետ: Հանածոները. տորֆ, յերկաթահանք, ֆոսֆորիտներ:

Մետաղագործական, վորակավոր մետալուրգիայի, անտառամշակման և լեռնարդյունահանային արդյունաբերություն: Կաշվեղենի և կոշկեղենի արդյունաբերություն: Տնայնագործական արդյունագործություն:

Գյուղատնտեսության մասնագիտացումը. վուշաբուծություն և կաթնային անասնաբուծություն: Հացահատիկային ցանքերի աճը:

Քաղաքը. Կիրով:

ԿՈՄԻ ԱԽՍՀ

Դիրքը Պեչորայի և Վիչեգդայի ավազանում: Բնությունը:

Ազգային կազմը, բնակչության խտությունը: Կոմիի դրությունը ցարական Ռուսաստանի կազմում յեղած ժամանակ և այժմ:

Անտառային խոշոր հարստությունները և նրանց օգտագործումը: Անտառասղոցարանային, թղթի և անտառաքիմիական արդյունաբերության զարգացումը: Պեչորայի քարածխի և Ուխտայի նավթի յուրացումը: Սեփական գյուղատնտեսական բազայի ստեղծումը, վուշաբուծությունը՝ հարավում, յեղջերվաբուծությունը և ձկնորսությունը՝ հյուսիսում: Վորսորդություն: Տրանսպորտը:

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները:

Մայրաքաղաքը. Սըկտիվկար:

ՌՍՖՍՀ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԵՎՄՈՒՏՔԸ (2 ժամ)

(Սմոլենսկի յեվ Կալինինի մարզերը)

Արեվմուտքի բնության յեվ տնտեսության ընդհանուր գծերը

ՍՄՈԼԵՆՍԿԻ ՄԱՐԶ

Դիրքը Միջին Ռուսական բարձրության և Դնեպրի վերին հոսանքի վրա: Հողերը և կլիման: Օգտակար հանածոները. տորֆ, ֆոսֆորիտներ, շինանյութեր, գորշ քարածուխ:

Գյուղատնտեսության մասնագիտացումը: Վուշաբուծություն, կանեփաբուծություն, յուղակաթնային անասնաբուծություն և խոզաբուծություն: Հացահատիկային ցանքերի զարգացումը:

Գյուղատնտեսական արդյունաբերությունը (վուշի մշակում, յուղային, պանրի, կաշվի և այլն), անտառասղոցարանային, փայտամշակման և բամբակեղենի արդյունաբերություն: Քիմիական արդյունաբերություն (ֆոսֆատային պարարտանյութեր),

Քաղաքը. Սմոլենսկ:

ԿԱԼԻՆԻՆԻ ՄԱՐԶ

Դիրքը ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի գետերի գլխավոր ջրբաժան գծի վրա: Մորենային լանդշաֆտ: Լճերի և ճահիճների առատություն: Վոլգայի վերին հոսանքները: Կլիման և հողերը: Անտառները և նրանց ջրապահպանման նշանակությունը: Տորֆ:

Վուշաբուծությունը վորպես գյուղատնտեսության գլխավոր մասնագիտացում: Կաթնային անասնաբուծություն: Կարտոֆել և բանջարեղեններ: Մեքենաշինական, բամբակեղենի, վուշամշակման, կաշվեղենի-կոշկեղենի և անտառա-թղթային արդյունաբերություն:

Մոսկվա-Վոլգա ջրանցքի նշանակությունը մարզի համար:

Քաղաքները. Կալինին, Վիշնի Վոլոչեկ:

5. ՊՈՎՈԼԺՅԵ (6 ժամ)

(Կույբիշևի, Սարատովի և Ստալինգրադի մարզերը: Չուվաշական, Մարիական, Մորդովական, Թաթարական, Պովոլժյեի Գերմանացիների և Կալմիկական Ա.ԽՍՀ-ները)

ՄԻՋԻՆ ՊՈՎՈԼԺՅԵ

(Չուվաշական Ա.ԽՍՀ, Մարիական ԱԽՍՀ, Թաթարական ԱԽՍՀ, Կույբիշևի մարզ, Մորդովական Ա.ԽՍՀ)

ՄԻՋ Ն ՊՈՎՈԼԺՅԵԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ

ՉՈՒՎԱՇԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը Վոլգայի վրա անտառատափաստանային շերտում: Օգտակար հանածոները. ֆոսֆորիտներ, թերթաքարեր և շինանյութեր:

Չուվաշների դրությունը ցարական Ռուսաստանի ժամանակ: Չուվաշիայի վերածնունդը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունից հետո:

Արդյունաբերության զարգացումը: Գյուղատնտեսությունը. հացահատիկային (հաճար, վարսակ, ցորեն) և տեխնիկական կուլտուրաներ (վուշ, կանեփ, ծխախոտ-մախորկա), կարտոֆել: Ճանապարհային շինարարություն:

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները:

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Չեբոքսարի:

ՄԱՐԻԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը Վոլգայի վրա՝ անտառային գոտում:

Բնակչության ազգային կազմը: Մարիների դրությունը մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը և այժմ:

Անտառային հարստությունները և նրանց օգտագործումը: Անտառասղոցարանային, փայտամշակման, անտառաքիմիական և ցելյուլոզաթղթային արդյունաբերություն: Գյուղատնտեսությունը:

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները:

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Յոշկար-Օլա:

ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱԽՍՀ

Յերեք մասերը. Վոլգայի Աջ ափ, Կամայի Աջ ափ, Կամայի Ձախ ափ և նրանց բնության տարբերությունները: Գյուղատնտեսության առանձնահատկությունները նրանցից յուրաքանչյուրում:

Արդյունաբերական մասնագիտացումը կենդանական հումքի վերամշակման վրա: Թաթարիան ԽՍՀՄ-ի գլխավոր մորթեմշակման շրջանն է: Անտառային և փայտամշակման արդյունաբերություն: Քիմիական արդյունաբերության և մեքենաշինության զարգացումը:

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները:

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Կազան:

ԿՈՒՅԲԻՇԵՎԻ ՄԱՐԶ

Դիրքը անտառատափաստանային շերտում՝ Միջին Վոլգայի վրա, Վոլգան հատող յերկու յերկաթուղային մագիստրալների շրջանում: Աջափնյա և Ձախափնյա մասերի բնական տարբերությունները: Ձախափնյա մասի չորայնություն: Օգտակար հանածոները. թերթաքարեր, նավթ, ֆոսֆորիտներ, շինանյութեր:

Աջափնյա և Ձախափնյա մասերի գյուղատնտեսության ընդհանուր բնութագրությունը: Գյուղատնտեսության կազմի փոփոխությունը սոցիալիստական շինարարության հետևանքով: Հացահատիկային, տեխնիկական կուլտուրաների, անասնաբուծական մթերքների, մթերատու անասնապահության, այգեգործության զարգացումը Աջափնյա մասում և հացահատիկային (ցորեն, յեգիպտացորեն), յուղատուների (արևածաղիկ) մսաբրդային անասնաբուծության զարգացումը Ձախափնյա մասում:

Սննդի, աղացարանային, լուցկու, թղթի և մետաղամշակման արդյունաբերություն: Հանածոների մշակում: Կույբիշևյան հիդրոհանգույցի շինարարությունը: Պայքար յերաշտի դեմ:

Ք ա ղ ա ք ն ե ր ը. Կույբիշև, Սիզրան, Ուլյանովսկ:

ՄՈՐԴՈՎԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը: Ազգային կազմը և դրությունը մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը և այժմ:

Հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների (կանեփ, կարտոֆել, վուշ) և կաթնային անասնաբուծության զարգացումը:

Անտառային հարստությունները և փայտամշակման արդյունաբերությունը։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Սարանսկ։

ՆԵՐՔԻՆ ՊՈՎՈԼԺՅԵ

(Սարատովի մարզ, Պովոլժյեի Գերմանացիների ԱԽՍՀ, Ստալինգրադի մարզ և Կալմիկական ԱԽՍՀ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մերձվոլգյան բարձրություն։ Ցերգեններըը։ Օբշչի Սիրտը։ Մերձկասպյան դաշտավայրը։ Վոլգա-Ախտուբայի պոյման։ Հողերը և կլիման ու նրանց փոփոխությունը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Սարատովի մարզի օգտակար հանածոները (ֆոսֆորիտներ, թերթաքարեր, այրվող գազեր, ցեմենտային կավեր) և Ստալինգրադի մարզի օգտակար հանածոները (աղ և յերկաթ)։

Բնակչության ազգային կազմը և խտությունը։

ՍԱՐԱՏՈՎԻ ՄԱՐԶ

Տնտեսության մեջ մտած փոփոխությունները՝ սոցիալիստական շինարարության հետևանքով։ Գյուղատնտեսության շրջանային մասնագիտացումը։ Գյուղատնտեսական արդյունաբերությունը և նրա տեղադրությունը. այլ ճյուղերը և նրանց տեղադրությունը Վոլգայի վրա։ Ծանր արդյունաբերության ստեղծումը։

Ք ա ղ ա ք ը. Սարատով։

ՊՈՎՈԼԺՅԵՅԻ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԱԽՍՀ

Դիրքը։ Հացահատիկա-անասնաբուծական տնտեսություն և տեխնիկական կուլտուրաներ (արևածաղիկ, ծխախոտ և մանանեխ)։ Գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերություն։ Գյուղատնտեսական մեքենաշինություն և անտառապատում։

Ազգային կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Էնգելս։

ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶ

Սոցիալիստական շինարարության հետևանքով տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները։ Ստալինգրադի տրակտորի գործարանը և նրա նշանակությունը։ Ստալինգրադի արդյունաբերության այլ ճյուղերը։ Աստրախանի արդյունաբերությունը։ Գյուղատնտեսության շրջանային մասնագիտացումը։ Ձկնորսություն և աղի արդյունահանություն։ Վոլգայի և Դոնի միացման պրոբլեմը։

Ք ա ղ ա ք ն ե ր ը. Ստալինգրադ, Աստրախան։

ԿԱԼՄԻԿԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը և բնական պայմանները։ Բնակչության անցումը նստակեցության։ Մսաբրդային անասնապահություն։ Ջրաբուծության զարգացումը։ Ձկնորսություն և ձկնակոնսերվային արդյունաբերություն։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մ ա յ ր ա ք ա ղ ա ք ը. Էլիստա։

6. ՂՐԻՄԻ ԱԽՍՀ (1 ժամ)

Թերակղզային դիրքը։ Տափաստանային հյուսիսը, լեռներ, հարավային ծովափը և Կերչի թերակղզին։ Հարավային ծովափերի առանձնահատուկ նպաստավոր պայմանները ջերմասեր կուլտուրաների և կուրորտների համար։ Օգտակար հանածոները. Կերչի յերկաթահանքը, այրվող գազեր, աղ, շինանյութեր, քարածուխ։ Եներգոռեսուրսների պակասությունը։

Բնակչության խտությունն ու ազգային կազմը։ Ղրիմի տնտեսական շրջանները և նրանցից յուրաքանչյուրի բնութագրությունը։ Կերչի մետալուրգիան։ Ղրիմի ծովափերը—ԽՍՀՄ-ի կենսարան։ Տրանսպորտը։ Նավահանգիստները։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Ք ա ղ ա ք ն ե ր ը. Սիմֆերոպոլ (մայրաքաղաքը), Սևաստոպոլ, Թեոդոսիա, Կերչ, Յալտա։

7. ՆԵՐՔԻՆ ԴՈՆ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ (5 ժամ)

(Ռոստովի մարզ, Կրասնոդարի յերկրամաս — Ադիգեյան ԱՄ-ի հետ, Օրջոնիկիձեյի յերկրամաս — Չերկասական յեվ Կարաչայեվյան ԱՄ-երի հետ, Կաբարդինո-Բալկարական, Հյուսիս-Օսեթական, Չեչենո-Ինգուշական յեվ Դաղստանի ԱԽՍՀ-ները)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքը տափաստանային հարթության վրա և Կովկասյան լեռների լանջերին։ Ստավրոպոլի բարձրությունը։ Կլիմայի փոփոխությունը արևմուտքից-արևելք։ Մերձարևադարձային կլիման Սև ծովի ափերին։ Լեռնային անտառներ, անտառատափաստան, տափաստան և կիսաանապատներ։ Գետերի առանձնահատկությունները և նրանց նշանակությունը։ Կումա-Մանիչյան ջրանցքի շինարարությունը։ Լեռնային տուրիզմը։

Հարթավայրային և լեռնային մասերի բնակչությունը։

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶ

Օգտակար հանածոները (Դոնբասի արևելյան մասը)։ Նպաստավոր պայմաններ գյուղատնտեսության համար։

Հացահատիկային և տեխնիկական (արևածաղիկ) կուլտուրաներ և բախչաներ։ Սննդի արդյունաբերություն։ Ծանր արդյունաբերություն, մետալուրգիա, մետաղամշակման և քարածխային, գյուղատնտեսական մեքենաշինություն (Ռոստսելմաշ)։ Տրանսպորտը։

Քաղաքները. Ռոստով, Տագանրոգ։

ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ՅԵՐԿՐԱՄԱՍ (ԱԴԻԳԵՅԱՆ ԱՄ-Ի ՀԵՏ)

Գյուղատնտեսության համար նպաստավոր բնական պայմանների (Կուբան, Սևծովյան ափեր) զուգակցումը հարմար մերձծովյան դիրքի հետ։ Օգտակար հանածոները։ Լեռնային գետերի հիդրոէներգիան։ Լեռնային անտառներ, որ հարուստ են ծառերի թանկագին տեսակներով։

Գյուղատնտեսական հիմնական կուլտուրաները, հները և նորերը և նրանց տեղադրությունը։ Գյուղատնտեսական շրջանները. Մերձկուբան, Սևծովյան ափ, բարձրալեռնային շերտ և նախալեռներ։ Գյուղատնտեսական արդյունաբերություն։ Ծանր

արդյունաբերություն. նավթի արդյունաբերություն, ցեմենտի արտադրություն և այլ ճյուղեր։

Յերկաթուղային և ծովային տրանսպորտը։

Բնակչության ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Կրասնոդար, Նովոռոսիյսկ, Արմավիր, Տուապսե, Մայկոպ։

ՕՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ ՅԵՐԿՐԱՄԱՍ (ՉԵՐԿԱՍԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՐԱՉԱՅԵՎՅԱՆ ԱՄ-ԵՐԻ ՀԵՏ)

Դիրքը։ Չորային կլիման։ Հողերը և բուսականությունը։ Հացահատիկային հողագործություն և մսաբրդային անասնաբուծություն։ Օգտակար հանածոները։ Գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերություն։ Հանքային ջրեր և կուրորտային շրջան։

Բնակչության ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Վորոշիլովսկ, Պյատիգորսկ, Չերկեսկ, Միկոյան-Շահար։

ԿԱԲԱՐԴԻՆՈ-ԲԱԼԿԱՐԱԿԱՆ ԱԽՍՀ

Յերեք մասերը. բարձրալեռնային, միջին բարձրության լեռների և հարթավայրային։

Հանրապետության ձեռք բերած խոշոր հաջողությունները սոցիալիստական շինարարության մեջ։

Բնակչության ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մայրաքաղաքը. Նալչիկ։

ՀՅՈՒՍԻՍ-ՕՍԵԹԱԿԱՆ ԱԽՍՀ

Լեռնային և հարթավայրային մասերը։

Լեռնային արդյունաբերությունը։ Գունավոր մետալուրգիա։ Գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը։ Ջրային էներգիայի օգտագործումը։ Ռազմա-Վրական ճանապարհի նշանակությունը։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մայրաքաղաքը. Օրջոնիկիձե։

ՉԵՉԵՆՈ-ԻՆԳՈՒՇԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը։ Գրոզնու նավթարդյունաբերական շրջանը։ Գրոզնուց սկսվող նավթամուղ խողովակները։ Նավթամշակման, մեքենաշինության, անտառային և քիմիական արդյունաբերության զարգացումը։

Գյուղատնտեսությունը. հացահատիկային կուլտուրաներ, այգեգործություն և անասնապահություն։

Բնակչության ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մայրաքաղաքը. Գրոզնի։

ԴԱՂՍՏԱՆԻ ԱԽՍՀ

Լեռները և մերձծովյան դաշտավայրը։ Անհարմար հողերի զգալի քանակությունը։ Ոգտակար հանածոները։ Ջրային եներգիան։

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը։ Արոտային անասնապահություն, այգեգործություն, բանջարաբուծություն, բամբակաբուծություն։ Մրգակոնսերվային, ձկնակոնսերվային և ապակու (Դաղ-Ոգնի) արդյունաբերություն։

Ազգային կազմի բազմազանությունը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մայրաքաղաքը. Մախաչ-Կալա։

8. ՈՒՐԱԼ (6 ժամ)
(Սվերդլովսկի, Պերմի, Չելյաբինսկի, Չկալովի մարզերը, Բաշկիրական յեվ Ուդմուրտական ԱԽՍՀ-ները)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուրալի ոգտակար հանածոների հարստությունն ու բազմազանությունը. յերկաթահանքի գլխավոր տեղադրավայր։ Յերկաթահանքի արբանյակները։ Գունավոր մետաղներ։ Քիմիական հումք, աղեր (սեղանի և կալիական), ֆոսֆորիտներ, քրոմի հանքեր և այլն։ Քարածխի և նավթի հանքավայրերը։ Ուրալ-Կուզնեցկյան կոմբինատը և նրա նշանակությունը։ Անտառները, գետերի ջրային եներգիան, տորֆ։ Նախաուրալի և Անդրուրալի գյուղատնտեսական մասերը։

ՍՎԵՐԴԼՈՎՍԿԻ ՅԵՎ ՊԵՐՄԻ ՄԱՐԶԵՐԸ

Դիրքը Ուրալի միջին՝ ավելի ցածրադիր և ավելի զարգացած մասի վրա։ Ոգտակար հանածոները. յերկաթ մարգանեց, պղինձ, ցինկ, կալիական աղեր, սեղանի աղ, քարածուխ, նավթ, պլատին, ասբեստ, թանգագին քարեր։

Ծանր արդյունաբերության ուժեղ զարգացումը և նրա ճյուղերը. յերկաթահանքային, սև և գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, քիմիական, թղթի, ելեկտրիֆիկացիա։ Հիմնական արդյունաբերական կենտրոնները։ Անտառային տնտեսություն։ Գյուղատնտեսության մասնագիտացումը։

Քաղաքները։ Սվերդլովսկ, Պերմ, Նիժնի Տագիլ, Բերեզնիկի։

ՈՒԴՄՈՒՐՏԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը։ Անտառները։ Գետերը։

Մետաղամշակում և մեքենաշինություն։ Փայտամշակման և կաշվեղենի արդյունաբերություն։ Գյուղատնտեսությունը. վուշաբուծություն՝ հյուսիսում, հացահատիկային կուլտուրաներ և կարտոֆել՝ հարավում։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները։ Իժևսկ (մայրաքաղաքը), Վոտկինսկ։

ՉԵԼՅԱԲԻՆՍԿԻ ՄԱՐԶ

Մարզի լեռնային և հարթավայրային մասերը։ Ոգտակար հանածոները. յերկաթահանք, գունավոր մետաղներ, գորշ քարածուխ, տորֆ։

Տնտեսությունը։ Ծանր արդյունաբերության զարգացումը գյուղատնտեսության հետ կապված։ Սև և գունավոր մետալուրգիա։ Մագնիտոգորսկի գործարանը և նրա նշանակությունը։ Մագնիտոգորսկի կապը Կուզնեցկի հետ և նրա նշանակությունը։ Չելյաբինսկի արդյունաբերական հանգույցը։ Գյուղատնտեսությունը, նրա մասնագիտացումը և տեղադրությունը։

Քաղաքները. Չելյաբինսկ, Մագնիտոգորսկ, Զլատոուստ։

ԲԱՇԿԻՐԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը Բելայա գետի ավազանում։ Աջափնյա և Ձախափնյա մասերի տարբերությունը։ Ոգտակար հանածոները. յերկաթ, մար-

գանեց, պղինձ, քրոմ, վոսկի, տորֆ, նավթ, անտառ, ջրային էներգիա։

Ծանր արդյունաբերության զարգացումը (լեռնային, մետալուրգիական, մեքենաշինական)։ Անտառային տնտեսությունը։ Գյուղատնտեսությունը, նրա մասնագիտացումը և տեղադրությունը։ Գյուղատնտեսական հումքի վերամշակումը։

Ազգային կազմը և ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Ուֆա (մայրաքաղաք), Բելորեցկ, Ստեռլիտամակ։

ՉԿԱԼՈՎԻ ՄԱՐԶ

Անտառազուրկ տափաստանների գերակշռումը։ Չորային կլիման։ Գետային ցանցի աղքատությունը։ Որսկո-Խալիլովոյի շրջանի ոգտակար հանածոները. յերկաթ, պղինձ, նիկել, քրոմ, վոսկի, Իլեցկի աղը։ Որսկո-Խալիլովոյի արդյունաբերական հանգույցը։ Մարզի մնացած մասերի գյուղատնտեսական բնույթը։ Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը. հացահատիկային հողագործություն և մսաբրդային անասնապահություն։

Քաղաքները. Չկալով, Որսկ։

9. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻԲԻՐ (3 ժամ)

(Ոմսկի յեվ Նովոսիբիրսկի մարզերը, Ալտայի յերկրամասը Ոյրոթական ԱՄ-ի հետ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքը։ Արևմտա-Սիբիրական դաշտավայրը։ Տունդրա, տայգա, անտառատափաստան և տափաստան։ Ալտայան լեռները։ Հումույթի և էներգիայի խոշորագույն պաշարները. քարածուխ, ջրային էներգիա, անտառներ, մուշտակամորթ կենդանիներ, թանգագին մետաղներ։ Նպաստավոր պայմաններ գյուղատնտեսության համար անտառատափաստանային և տափաստանային գոտում։

ՈՄՍԿԻ ՄԱՐԶ

Դիրքը։ Ոգտակար հանածոների աղքատությունը։ Յերեք գոտիները. տունդրա, տայգա, անտառատափաստան և նրանց հատող Օբ-Իրտիշյան ուղին։

Բնակչության բաշխումը և ազգային կազմը։

Մարզի յերկու մասերը—հարավային և հյուսիսային։ Հարավային մասի գյուղատնտեսությունը և նրա մասնագիտացումը։

Գյուղատնտեսական և փայտամշակման արդյունաբերություն։ Մեքենաշինություն և նավաշինություն։

Տնտեսական և կուլտուրական շինարարությունը Օբի հյուսիսում։ Հյուսիսի յուրացումը։

Քաղաքները. Ոմսկ, Տյումեն, Տոբոլսկ։

ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿԻ ՄԱՐԶ

Դիրքը՝ Սիբիրական մագիստրալով Օբը հատող ճանապարհի վրա։ Տայգա, անտառատափաստան, Ալտայի նախալեռները։ Ոգտակար հանածոները. Կուզնեցկի ավազանի քարածուխը, յերկաթ, մարգանեց, բազմամետաղներ։

Կուզբասը Ուրալո-Կուզնեցկյան կոմբինատի հիմնական էներգետիկ բազան։ Մետալուրգիա (սև և գունավոր) և քիմիա։

Մարզի քարածխային և մետալուրգիական արդյունաբերության համամիութենական նշանակությունը։ Մշակողական արդյունաբերություն, գյուղատնտեսական մեքենաշինական, փայտամշակման և սննդի արդյունաբերության աճը։

Գյուղատնտեսությունը, նրա մասնագիտացումը և տեղաբաշխումը։ Կաթնային անասնաբուծություն։ Տեխնիկական կուլտուրաների ներդրումը (վուշ, արևածաղիկ)։

Քաղաքները. Նովոսիբիրսկ, Ստալինսկ, Կեմերովո, Տոմսկ։

ԱԼՏԱՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍ (ՈՅՐՈԹԱԿԱՆ ԱՄ-Ի ՀԵՏ)

Լեռներ, նախալեռներ և հարթություններ։ Տեղումները։ Հողերը։ Տափաստանները, անտառները և լեռնային արոտավայրերը։ Ալտայի գետերի ջրային էներգիան։

Ոգտակար հանածոները. բազմամետաղներ, վոսկի։

Տափաստանային շերտի գյուղատնտեսությունը. ցորեն, տեխնիկական կուլտուրաներ, անասնապահություն։ Կաթնային անասնաբուծության զարգացումը լեռնային Ալտայում։ Արդյունաբերության հիմնական ճյուղերը. սննդի, յուղի, կաշվեղենի, տեքստիլ։ Կապերը Նովոսիբիրսկի և Միջին Ասիայի հետ։

Բնակչության ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Բառնաուլ, Բիյսկ, Ոյրոթ-Տուրա։

10. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻԲԻՐ (3 ժամ)

(Կրասնոյարսկի յերկրամասը Խակասական ԱՄ-ի հետ, Իրկուտսկի յեվ Չիտայի մարզեր, Բուրյաթ-Մոնղոլական յեվ Յակուտական ԱԽՍՀ-ներ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքը։ Համեմատությունը Արևմտյան Սիբիրի հետ։ Միջին Սիբիրական բարձրավանդակը, Սայանները և Բայկալյան լեռները։ Յանա-Կոլիմյան լեռնաշխարհը։ Յենիսեյ և Լենա գետերն իրենց վտակներով, նրանց նշանակությունը նավագնացության և էներգետիկայի համար։

Խիստ ցամաքային և դաժան կլիմա։ Ոգտակար հանածոները. քարածուխ, ոսկի, գունավոր և հազվագյուտ մետաղներ։

ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿԻ ՅԵՐԿՐԱՄԱՍ (ԽԱԿԱՍԱԿԱՆ ԱՄ-Ի ՀԵՏ)

Դիրքը Յենիսեյի ավազանում։ Յերկրամասի մեծ ձգվածությունը հյուսիսից-հարավ։ Ռելյեֆի, կլիմայի և բուսականության բազմազանությունը։ Ոգտակար հանածոները։ Անտառները։ Գյուղատնտեսության համար հարմար հողերը. Յենիսեյ գետը որպես ջրային ճանապարհ և էներգիայի աղբյուր։

Յերկրամասի ինդուստրացումը։ Կուզբասի շինարարության և հյուսիսային ծովային ճանապարհի յուրացման նշանակությունը յերկրամասի համար։

Լեռնային արդյունաբերություն (քարածուխ և ոսկի) և անտառային արդյունաբերության զարգացումը։ Լեռնային մեքենաշինություն և անտառային արդյունաբերություն Կրասնոյարսկում։ Գյուղատնտեսության զարգացումը։ Տնտեսական և կուլտուրական շինարարությունը Յենիսեյի հյուսիսում։

Բնակչության ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Կրասնոյարսկ, Մինուսինսկ, Աբական։ Իգարկա։

ԻՐԿՈՒՏՍԿԻ ՄԱՐԶ

Ռելյեֆը։ Անտառները։ Կլիման։ Գետային ցանցը։ Ջրային էներգիայի հարստությունը։ Ոգտակար հանածոները. քարածուխ, յերկաթահանք, ասբեստ, ոսկի, փայլար, աղ։

Բնակչության ազգային կազմը։

Լեռնային արդյունաբերություն. ոսկու և քարածխի արդյունաբերություն։

Այլ ճյուղերը. մեքենաշինություն, փայտամշակման, կաշվեղենի, սննդի։

Արդյունաբերության զարգացման հեռանկարները՝ կապված Անգարստրոյի հետ։

Գյուղատնտեսությունը։ Ցանքային տարածությունների ընդարձակումը։ Անասնաբուծության զարգացումը։ Փափկամազ մորթեղենի արդյունագործություն։ Ձկնորսություն Բայկալի վրա։

Քաղաքները. Իրկուտսկ, Չերեմխովո, Բոդայբո։

ԲՈՒՐՅԱԹ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱԽՍՀ

Դիրքը։ Լեռները։ Անտառներն ու տափաստանները։ Կլիման։

Բնակչության ազգային կազմը։ Բուրյաթների անցումը նստակեցության։ Մսաբրդային անասնապահության և հողագործության զարգացումը։ Լեռնային, մեքենաշինական, կաշվեղենի և անտառասղոցարանային արդյունաբերություն։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Մայրաքաղաքը. Ուլան-Ուդե։

ՉԻՏԱՅԻ ՄԱՐԶ

Դիրքը։ Ռելյեֆը։ Գետերը. Ամուրն իր վտակներով, Լենայի վտակները—Ոլեկմա և Վիտիմ։ Կլիման։ Հողերը։ Բուսականությունը (տայգա և տափաստաններ)։ Մշտնջենական սառցակալում։ Ոգտակար հանածոները. ոսկի, յերկաթահանք, գունավոր մետաղներ, հազվագյուտ մետաղներ, քարածուխ։

Բնակչության ազգային կազմը։

Լեռնարդյունահանական արդյունաբերություն։ Անասնապահության և հողագործության զարգացումը։ Մշակողական արդյունաբերության գլխավոր ճյուղերը. մետալուրգիա, անտառասղոցարանային, կենդանական հումքի վերամշակում։ Որսորդություն։

Քաղաքները. Չիտա, Սրետենսկ։

ՅԱԿՈՒՏԱԿԱՆ ԱԽՍՀ

Հեռավոր դիրքը և թույլ մատչելիությունը։ Դաժան կլիման։ Ոգտակար հանածոները, գետերը, անտառները, մուշտակամորթ կենդանիներ։

Բնակչության ազգային կազմը։

Փափկամազ մորթեղենի արդյունաբերությունն ու ոսկին, որպես համամիութենական նշանակություն ունեցող գլխավոր ճյուղեր։ Շրջանները. գյուղատնտեսական, ոսկու և յեղջերվաբուծական—արդյունագործական։ Յակուտիայի տրանսպորտը։

Հյուսիսային ծովային ճանապարհի նշանակությունը Յակուտիայի համար։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Ք ա ղ ա ք ն ե ր ը. Յակուտսկ (մայրաքաղաքը), Ալդան։

11. ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

(Պրիմորյեի և Խաբարովսկի յերկրամասերը Հրեական ԱՄ-ի հետ) (3 ժամ)

Դիրքը Խաղաղ օվկիանոսի ափերին՝ իմպերիալիստական Ճապոնիայի անմիջական մերձակայությամբ։ Ճապոնիայի և Մանջուրիայի հետ ունեցած սահմանների պաշտպանության կարևոր նշանակությունը։ Խասանի դեպքերը։ Ռելյեֆը։ Գետերը։ Հողերը և կլիման։ Անտառները և մուշտակամորթ գազանները։ Ձկնային հարստությունները։ Օգտակար հանածոները. Բուրեինյան լեռնաշղթայի քարածուխը և յերկաթահանքը։ Սախալինի նավթը և քարածուխը։ Ոսկին և գունավոր մետաղներ։

Բնակչության ազգային կազմը։ Վերաբնակեցում։

Համամիութենական նշանակություն ունեցող գլխավոր ճյուղերը. անտառ, մորթի, ձուկ, ոսկի։ Հարավային մասի գյուղատնտեսական շրջանները։ Հիմնական կուլտուրաները—«ռուսական» և «չինական»։ Գյուղատնտեսության զարգացումը։ Ծանր արդյունաբերության զարգացումը. լեռնարդյունահանական, մեքենաշինական, նավաշինական, ցեմենտի։ Փայտամշակման և ձկնակոնսերվային արդյունաբերություն։ Յերկաթուղային և խճուղային շինարարություն։ Գետային և ծովային նավատորմիղը։ Նավահանգիստները։ Հյուսիսի յուրացումը։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Ք ա ղ ա ք ն ե ր ը. Խաբարովսկ, Ալեքսանդրովսկ, Բիրոբիջան։

II. ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԽՍՀ (5 ժամ)

ՈւԽՍՀ-ի աշխարհագրական դիրքը։ Պանսկան Լեհաստանի ջախջախումը, Արևմտյան Ուկրաինայի վերամիացումը ՈւԽՍՀ-ին, անմիջական սահմանակցություն Գերմանիայի, Վենգրիայի և Ռումինիայի հետ։ Բուկովինայի հյուսիսային մասի և Բեսսարաբիայի Խոտինի, Ակկերմանի ու Իզմաիլի գավառների միացումը ՈւԽՍՀ-ին։ Օգտակար հանածոների զուգակցումը գյուղատնտեսության համար նպաստավոր հողակլիմայական պայմանների և ծովային դիրքի հետ։ Դոնեցի քարածխային ավազանը և Կրիվոյ-Ռոգի յերկաթահանքը։ Այլ օգտակար հանածոներ։ Նավթ (Դրոգոբիչ), մարգանեց (Նիկոպոլ), սնդիկ (Նիկիտովկա), աղ (Արտեմովսկ)։ Գետերի տրանսպորտային և եներգետիկ նշանակությունը։ Հողաբուսական գոտիներ. Պոլեսյե, անտառատափաստան և տափաստան։

Բնակչության խտությունը։ Ազգային կազմը։

Ուկրաինայի տեսակարար կշիռը քարածխի, թուջի, մեքենաշինության, շաքարի, ցորենի, աղի համամիութենական արտադրանքում։

Արդյունաբերական գլխավոր ճյուղերը. քարածուխ, թուջ, մեքենաշինություն, եներգիայի արտադրություն, քիմիական, սնունդի։ Գլխավոր ճյուղերի տեղադրությունը։ Ուկրաինայի արդյունաբերական յերկու հիմնական շրջանները. ծանր ինդուստրիայի (Դոնբաս, Կրիվոյ-Ռոգ, Դնեպրոպետրովսկ, Զապորոժյե, Խարկով), և սնունդի՝ գլխավորապես շաքարի (Աջափնյա անտառատափաստան)։ Արևմտյան Ուկրաինայի և Ռումինիայից ՈւԽՍՀ-ին միացրած շրջանների տնտեսական հիմնական ճյուղերը։ Գլխավոր նորակառույցները. Դնեպրոգես և Դնեպրոկոմբինատ. Նրանց նշանակությունը։

Գյուղատնտեսական հիմնական կուլտուրաները և նրանց տեղավորությունը։ Ուկրաինայի գյուղատնտեսական շրջանները և նրանց բնութագրությունը։ Տրանսպորտը, հիմնական բեռնահոսանքները յերկաթուղիներով և Դնեպրով։ Ծովային նավահանգիստները։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Ք ա ղ ա ք ն ե ր ը։ Կիեվ (մայրաքաղաքը), Խարկով, Դնեպրոպետրովսկ, Օդեսսա, Խերսոն, Արտեմովսկ, Վորոշիլովգրադ, Ստա-

լինո, Զապորոժյե, Նիկոլայև, Մարիուպոլ, Լվով, Տառնոպոլ, Լուցկ, Դրոգոբիչ, Ստանիսլավ, Չերնովիցի, Ակկերման։

III. ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԽՍՀ (2 ժամ)

Դիրքը արևմտյան սահմանի մոտ։ Պանական Լեհաստանի ջախջախումը, Արևմտյան Բելոռուսիայի վերամիացումը ԲԽՍՀ-ին և անմիջական սահմանակցությունը Գերմանիայի հետ։ Բելոռուսական-Լիտովսկյան թումբը։ Պոլեսյե։ Պինսկի ճահիճները։ Հողերը և կլիման։ Օգտակար հանածոները՝ տորֆ, շինանյութեր և ֆոսֆորիտներ։

Բնակչության ազգային կազմը։

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը և նրանց տեղադրությունը։ Կարտոֆիլ և խոզաբուծություն։ Ճահիճների չորացումը և ցամաքային տարածությունների ընդարձակումը։ Այլ ճյուղեր. վուշաբուծություն, կանեփաբուծություն, թռչնաբուծություն, այգեգործություն։ Անտառային տնտեսություն.

Արդյունաբերության ուժեղ զարգացումը։ Սննդի և համի, փայտամշակման, վուշամանարանային, կաշվեղենի, շինանյութերի արդյունաբերություն։ Ելեկտրիֆիկացիա։ Արևմտյան Բելոռուսիայի տնտեսության հիմնական ճյուղերը։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Մինսկ (մայրաքաղաքը), Գոմել, Մոգիլև, Վիտեբսկ, Բարանովիչի, Բելոստոկ, Բրեստ։

IV. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (7 ժամ)

(Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ յեվ Վրացական ԽՍՀ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքը Կովկասյան լեռնաշղթայից հարավ՝ յերկու ծովերի միջև, Թուրքիայի և Իրանի սահմանների վրա։ ԽՍՀՄ հարավային սահմանի պաշտպանական նշանակությունը։ Ռելյեֆը և գետերը։ Անդրկովկասի գլխավոր բնական հարստությունները.

ա) հողակլիմայական պայմանները ջերմասեր կուլտուրաների համար.

բ) օգտակար հանածոները. Բաքվի նավթը, Ճիաթուրիի մարգանեցը, Տղվիբուլիի և Տղվարչելիի քարածուխը, Ալավերդու և Ղափանի պղինձը, Դաշքյասանի յերկաթը և այլն.

գ) լեռնային գետերի ջրային եներգիան։

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ (ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱԽՍՀ-ի ՅԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՄ-ի ՀԵՏ)

Դիրքը Անդրկովկասի արևելյան մասում։ Ռելյեֆը։ Կլիմայական պայմանները։ Օգտակար հանածոները. նավթ, յերկաթահանք, ալունիտներ։

Բնակչության ազգային կազմը։

Ապշերոնյան թերակղզու նավթային արդյունաբերության համաշխարհային նշանակությունը։

Բամբակաբուծություն, շերամաբուծություն, այգեգործություն, խաղողաբուծություն։ Լենքորանի դաշտավայրի մերձարևադարձային կուլտուրաները։ Անտառային անասնապահություն։ Գյուղատնտեսական և տեքստիլ արդյունաբերություն։

Նախիջևանի ԱԽՍՀ։ Լեռնային Ղարաբաղի ԱՄ։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Բաքու (մայրաքաղաքը), Կիրովաբադ, Լենքորան, Նախիջևան (Նախիջևանի ԱԽՍՀ-ի մայրաքաղաքը), Ստեփանակերտ (Լեռնային Ղարաբաղի ԱՄ-ի կենտրոնը)։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ

Դիրքը Անդրկովկասի հարավային մասում։ Հայկական լեռնաշխարհը։ Կլիման։ Օգտակար հանածոները. պղինձ, մոլիբդեն, քարածուխ, տորֆ, պեմզա, տուֆ, գրանիտ և այլ շինանյութեր։ Գետերի և Սևանա լճի եներգոռեսուրսները։

Բնակչության ազգային կազմը։

Հացահատիկային հողագործություն և անասնաբուծություն լեռնային մասում։ Արարատյան դաշտավայրի ջրովի հողագործությունը. բամբակ, այգեգործություն և խաղողագործություն։ Նոր կուլտուրաների մշակություն (շաքարի ճակնդեղ, գերան և այլն)։

Գունավոր մետալուրգիա։ Սևան-Զանգու կասկադի հիդրոկայանների շինարարությունը։ Արդյունաբերության ճյուղերը.

տեքստիլ, գինու-կոնյակի, բամբակազտիչ, կարբիտի, կոնսերվի, շինանյութերի, սինթետիկ կաուչուկի և այլն։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Երևան (մայրաքաղաքը), Լենինական, Կիրովական։ Հայկական ԽՍՀ-ի շրջանները և նրանց կենտրոնները։

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ (ԱԲԽԱԶԱԿԱՆ ՅԵՎ ԱՋԱՐԱԿԱՆ ԱԽՍՀ-ների յեվ ՀԱՐԱՎ-ՈՍԵԹԱԿԱՆ ԱՄ-ի ՀԵՏ)

Դիրքը Անդրկովկասի արևմտյան մասում, Սուրամի լեռնաշղթայի յերկու կողմերում։ Բնության հարստությունը և բազմազանությունը։ Արևմտյան Վրաստանի խոնավ մերձարևադարձային կլիման և Արևելյան Վրաստանի չորային կլիման։ Ոգտակար հանածոները. մարգանեց, քարածուխ, նավթ։ Գետերը և նրանց նշանակությունը։

Բնակչության ազգային կազմը։

Վրաստանի տնտեսական գլխավոր շրջանները. խոնավ մերձարևադարձային կուլտուրաների շրջան, Իմերեթիա, Կախեթիա։ Նրանց համառոտ բնութագրությունը։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Թբիլիսի (մայրաքաղաքը), Գորի, Քութաիսի, Փոթի, Բաթումի (Աջարական ԱԽՍՀ-ի մայրաքաղաքը), Սուխումի (Աբխազական ԱԽՍՀ-ի մայրաքաղաքը), Ստալինիր (Հարավ-Օսեթական ԱՄ-ի կենտրոնը)։

V. ՂԱԶԱԽԱԿԱՆ ԽՍՀ (2 ժամ)

Դիրքը չոր տափաստանային գոտում։ Ռելյեֆը։ Գետերը։ Խիստ ցամաքային կլիմա։ Բնական գոտիները։ Ոգտակար հանածոները։ Ղազախստանի հարստությունն առանձնապես գունավոր մետաղներով։ Պղինձ (Կոունրադում, Ջեզ-Կազգանում, Բոշչեկուլում)։ Բազմամետաղներ՝ Ալտայում (Ռիդդեր) և Կարատաուի վրա՝ վոսկի։ Աղ, ֆոսֆորիտներ (Ակտյուբինսկ), քարածուխ (Կարագանդայում), նավթ (Էմբայում)։

Հողակլիմայական պայմանները գյուղատնտեսության հա-

մար։ Արոտային հողատեսքերի գերակշռությունը։ Անասնաբուծության զարգացումը։ Հյուսիսային ծայրամասերի վարելահողերը և հարավային Ղազախստանի ջրովի հողերը։

Բնակչության խտությունը։ Ազգային կազմը։

Բայության լիկվիդացիան։ Կոլեկտիվացումը և քոչվորությունից նստակեցության անցնելը։ Գյուղատնտեսության մասնագիտացումը, նոր կուլտուրաներ։ Գյուղատնտեսական արդյունաբերություն։ Լեռնային արդյունաբերություն և գունավոր մետալուրգիա։ Յերկաթուղային շինարարություն։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Ալմա-Աթա (մայրաքաղաքը), Սեմիպալատինսկ, Կարագանդա, Պետրոպավլովսկ, Ռիդդեր, Ակմոլինսկ, Կոունրադ, Չիմքենդ։

VI. ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (4 ժամ)

(Թուրքմենական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ-Կարա-Կալպակական ԱԽՍՀ-ի հետ, Տաջիկական ԽՍՀ-Լեռնային Բադախշանի ԱՄ-ի հետ յեվ Կիրգիզական ԽՍՀ)։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքն Իրանի, Աֆղանստանի և Չինաստանի սահմանի վրա։ Միջին Ասիան կոնտրաստների յերկիր։ Հիմնական լանդշաֆտները. լեռներ, անապատներ, օազիսներ։ Խիստ ցամաքային կլիմա։ Ջրովի հողերի առանձնահատուկ արժեքը։ Ոգտակար հանածոները. բազմամետաղներ, պղինձ, քարածուխ, նավթ, ծծումբ և այլն։ Լեռնային գետերի ջրային էներգիան։

Միջին Ասիայի տնտեսության տարբեր տիպերը։ Բամբակագործության հսկայական նշանակությունը։ Անասնաբուծություն։ Ծանր և թեթև արդյունաբերության զարգացումը։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ԽՍՀ

Դիրքը։ Ռելյեֆը։ Կարա-Կում անապատը։ Գետերը։ Օազիսները։

Օգտակար հանածոները. միրաբիլիտ, նավթ, ծծումբ։
Բամբակամշակություն ջրովի հողերի վրա։
Անապատաարոտային անասնաբուծություն (կարակուլաբուծություն, ձիաբուծություն)։ Լեռնային արդյունաբերության զարգացումը (նավթ, ծծումբ, քիմիական հումք)։
Քաղաքները. Աշխաբադ (մայրաքաղաքը), Չարջոու, Կրասնովոդսկ։

ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԽՍՀ (ԿԱՐԱ-ԿԱԼՊԱԿԱԿԱՆ ԱԽՍՀ-Ի ՀԵՏ)

Դիրքը։ Ռելյեֆը. Նախալեռների համեմատաբար բարձր տեսակարար կշիռը։ Գետերը։ Ջրերի առատությունը վոռոգման համար։ Օգտակար հանածոները. պղինձ, նավթ և այլն։
Բնակչության ազգային կազմը։
Ուզբեկստանը ԽՍՀՄ-ի հիմնական բամբակային բազա։
Մետաքսագործություն, այգեգործություն և խաղողաբուծություն։ Ուզբեկստանի օազիսները։ Ֆերգանայի հովիտը։
Արդյունաբերության զարգացումը տեղական բուսական և հանածո հումքի վրա։ Մեքենաշինություն Չիրչիկստրոյը։
Բամբակաբուծություն և ձկնորսություն Կարա-Կալպակական ԱԽՍՀ-ում։
Քաղաքները. Տաշքենդ (մայրաքաղաքը), Սամարկանդ, Բուխարա, Ֆերգանա, Տուրտկուլ (Կարա-Կալպակական ԱԽՍՀ-ի մայրաքաղաքը), Նուկուս։

ՏԱՋԻԿԱԿԱՆ ԽՍՀ (ԼԵՌՆԱՅԻՆ ԲԱԴԱԽՇԱՆԻ ԱՄ-Ի ՀԵՏ)

Լեռնային ռելյեֆը։ ԽՍՀՄ-ի ամենաբարձր գագաթները։ Սառցադաշտերը։ Գետերը։ Վոռոգվող հովիտները։
Բնակչության ազգային կազմը։
Տնտեսությունը։ Բամբակաբուծություն (յեգիպտական բամբակ)։ Հացահատիկային կուլտուրաները։ Անասնապահություն։ Գյուղատնտեսական-վերամշակողական և հանածո հումքի վերամշակման արդյունաբերություն։ Ճանապարհային շինարարություն։
Քաղաքները. Ստալինաբադ (մայրաքաղաքը), Լենինաբադ, Խորոգ (Լեռնային Բադախշանի ԱՄ-ի կենտրոնը)։

ԿԻՐԳԻԶԱԿԱՆ ԽՍՀ

Տյան-Շանի և Պամիրո-Ալայան լեռները։
Ֆերգանի արևելյան ծայրամասը, Չու և Տալասի գետահովիտները։ Իսիկ-Կուլի գոգավորությունը։ Օգտակար հանածոները. քարածուխ, սնդիկ, սուրմա։
Բնակչության ազգային կազմը։
Մսաբրդային վոչխարաբուծության և ձիաբուծության զարգացումը։ Բամբակ և նոր տեխնիկական կուլտուրաներ. շաքարի ճակնդեղ, կենաֆ, քենդիր։ Ցորեն։ Լեռնային և գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության զարգացումը։
Մայրաքաղաքը. Ֆրունզե։

VII. ԿԱՐԵԼՈ-ՖԻՆՆԱԿԱՆ ԽՍՀ (1 ժամ)

Դիրքը Ֆինլանդիայի սահմանի վրա։ Կարելական պարանոցի և Կուոլայարվիի շրջանի մի մասի միակցումը Կարելական ԱԽՍՀ-ին և Կարելո-Ֆիննական ԽՍՀ-ի կազմակերպումը։ Լճերի և անտառների յերկիր։ Գետերի նշանակությունը։ Լադոգա և Օնեգա լճերը։
Բնակչության ազգային կազմը։
Հողաբուսական և կլիմայական պայմանները գյուղատնտեսության համար։ Մուշտակամորթ կենդանիների առատությունը։ Օգտակար հանածոները։ Դրությունը ցարական Ռուսաստանի կազմում յեղած ժամանակ։
Սոցիալիստական շինարարության հաջողությունները։ Անտառային տնտեսության, անտառաքիմիական և անտառաթղթային արդյունաբերության զարգացումը։ Սղոցարաններ, ցելյուլոզայի-թղթի հզոր կոմբինատներ—Վիբորգում, Կեքսհոլմում։ Ձկան վերամշակման գործարան—Կեքսհոլմում, կոնսերվի գործարաններ—Սորտավալայում և Վիբորգում, հսկա սղոցարաններ—Պետրոզավոդսկում։
Ընկեր Ստալինի անվան Սպիտակ—Բալթիկ ծովերի ջրանցքը և նրա նշանակությունը Կարելո-Ֆիննական ԽՍՀ-ի տնտեսության համար։
Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։
Քաղաքները. Պետրոզավոդսկ (մայրաքաղաքը), Վիբորգ (Վիպուրի), Կեքսհոլմ, Սորտավալա։

VIII. ՄՈԼԴԱՎԱԿԱՆ ՍՍՀ (1 ժամ)

Մոլդավական ՍՍՀ-ի կազմավորումը նախկին Մոլդավական ԱՍՍՀ-ի և Ռումինիայից հետ ստացած Բեսսարաբիայի մոլդավական բնակչության վերամիավորման հիման վրա։

Դիրքը Ռումինական սահմանի վրա, սևահողային տափաստանների գոտում։ Ռելյեֆը։ Պրուտ և Դնեստր գետերի նշանակությունը։ Կլիման։ Սև ծովի նշանակությունը։ Օգտակար հանածոները։

Հողակլիմայական պայմանների նպաստավոր լինելը գյուղատնտեսության համար։ Մշակվող կուլտուրաները (խաղող, ծխախոտ, այգեգործություն, հացահատիկային կուլտուրաներ, արևածաղիկ)։

Արդյունաբերության ճյուղերը (ալրաղացային, ոգեգործական)։

Ազգային կազմը։ Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Տիրասպոլ (մայրաքաղաքը), Քիշնև։

IX. ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (2 ժամ) (ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՀ, ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՀ, ԵՎ ԼԻՏՎԱԿԱՆ ՍՍՀ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մերձբալթյան շրջանը ցարական Ռուսաստանի կազմում եղած ժամանակ։ Մերձբալթյան ժողովուրդների անկախություն ստանալը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության հետևանքով։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի օգնությամբ Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի բուրժուական հանրապետություններ դառնալը և հակադրվելը Խորհրդային Միությանը։ 1940 թվի հուլիսի 21-ին Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում վերջնականապես Խորհրդային կարգեր հաստատելը։

Մերձբալթյան Խորհրդային Հանրապետությունների դիրքը ԽՍՀՄ խառն անտառների գոտում, Բալթիկ ծովի ափին։

Ռելյեֆի միօրինակությունը, հանածո հարստությունների պակասությունը, կլիմայական և հողաբուսական պայմանների միանմանությունը։ Մինչև խորհրդայնացումը արդյունաբերու-

թյան թույլ զարգացումը, գյուղատնտեսության հետամնացությունը։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի դերը Մերձբալթյան երկրների տնտեսության քայքայման և բնակչության հարստահարման գործում։

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՀ

Դիրքը Բալթիկ ծովի, Ռիգայի ծոցի և Չուդ լճի միջև ընկած հարթավայրում։ Մոոնզունդյան արշիպելագի կղզիները (Էզել, Դագո)։ Տարածությունը, բնակչության քանակը։

Հանածո հարստությունների պակասությունը։ Արդյունաբերության վիճակը ցարական Ռուսաստանի կազմում եղած ժամանակ։ Անգլո-ֆրանսիական կապիտալի դերը Էստոնիայի արդյունաբերության անկման գործում։

Արդյունաբերության ճյուղերը. տեքստիլ, կահույքի, թղթի, սննդի, թերթաքարային, ցեմենտի։ Արդյունաբերության զարգացման հեռանկարները։ Գյուղատնտեսական կուլտուրաները. վուշ, կարտոֆիլ, վարսակ, խոտաբույսեր և արմատապտուղներ (շաղգամ)։ Անասնապահության գերակշռող նշանակությունը։ Գյուղատնտեսության զարգացման հեռանկարները։

Ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները։

Քաղաքները. Տալլին (մայրաքաղաքը), Պալդիսկի (Նավահանգիստ), Նարվա։

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՀ

Դիրքը Բալթիկ ծովի և Ռիգայի ծոցի ափին, Արևմտյան Դվինայի հարթավայրում։ Հողակլիմայական պայմանները։

Տարածությունը։ Բնակչության քանակը։

Հանքային հարստությունները. գիպս, կավիճ։ Տորֆի առատությունը։

Արդյունաբերության վիճակը ցարական Ռուսաստանի կազմում եղած ժամանակ։ Ռիգայի արդյունաբերության (մեքենաշինական գործարաններ—վագոնաշինարարություն, շոգեքարշեր, գյուղատնտեսական գործիքներ) անկումը անգլո-ֆրանսիական կապիտալի ազդեցության տակ։

Արդյունաբերության ճյուղերը. սննդի, ձիթահան, անտառամշակման (լուցկու, թղթի, ցելյուլոզայի, ֆաներայի), ծխախոտի, սուպերֆոսֆատի։ Տորֆամշակություն։ Արդյունաբերության զարգացման հեռանկարները։

Գյուղատնտեսության ճյուղերը. վուշամշակություն, կարտոֆել, խոտաբուծություն, արմատապտուղներ (կերի ճակնդեղ)։ Անասնապահության գերակշռող նշանակությունը։ Գյուղատնտեսության զարգացման հեռանկարները։

Խիտ յերկաթուղացանց։

Քաղաքները. Ռիգա (մայրաքաղաքը) Լիեպայա (Լիբավա)։

ԼԻՏՎԱԿԱՆ ԽՍՀ

Դիրքը։ Բալթիկ ծովի նեղ շերտը, Նեման և Վիլիա գետերը։ Հողակլիմայական պայմանները։

Տարածությունը։ Բնակչության քանակը։ Վիլնյուս քաղաքի, Վիլնյուսի մարզի և Բելոռուսական ԽՍՀ-ի մի քանի սահմանամերձ շրջանների միակցումը Լիտվական ԽՍՀ-ին։

Հանքային հարստություններով աղքատ լինելը։

Արդյունաբերության ճյուղերը. փայտամշակման, լուցկու, տեքստիլ, քիմիական, կաշվի, շաքարի, սպիրտ-արաղի։

Տորֆահողերի առատությունը։ Արդյունաբերության զարգացման հեռանկարները։

Գյուղատնտեսության ճյուղերը. հացահատիկային, վուշի, կերաբույսերի։ Անասնաբուծություն։ Գյուղատնտեսության զարգացման հեռանկարները։

Քաղաքները. Վիլնյուս, (մայրաքաղաքը), Կաունաս Պալանգա (Նավահանգիստ)։

VIII. ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ (1 ժամ)

Տնտեսական կապերը Միութենական Հանրապետությունների միջև։ Վոչ սևահողային կենտրոնի առանձնահատուկ դերը միջմարզային կապերի սիստեմում։ Լենինգրադի մարզի, Ուրալի և Ուկրաինական ԽՍՀ-ի արտաքին կապերը։ Միջմարզային կապերը բանվորական ուժի գծով։

Ամբողջ դասընթացի կրկնություն (10 ժամ)։

9-րդ ԴԱՍԱՐԱՆ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(68 ժամ, վորից 6 ժամը կրկնության համար)

I. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ—3 ԺԱՄ

II. ՅԵՎՐՈՊԱ

1. Մեծ Բրիտանիա—5 ժամ.
2. Ֆրանսիա—4 ժամ.
3. Նիդերլանդներ—1 ժամ.
4. Բելգիա—1 ժամ.
5. Գերմանիա—4 ժամ.
6. Իտալիա—3 ժամ.
7. Շվեյցարիա—1 ժամ.
8. Դանուբյան յերկրներ—1 ժամ.
9. Իսպանիա—2 ժամ.
10. Բալկանյան յերկրներ—2 ժամ.
11. Սկանդինավյան յերկրներ—2 ժամ.
12. Ֆինլանդիա—1 ժամ.
13. Ռումինիա—1 ժամ.

III. ԱՄԵՐԻԿԱ

1. ԱՄՆ—5 ժամ.
2. Կանադա—1 ժամ.
3. Լատինական Ամերիկա—3 ժամ.

IV. ԱՍԻԱ

1. Ճապոնիա—4 ժամ.
2. Չինաստան—4 ժամ.
3. Մոնղոլական Ժողովրդական հանրապետություն—1 ժամ.
4. Տուվայի Ժողովրդական հանրապետություն—1 ժամ.
5. Բրիտանական Հնդկաստան—3 ժամ.
6. Իրան—1 ժամ.
7. Աֆղանստան—1 ժամ.
8. Թուրքիա—1 ժամ.

V. ԱՖՐԻԿԱ—4 ԺԱՄ.

VI. ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ—2 ԺԱՄ.

Ամբողջ դասընթացի կրկնություն—6 ժամ։

I. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (3 ժամ)

1. Աշխարհի բաժանումը յեվ վերաբաժանումը

Կապիտալիստական յերկրների միջև յեղած հիմնական տարբերությունները։ Խոշոր իմպերիալիստական պետություններ, նրանց կողմից ճնշված գաղութներ և կախյալ յերկրներ։

Աշխարհի քաղաքական բաժանումը I իմպերիալիստական պատերազմի նախօրյակին։ 6 մեծ պետությունների տիրապետությունները։ Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի սահմանները (քարտեզով)։

I իմպերիալիստական համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը որպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սկիզբը։ Համաշխարհային տնտեսության բաժանումը յերկու սիստեմի—կապիտալիզմի սիստեմի և սոցիալիզմի սիստեմի։

Նոր պետությունների առաջանալը Յեվրոպայում. Չեխոսլովակիա, Հարավ-Սլավիա, Լեհաստան, Դանցիգ, Ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լիտվա։ Գերմանական գաղութների և Ասիական Թուրքիայի մի մասի բաժանումը։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը որպես կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացման գործոն։ II իմպերիալիստական պատերազմը և նրա հետևանքները։

2. Արտադրողական ուժերի տեղաբաշխումը կապիտալիստական աշխարհում

Հումքի և էներգիայի աղբյուրների բաժանումը։ Քարածխի, յերկաթահանքի, նավթի և ոչ մետաղի արտադրության պաշարների և հանույթի տեղաբաշխումը։ Ծանր ինդուստրիայի և էլեկտրոէներգիայի արտադրության կենտրոնացումը իմպերիալիստական յերկրներում։ Մեքենաների արտադրությունը։ Տեքստիլ արդյունաբերության տեղաբաշխումը։ Կաուչուկ, բամբակ, հացահատիկներ, բուրդ, միս արտադրողները։

Գաղութային, կիսագաղութային և կախյալ յերկրները հումք մատակարարողներ ինդուստրիալ իմպերիալիստական յերկրների համար։

II. ՅԵՎՐՈՊԱ

1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (5 ժամ)

Մեծ Բրիտանիայի բաղկացուցիչ մասերը. Անգլիա, Ուելս, Շոտլանդիա, Հյուսիսային Իռլանդիա։ Մեծ Բրիտանիայի տարածությունը և բնակչությունը։ Պետական կառուցվածքը։ Մայրաքաղաքը՝ Լոնդոն։

Բնական պայմանները. աշխարհագրական դիրքը։ Ատլանտյան օվկիանոսի Մեծ Բրիտանիան շրջապատող մասերը։ Ափերի բնութագրությունը։ Մակընթացությունների նշանակությունը։

Մակերևույթը. Հյուսիսային Շոտլանդական լեռնաշխարհ, Պեններներ, Ուելսի լեռներ, դաշտավայրային Հարավ-Արևելյան Անգլիա։ Մակերևույթի հղկված ձևերի գերակշռումը։ Գետերը (Թեմզա, Սևերն, Կլայդ), նրանց չսառչելը, ջրառատությունը։

Հանքային հարստություններ։ Քարածխի և յերկաթի առկայությունը։ Գլխավոր քարածխային ավազանները։

Կլիման։ Գոլֆստրիմի և ծովային քամիների ազդեցությունը։ Տեղումների առատություն և արևոտ օրերի փոքր քանակություն, մառախուղներ։ Բուսականությունը։ Դաշտավայրերի հարուստ խոտածածկությունը։ Ամայություններ լեռներում։

Շրջապատող ծովերի ձկնային հարստությունները։

Բնակչությունը։ Ազգային կազմը։ Քաղաքային բնակչության խիստ գերակշռությունը։ Բնակչության խտությունը։ Բնակչության կենտրոնացումը արդյունաբերական շրջաններում։ Արտագաղթ։ Անգլիացիների և անգլիական լեզվի տարածումը Անգլիայի սահմաններից դուրս։ Բնակչության դասակարգային կազմը։

Ժողովրդական տնտեսության ընդհանուր բնութագրությունը։ Գետերի շահագործումը, որպես բազա անգլիական բուրժուազիայի տնտեսական և քաղաքական հզորության համար։ Մեծ Բրիտանիան որպես ամենահին ֆաբրիկական ինդուստրային յերկիր, որպես անցյալում առաջին առևտրական և ֆինանսական պետությունն աշխարհում։ Մեծ Բրիտանիայի արդյունաբերական առաջնության և առևտրական ու ֆինանսական հզորության կորստի պատճառները։ Մեծ Բրիտանիայի ներկայիս տեսակարար կշիռը, որպես արդյունաբերական և առևտրական պետության։

Արդյունաբերությունը։ Արդյունաբերության կարևորագույն հին ճյուղերը. քարածխային, մետաղագործական, մեքենաշինական, նավաշինական, տեքստիլ։ Նոր ճյուղերը. քիմիական, էլեկտրոտեխնիկական, ավտոմոբիլային և ավիացիոն։ Ռազմական արդյունաբերության ուժեղացումը։ Խրոնիկական գործազրկություն անգլիական արդյունաբերության մեջ և նրա պատճառները։

Գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության ստորադաս նշանակությունը։ Մասնագիտացում մերձքաղաքային կուլտուրաների և անասնաբուծության վրա։ Ձկնորսություն։

Տրանսպորտը։ Անգլիական ծովային նավատորմի համաշխարհային նշանակությունը։ Գլխավոր նավահանգիստները։ Յերկաթուղիները։ Ջրային ճանապարհները։

Արտաքին առևտուրը։ Մեծ Բրիտանիայի կախումն արտաքին շուկայից հումքի ներմուծման և գործարանային ապրանքների արտահանման գծով։ Ներմուծման և արտահանության կազմը։

Շրջանները։ Հարավ-Արևելյան Անգլիա։ Աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները։ Լոնդոնի դերը, որպես առևտրական, ֆինանսական, արդյունաբերական և քաղաքական կենտրոն։ Հարավ-Արևելյան Անգլիայի գյուղատնտեսությունը։

Հյուսիսային և Արևմտյան Անգլիան քարածխի, մետաղի, տեքստիլ արդյունաբերության և աշխարհի հնագույն խոշոր գործարանային արդյունաբերության մի շարք շրջաններ ունեցող յերկիր։ Արդյունաբերական մի շարք հին շրջանների անկումը։

Բիրմինհամի և Շեֆիլդի մետաղարդյունաբերության շրջանները։

Հարավային Ուելսը որպես քարածխային մետաղագործական շրջան. կենտրոնը—Կարդիֆ։

Լանկաշիրը և Յորկշիրը տեքստիլ քիմիական արդյունաբերության ու մեքենաշինության շրջաններ. կենտրոնները՝ Մանչեստր, Լիվերպուլ, Բրադֆորդ, Լիդս, Հուլ (Հալլ)։

Հյուսիսային Անգլիայի քարածխային, մետաղագործական և նավաշինական շրջանները։ Կենտրոնը—Նյուկասլ (Նյուկեսլ)։

Միջին Շոտլանդական արդյունաբերական շրջան։ Գլազգո, Եդինբուրգ։

Բրիտանական կայսրությունը։ Չափերը և կազմը։ Դոմինիոնները. Իրլանդիա, Կանադա, Նյուֆաունդլենդ, Ավստրալիական միություն, Նոր Զելանդիա, Հարավ-Աֆրիկյան միություն։

Գաղութները։ Հնդկաստան, Մալայա, Ռոդեզիա, Նիգերիա, Վոսկե-Ափ, Բրիտանական Սոմալի և այլն։

Մանդատային տերիտորիաները. Պաղեստին, Տանգանյիկա, Հարավ-Արևմտյան Աֆրիկա։

Մեծ Բրիտանիայից կախում ունեցող յերկրներ. Յեգիպտոս, Իրաք։

Բրիտանական տիրապետությունը Հնդկական ովկիանոսի ափերին։ Բրիտանական կայսրության կարևորագույն ճանապարհները և հենման կետերը. Ջիբրալտար, Մալթա, Սուեզի ջրանցքը, Ադեն, Սինգապուր, Հոնկոնգ։

Մեծ Բրիտանիայի միջազգային դրությունը։ Հակասություններ մյուս իմպերիալիստական պետությունների հետ։ Պատերազմ Գերմանիայի և Իտալիայի դեմ ու դրա հետևանքները։

Մեծ Բրիտանիան և ԽՍՀՄ-ն։

2. ՖՐԱՆՍԻԱ (4 ժամ)

Ֆրանսիայի և նրա գաղութային տիրապետությունների տարածությունը և բնակչությունը։ Պետական կառուցվածքը։

Մայրաքաղաքը—Փարիզ։

Բնական պայմանները։ Աշխարհագրական դիրքը։ Ծովային և ցամաքային սահմանները։ Կորսիկա կղզին։

Մակերևույթը։ Լեռները. Ալպեր, Պիրենեյներ, Կենտրոնական զանգված, Վոգեզներ։ Դաշտավայրերը։ Փարիզի ավազանը։ Գետերը. Սեն (Մառնա վտակով), Լուար, Գարոն, Ռոն (Սոն վտակով), Հռենոս. նրանց հարմարությունը նավագնացության համար։ Հիդրոռեսուրսները։ Հանքային հարստությունները։ Հարստությունը յերկաթահանքով, քարածխի պակասությունը։ Բոկսիտներ, կալիական աղեր։

Կլիման, բուսականությունը։ Բնական պայմանների բազմազանությունը։

Բնակչությունը։ Ազգային կազմը։ Բնակչության թույլ աճը։ Ներգաղթ դեպի Ֆրանսիա պատերազմից հետո։ Բնակչության բաշխումը քաղաքի և գյուղի միջև։ Բնակչության խտությունը։

Ժողովրդական տնտեսության ընդհանուր բնութագրությունը։ Նախապատերազմյան Ֆրանսիայի

արդյունաբերության թույլ զարգացումը։ Պատերազմի ազդեցությունը ֆրանսիական արդյունաբերության վրա։ Հետպատերազմյան ինդուստրացում։ Ներկայիս Ֆրանսիան վորպես զարգացած ինդուստրիալ-ագրարային յերկիր, ուժեղ ծանր արդյունաբերությամբ։ II իմպերիալիստական պատերազմի հետևանքները։

Արդյունաբերությունը։ Հին և նոր ճյուղերը։ Մանր արտադրության պահպանումը հին ճյուղերում։ Ելեկտրիֆիկացիա. հիդրոէներգիայի օգտագործումը։ Լեռնային արդյունաբերություն, մետաղագործություն և մեքենաշինություն։ Տեքստիլ արդյունաբերություն։ Պերճանքի առարկաների արտադրություն։ Ռազմական արդյունաբերություն։ Շնեյդերի կոնցեռնը։

Գյուղատնտեսություն։ Մանր, հետամնաց գյուղացիական տնտեսության գերակշռումը։ Գյուղացիության շերտավորումը։ Հյուսիսային Ֆրանսիայի խոշոր կապիտալիստական տնտեսությունները։ Գյուղատնտեսության բազմազանությունը։ Հացահատիկային տնտեսություն, անասնաբուծություն։ Գինեգործություն, բանջարաբուծություն։ Գյուղատնտեսության ճգնաժամը։

Տրանսպորտը։ Ծովային տրանսպորտը։ Գլխավոր նավահանգիստները։ Յերկաթուղիները։ Ջրային ճանապարհները։

Արտաքին առևտուր։ Ներմուծման և արտահանության կազմը։

Շրջանները։ Արդյունաբերական հյուսիսը։ Արդյունաբերության զարգացման պայմանները։ Փարիզ. նրա տնտեսական-քաղաքական և կուլտուրական նշանակությունը։ Նավահանգստային քաղաքները. Հավր, Ռուան։ Հյուսիսային լեռնագործարանային և տեքստիլ շրջանը։ Կենտրոնը—Լիլ։

Արդյունաբերական արևելքը. Ելզաս և Լոթարինգիա։ Լոթարինգիայի մետաղագործական շրջանը։ Կենտրոնը—Նանսի։ Ելզասը վորպես զարգացած գյուղատնտեսության և տեքստիլ արդյունաբերության շրջան։ Կենտրոնները. Ստրասբուրգ, Մյուլուզ։

Լիոնի արդյունաբերական շրջանը։ Ռոնի հովիտը վորպես պատմական ճանապարհ Միջերկրական ծովից—Հյուսիսային ծով։ Մետաքսի արդյունաբերություն, մետաղարդյունաբերություն, քիմիա, ռազմական արդյունաբերություն։ Կենտրոնները. Լիոն, Սենտ-Ետյեն, Լե-Կրեզո։

Հյուսիս-արևմտյան ագրարային շրջանը։ Բրետան և Նորմանդիա։ Անասնաբուծություն։ Ձկնորսություն։ Նավահանգիստները. Նանտ, Բրեստ և Շերբուր։

Հարավ-արևմտյան ագրարային շրջանը։ Հետամնաց հացահատիկային տնտեսություն։ Գինեգործություն։ Կենտրոնները. Բորդո, Տուլուզ։

Միջերկրածովյան ագրարային շրջանը։ Այգեգործություն, մրգաբուծություն։ Մարսելը վորպես Միջերկրական ծովի խոշորագույն առևտրական նավահանգիստ։ Տուլոնը՝ Ֆրանսիայի գլխավոր ռազմական նավահանգիստ։ Կուրորտային շրջան («Յերկնագույն ափ»)։ Կենտրոնը—Նիցցա։

Ֆրանսիայի կարևորագույն գաղութները։ Ալժիր, Թունիս, Մարոկկո, Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկա, Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկա, Մադագասկար, Ֆրանսիական Հնդկաչին, Սիրիան՝ Ֆրանսիական մանդատ։

Միջազգային դրությունը։ Հակասություններ մյուս իմպերիալիստական պետությունների հետ։ Ֆրանսիայի պարտությունը Գերմանիայի և Իտալիայի դեմ մղած պատերազմում և Անգլիայի դաշնակցությունից դուրս գալը։

Ֆրանսիան և ԽՍՀՄ-ն։

3. ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ (ՀՈԼԼԱՆԴԻԱ) (1 ժամ)

Նիդերլանդների և Նիդերլանդական գաղութների տարածությունը և բնակչությունը։ Պետական կառուցվածքը. Հաագ (մայրաքաղաքը)։

Բնական պայմանները։ Նիդերլանդների աշխարհագրական դիրքի օգտակարությունը առևտրի զարգացման համար (Հռենոսի, Մասսի և Շելդայի գետաբերանների տիրապետելը)։ Ծովի դերը Նիդերլանդների համար։ Ցածրադիր ռելյեֆը և հոլլանդական ժողովրդի դարավոր պայքարը ծովի դեմ։ Ամբարտակների և ջրանցքների սիստեմը։ Պոլդերները։ Զյույդերզեյի չորացումը։ Կլիման։

Բնակչությունը։ Բարձր խտությունը։ Գլխավոր քաղաքները. Ամստերդամ, Ռոտերդամ, Հաագ։

Տնտեսությունը։ Ծովային նավատորմի և ծովային առևտրի նշանակությունը։ Ռոտերդամը համաշխարհային նշանակություն ունեցող նավահանգիստ։

Գյուղատնտեսությունը։ Կաթնային անասնաբուծություն։ Ձկնորսություն։ Արդյունաբերության առանձնահատկությունները։

Անգլիական կապիտալի ազդեցությունը։ Նիդերլանդական գաղութների շահագործումն անգլո-հոլլանդական կապիտալի կողմից։ Նիդերլանդական Ինդոնեզիա։

II իմպերիալիստական պատերազմի հետևանքները Հոլլանդիայի նկատմամբ։

4. ԲԵԼԳԻԱ (1 ժամ)

Բելգիայի և նրա գաղութների տարածությունը և բնակչությունը։ Պետական կառուցվածքը։ Մայրաքաղաքը—Բրյուսել։

Բնական պայմանները։ Աշխարհագրական դիրքը միջազգային ճանապարհների հատման վրա։ Շելդա, կապ Հռենոսի հետ։ Ցածրադիր ռելյեֆի գերակշռումը. Ֆլանդրիական դաշտավայր։ Արդեններ։ Քարածխային ավազան։

Բնակչությունը։ Ազգային կազմը. ֆլամանդցիներ, վալոններ։ Բնակչության խտությունը։ Գլխավոր քաղաքները. Բրյուսել, Անտվերպեն, Գենտ, Լյեժ։

Տնտեսությունը։ Բելգիան՝ զարգացած ինդուստրիալ երկիր։ Մետաղագործություն՝ տեղական քարածխի և ներմուծվող մետաղահանքի վրա։ Մեքենաշինություն։ Տեքստիլ արդյունաբերություն։

Գյուղատնտեսությունը և նրա ինտենսիվ բնույթը։ Բելգիայի տրանզիտային նշանակությունը։ Անտվերպենը՝ նավահանգիստ համաշխարհային նշանակությամբ։ Բելգիայի կապը ֆրանսիական և անգլիական կապիտալի հետ։ Բելգիական Կոնգոյի շահագործումը։

II իմպերիալիստական պատերազմի հետևանքները Բելգիայի նկատմամբ։

5. ԳԵՐՄԱՆԻԱ (4 ժամ)

Տարածությունը և բնակչությունը։ Պետական կառուցվածքը։ Մայրաքաղաքը՝ Բեռլին։ Գերմանիայի գլխավոր բաղկացուցիչ մասերը. Պրուսիա, Բավարիա, Սաքսոնիա, Թյուրինգիա, Արևելյան Պրուսիա։

Գերմանիայից I համաշխարհային իմպերիալիստական պատերազմի հետևանքով անջատված տերիտորիաները. Էլզաս և Լոթարինգիա, Պոզնան, Արևմտյան Պրուսիա («Լեհական միջանցք»), Վերին Սիլեզիայի մի մասը, Դանցիգ, Մեմելի շրջանը, Շլեզվիգ։

Սաարի մարզի ժամանակավոր հանձնումը։ Գաղութների կորուստը։ II Իմպերիալիստական պատերազմի հետևանքով նոր հողամասերի ձեռքբերումը կենտրոնական Եվրոպայում։

Բնական պայմանները։ Աշխարհագրական դիրքը։ Ցամաքային և ծովային սահմանները։ Քիլի ջրանցքը։ Հելգոլանդ կղզին։ Մակերևույթը։ Գերմանիայի հիմնական աշխարհագրական բաժանումը. Հյուսիս-Գերմանական դաշտավայր, Միջին-Գերմանական լեռներ, Հռենոսյան Թերթաքարային լեռներ, Թյուրինգյան անտառ, Հարց, Սուդեթներ. Հարավային Գերմանիա—Բավարական բարձրավանդակ, Ալպեր, Շվարցվալդ։ Գետերը. Հռենոս (Մայն վտակով), Էլբա, Վեզեր, Օդեր, Դանուբ. Նրանց նավարկելիությունը։

Հանքային հարստությունները։ Հարստությունը քարածխով։ Ռուրի, Սաարի, Վերին Սիլեզիայի ավազանները։ Գորածուխ։ Մետաղահանքի աննշան պաշարները։ Կալիական աղեր։

Կլիման։ Ցամաքայնության ուժեղացումն արևմուտքից-արևելք։ Հողերը։ Բուսականությունը։

Բնակչությունը։ Ազգային կազմը։ Ազգային փոքրամասնությունները և նրանց վիճակը։ Բնակչության բաշխումը քաղաքի և գյուղի միջև։ Բնակչության խտությունը։ Բնակչության դասակարգային կազմը, Բանվոր դասակարգի դրությունը։

Տնտեսության բնութագրությունը։ Գերմանիան բարձր զարգացած ինդուստրիալ երկիր՝ զարգացած գյուղատնտեսությամբ։ Ռազմական հումքի և կենսամթերքների պակասությունը։ Նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը իշխանության գլուխ։ Վողջ տնտեսության յենթակումը ռազմական նպատակներին։

Արդյունաբերության գլխավոր ճյուղերը և նրանց տեղաբաշխումը. լեռնարդյունաբերություն, մետաղագործություն, մեքենաշինություն, էլեկտրոտեխնիկական, քիմիական։ Ռազմական արդյունաբերության աճը։ Մոնոպոլիաների տիրապետությունը։ Պողպատի տրեստը։ Կրուպպ։ Ներկի-արդյունաբերության կոմպանիան։ Նոր գրաված հողամասերի արդյունաբերական նշանակությունը։

Գյուղատնտեսությունը։ Կալվածատիրական հողատիրություն։ Արևելյան Գերմանիայի և մերձհռենոսյան շրջանների հողատիրության բնույթի տարբերությունը։ Գյուղատնտեսության ուղղությունը։ Անասնաբուծության գերակշռությունը

հողագործության նկատմամբ։ Գլխավոր կուլտուրաները։ Նոր գրաված հողամասերի գյուղատնտեսական նշանակությունը։

Շրջանները։ Արևելյան Գերմանիա։ Բեռլին, նրա տնտեսական ու քաղաքական նշանակությունը։ Արևելյան Գերմանիայի ագրարային և ագրարա-ինդուստրիալ շրջանները։ Կենտրոնները՝ Շտետին, Քյոնիխսբերգ, Բրեսլավլ։ Վերին Սիլեզիական լեռնարդյունաբերական շրջան։

Հյուսիս-արևմտյան նավահանգստային և անասնաբուծական շրջան։ Աշխարհագրական դիրքը. Գերմանիայի «դարպասները» դեպի Ատլանտյան օվկիանոս։ Ծովափերի ռազմական նշանակությունը։ Նավահանգստային քաղաքները. Համբուրգ, նրա նշանակությունը։ Բրեմեն։ Քիլ (ռազմական նավահանգիստ)։

Միջին գերմանական արդյունաբերական շրջան։ Սաքսոնիայի և Թյուրինգիայի տեքստիլ արդյունաբերությունը։ Կալիական աղերի և գորշ քարածխի արդյունահանությունը։ Քիմիական արդյունաբերությունը։ Ինտենսիվ հողագործություն (շաքարի ճակնդեղ) և անասնաբուծություն։ Գլխավոր քաղաքները. Խեմնից, Լայպցիգ, Դրեզդեն։

Հռենոս-Վեստֆալյան ինդուստրիալ շրջանը ծանր արդյունաբերության և խոշորագույն մոնոպոլիաների գլխավոր շրջան։ Արդյունաբերական պրոլետարիատի մեծ մասսաների կենտրոնացում։ Ռուրի ավազանը։ Քարածխային և մետաղագործական արդյունաբերություն, մեքենաշինություն, քիմիա։ Կենտրոնները. Էսսեն, Դորտմունդ, Դուիսբուրգ, Դյուսելդորֆ, Քյոլն։

Հարավ-արևմտյան ինդուստրիալ-ագրարային շրջան։ Մեքենաշինություն, քիմիա։ Կենտրոնները. Ֆրանկֆուրտ (Մայնի վրա), Շտուտգարդ, Մանհեյմ-Լյուդվիգսհաֆեն։ Գյուղատնտեսության առանձնահատկությունները։

Սաարի ավազանը Գերմանիայի 2-րդ մետաղագործական շրջան։

Բավարիա։ Հետամնաց գյուղատնտեսական շրջան՝ առանձին արդյունաբերական կենտրոններով։ Արոտային անասնաբուծություն լեռներում։ Գլխավոր քաղաքները. Մյունխեն և Նյուրնբերգ։

Գրաված նոր տերիտորիաների տնտեսության ընդհանուր բնութագրությունը։

Տրանսպորտը և արտաքին առևտուրը։ Երկաթուղիների, գետերի, ջրանցքների և ծովային տրանսպորտի նշանակությունը։ Տրանսպորտային շինարարությունը ռազմական նպատակների համար։ Ներմուծման և արտահանության կազմը։

Գերմանիայի միջազգային դրությունը։ Վերսալի դաշնագրի ռազմական պայմանների խախտումը։ Գերմանիայի սպառազինման ուժեղացումը։ Հակասություններ մյուս իմպերիալիստական պետությունների հետ։ Ավստրիայի, Չեխոսլովակիայի և Լեհաստանի կեսի գրավումը։ Պատերազմը (Իտալիայի հետ դաշնակցած) Անգլիայի դեմ ու դրա հետևանքները։

Գերմանիան և ԽՍՀՄ-ն։

6. ԻՏԱԼԻԱ (3 ժամ)

Իտալիայի և նրա գաղութների տարածությունն ու բնակչությունը։ Պետական կառուցվածքը։ Մայրաքաղաքը՝ Հռոմ։ Իտալիայի գաղութները. Եգեյան կղզիներ, Լիբիա, Էրիտրեյա, Իտալական Սոմալի։ Հաբեշստանի և Ալբանիայի գրավումը։

Բնական պայմանները։ Աշխարհագրական դիրքը։ Շրջապատող ծովերը. Ադրիատիկ, Տիրենյան։

Հյուսիսային Իտալիա. Պո գետի հովիտը, Լոմբարդիա. Պյեմոնտ, Ալպեր։ Լիգուրիայի ծովափը։ Ապենինյան թերակղզին և Սիցիլիա, Սարդինիա կղզիները։ Լեռնային մակերևույթի գերակշռումը. Ապենինները։ Հրաբխային գործունեությունը. Վեզուվ, Էտնա։ Օգտակար հանածոները։ Հիդրոէներգիայով հարստությունը (հյուսիսում)։

Կլիման և բուսականությունը։

Բնակչությունը։ Ազգային կազմը։ Արտագաղթ։

Տնտեսության ընդհանուր բնութագրությունը։ Ինդուստրիալ-ագրարային տիպի տնտեսություն։ Արդյունաբերության ուժեղացումն I իմպերիալիստական պատերազմից հետո։ Ցածր աշխատավարձ և բանվոր դասակարգի շահագործման ուժեղացում։ Հիդրոէներգիայի օգտագործումը։

Հումքի բազայի նեղվածությունը, ներքին շուկայի թուլությունը, պայքար արտաքին շուկաների համար։ Զարգացած կապիտալիզմի և ֆեոդալական հետամնացության գծերի համակեցություն։ Իտալիայի տնտեսական ծանր կացությունը, որպես իտալական ֆաշիզմի զավթողական ավանտյուրաների արդյունք։

Արդյունաբերությունը։ Էլեկտրիֆիկացիան։ Ծանր արդյունաբերության գծով առաջավոր կապիտալիստական երկր-

ների հետ մնալը։ Թեթև արդյունաբերության գերակշռումը։ Ռազմական արդյունաբերության ուժեղացումը։

Գյուղատնտեսությունը։ Խոշոր կալվածատիրական հողատիրության գերակշռումը։ Խոշոր կապիտալիստական տնտեսությունների նշանակալից դերը հյուսիսում. մանր հետամնաց տնտեսություն հարավում։ Գլխավոր կուլտուրաները և նրանց տեղադրությունը։ Գյուղացիության ծանր վիճակը։

Շրջանները։ Հյուսիսային Իտալիա (մայր ցամաքային մաս)։ Արդյունաբերության և գյուղատնտեսության համեմատաբար բարձր մակարդակ։ Երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների խիտ ցանց։ Արդյունաբերական և նավահանգստային կենտրոնները. Միլան, Թուրին, Ջենովա, Վենետիկ, Տրիեստ։

Թերակղզային և կղզային Իտալիա. արդյունաբերության թույլ զարգացում, գյուղատնտեսության հետամնացություն։ Գլխավոր կենտրոնները. Հռոմ, Նեապոլ, Ֆլորենցիա։

Միջազգային դրությունը։ Իտալական իմպերիալիզմի ագրեսիվությունը գաղութներ փնտրելու գծով։ Հակասություններ մյուս իմպերիալիստական պետությունների հետ։ Իտալական ֆաշիզմի ինտերվենցիան Իսպանիայում։ Պատերազմը (Գերմանիայի հետ դաշնակցած) Անգլիայի դեմ ու դրա հետևանքները։

